

ԷԶՄԻԱԾԻՆ



ՌՆԹ
ԺԶ ՏԱՐԻ

Օգոստոս - Սեպտեմբեր

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ը-Թ

1959



	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Քանաճայական կոչման մասին	3
ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈՐՑԱՆ— Վարդավառ	7
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ռ Ի Մ	11
Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան	16
Ցանց Կիլիկիո Կաթողիկոսությանը պատմությամբ լույսի տակ	18
ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ— Համառոտ բացատրու-	
թյուն ճին և նոր տոմարների տարբերության մասին	32
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՑԱՆ— Մատթեոս Մամուրյան	36
ՊՐՈՖ. ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՑ-ՔԵԿ— Սերովբե պատկանյալներ և հա-	
յագեա վրացի Գայասը Աստրախանում	43
Ա. ԵՐԵՄՅԱՆ— Գրիչ, ծաղկող և ոսկող Օգսենդ արքիպ	46
Ա ԲԱՐՔԻՅԱՆ— Մկրտիչ Էմինի օտար լեզվով համակերպ	49
Հայկական մշակութային գաղութը Պետերբուրգում	54
Լ. Գ. ԽԱԶՆԵՐՅԱՆ— Ձևի պարագա հեղուրդական եախադասություն-	
ներ	58
Հ. ԴԱՎԹՅԱՆ— Հայ տպագիր գրքի մատենագիտությունը ստեղծելու	
համար	65
Բելգիական Պր. Վանդամ Հակոբյանի համակը Բրյուսելի 1958 թվականի	
միջազգային ցուցանանդեսում Վատիկանի ներկայացուցիչ Պր. Պոլ.	
Հելմանսին	68
Նամակ խմբագրության	69
Գերաշնորհ Տ. Բաբգեն Եպիսկոպոս Վարժապետյանը դուրսը աստվա-	
ծարանության	70
Հանգիստ հոգեշնորհ Տ. Նահապետ Վարդապետ Մուրադյանի	71

ՀԱՅԿԱԿՈՍՆ ԽԱՌ. ԷՇՄԻՍՈՅԻՆ

ՀԷՋՄԻԱՇԻՆ, ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1959 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ


Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԻՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ



այր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի Ը և 1959 թվականի Գ համարներում բնության առնվեց

Հայաստանյայց եկեղեցում «մասնավոր և ծայրագույն վարդապետական գավազանի իշխանության տվչության կարգ»-ի հարցը, որը սերտորեն կապված է մեր եկեղեցու հին կարգերի պահպանության, եկեղեցու կենսականության և բարեգաղտության, ինչպես նաև հավաաացյալ հայ ժողովրդի կրոնաբարոյական դաստիարակության խնդիրների հետ:

Այժմ, հարցադրման կարգով, սույն խրաբագրականի մեջ առաջ է քաշվում Հայ եկեղեցու ավերակալման հետ կապ ունեցող մի այլ կարևոր հարց. դա ամուսնացյալ քանաններին վարդապետական աստիճան տալու առաջարկությունն է:

Քանանայության հեղինակության քառերացման և ուսումնականության հարցը շատ հին է և ունի իր պատմությունը: Ամեն անգամ, հնուց ի վեր, երբ խոսվել է Հայ եկեղեցու բարեկարգության մասին, միշտ արդարացիորեն առաջ է քաշվել առաջին հերթին լուսամիտ, հավատավոր, իր կոչման քառերության վրա գտնվող հոգևորականության՝ եկեղեցու պաշտոնյաների՝ պատրաստությամբ

հարցը: ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼ Է ԱՄԵՆՈՑ ԱՌԱՋ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ: Բարեկարգ եկեղեցի նշանակում է հոգևոր դաստիարակությամբ պատրաստված հավատացյալ ժողովուրդ և լուսամիտ, հավատավոր և բարոյական նկարագրով առաքինի հոգևորականություն, որը միայն կարող է եկեղեցին պահել բարեկարգ և բարեգաղտ վիճակում:

Այս մասին շատ է խոսվել և գրվել, արվել են բազմաթիվ առաջարկներ: Նույնիսկ լուսանոցի Բարգին կաթողիկոսը առաջարկում էր, որ «քանանայության առջև բաց քողվին եկեղեցվո քառերացույն աստիճանները» (Սիրոն, 1937 թ. հունիս, էջ 178):

Քանանայության հեղինակության քառերացման և ուսումնականության հարցը միշտ էլ զբաղեցրել է մեր լուսամիտ հայրապետներին և ազգային-եկեղեցական ժողովներին: Այդ մասին են վկայում բազմաթիվ ժողովական-կանոնական որոշումները և հայրապետական կոնդակներն ու «ՅԱՂԱԳՍ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ» գրված հառերը: Ս. Սահակ Պարթև հայրապետն իր ժամանակին, իր ԿԱՆՈՆՆԵՐԻ մեջ հրահանգում էր բարեպիսկոպոսներին՝ քանանա չհեռնադրել «մանա-



լանդ զուսումնառեացս, զի որ կամակար յուսման է՝ անկանի ի շարիս»։ ԺԲ կանոնում լուսավիտ հայրապետը վշտով է գրում ֆանաճաների ծուլության, մանավանդ ուսումնառեցության մասին, թե «ինքեանեմ չեն ուսեալ և ոչ գորդիս իւրեանց ի դպրոց ունին... Մաներում գի ՈՐՊԷՍ ԿՈՒՐՈՒԹԻՒՆ ԱԶԱՅ ԱՏԵԼԻ Է ՄԱՐՄԵՆՈՅ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ՏԳԻՏՈՒԹԻՒՆ ՈԳՈՅ ԱՏԵԼԻ Է ԱՍՏՈՒԾՈՅ»։

Ներսէս Շնորհալի հայրապետն իր «Էնդ-հանրական»-ում հատուկ զուլս է նվիրել «Ան դասս ֆանանայից... որք աստիճանաւ երկրորդ էք հպիսկոպոսաց և կարգեալ էք ֆանանայական գործառնութեամբ նուիրել զամենայն հագիս Աստուծոյ»։ Շնորհալին խրատում է ֆանաճաներին՝ «հանաչել զգործութիւն երկնային գործոյդ՝ յորում հրաւիրեալ կոչեցայք, որ և հրեշտակական գերաշխարհիկ զօրութեանց է գեր ի վերոյ այս աստիճան, որք անարատութեամբ և սրբութեամբ պաշտեն զնա»։

Վեն է և սուրբ ֆանանայական պաշտօնը իր հրեշտակերուն հանգամանքով, որպէս Աստուծո նվիրում և ժողովրդի ծառայութիւն, որպէս կոչում։ Վարդան վարդապետը գրում է, որ երկինքը «ի ձայն ֆանանայի» բացվում և փակվում է («հրատ յաղագս ֆանանայութեան»), իսկ Հովնանէս Սարկավագ վարդապետը իր «Յաղագս ֆանանայութեան և ֆանանայից» հոյակապ հառում («Սոփեր և յայկականք», Գ, էջ 9—77) գեղեցկորեն խոսում է ֆանանայական կոչման մասին. «ֆանանայութեան գործառնութիւն և պատիւ ոչ այլ ինչ է, ֆան գտնօրէնութիւն հոգւոց առ ի փրկութիւն ունի դիտաւորութիւն»։ ապա նա ֆանանային ներկայացնում է որպէս ժողովրդի «բժիշկ, վարդապետ, հայր, դայեակ, խորհրդատու, որի միջոցով «խորհուրդ աստուածապաշտութեան լնու և նկեղեցի Քրիստոսի գեղեցկապէս և փայլուն կարգօք մատակարարի և ամբողջ մնայ»։

Անցյալում ֆանանայի ընտրության և պատրաստության գործին մտեցել են մեծ պատասխանատվությամբ։ Այս իրողության պերճախոս վկաններն են մեր հին վանքերն ու ընծայարանները, որտեղ բարձր դիրքերի վրա դրված է եղել ուսուցումը արտաքին գիտությունների և ներքին՝ կրոնական առար-

կաների, և որտեղ միասին պատրաստվել են մեր ամուսնացյալ ու կուսակրոն ֆանանաները՝ ըստ ժամանակի ոգու և կրթական մակարդակի։ Թավական է նաև աշխի անպկացնել Ձեռնագրության մաշտոցը, համոզվելու համար այն բանում, թե ինչպիսի բարոյական, իմացական, գիտական պահանջներ պետք է լրացվեն ֆանանայության թեկնածուների կողմից՝ այդ բարձր և նվիրական կոչման արժանանալու համար, և առաջին հերթին «ուսումն ֆանանայութեան լիովին և զգիտութիւն աստուածային օրինաց զի որ ոչ ունի զգիտութիւն Սուրբ Գրոց, նաև ոչ զօրութիւն Աստուծոյ»։

Հայ հոգևորականության մեջ մեծ տոկոս է կազմում այժմ ամուսնացյալ ֆանանայութեանը։ Հոգևոր իշխանության տեսակետից ամուսնացյալ և կուսակրոն ֆանանայութեանը նույն է. մինչ կուսակրոնը ընտրել է իր ազատ կամքով վանական սրբակյաց կյանք, իսկ մյուսը՝ ֆանանան՝ ամուսնական կյանքը՝ նույն պարտականություններով, հոգևոր իմաստով։

Վերջին ժամանակներում, դժբախտաբար, խստությամբ չի պահպանվել ֆանանայության թեկնածուների ընտրության հին կարգը և ֆանանայութեանը դարձել է մի տեսակ «արհեստ» և ոչ ԿՈՑՈՒՄ, և այդ ասպարեզի համար բավական են համարվել «մասնակի պատրաստություն և քնական հարմարություններ», ինչպիսիք են, օրինակ, «գեղեցիկ ձայն, ներկայաւայի արտաքին» և առավելագոյնը՝ ուսուցչական մի ֆանի տարիների փորձ և հմտություն։ Բնական հարմարությունները կարևոր են, բայց ոչ էական։ Քանանայի հիմնական պաշտօնն է նաև հոգեվոր նովությունը և ուսուցումը։ «Քանանայ կրկին պարտուց արժանի եղիցին՝ որք աշխատիցեն բանի և վարդապետութեամբ»։ Քանանայի պարտքն է «հովուել զծողովուրդ և ուսուցանել միշտ զգործս բարիս և տալ զանձն օրինակ բարեաց ամենեցուն, յամենայն ժամ զհոգեւոր խրատ, միշտ ուսուցանելով յեկեղեցւոյ, ի հրապարակս և առտեհին, զամենայն ոք ըստ իրաքանչիւր հասակի» (Շնորհալի)։

Անցյալում հայ ժողովրդի կրօնա-բարոյական դաստիարակության գործում վնասակար

դեր էր կատարում հայ ֆանաճան, իսկ վերջին ժամանակներս նա դարձել է հաճախ միայն պարզ ձիսակատար, հոգևոր պայտռեյա, իր նվիրական պաշտոնի կատարման մեջ հարմարություններ ներկայացնող մեկը, րեկ շեն էլ պակասել արժանավոր, գիտուն ֆանաճաներ, ինչպիսիք էին սրեկիանայ ֆանաճաներից Գյուտ ավագ ֆանա Աղանյանը, Գրիգոր ավագ ֆանաճան Խանդակունին, Էմմանվել ֆանաճան Նազարյանը և ուրիշներ, իսկ արևմտահայ ֆանաճաներից՝ Հովհաննես ավագ ֆանաճան Մկրտչյանը, Թորոս ավագ ֆանաճան Զաղայեցին, Ներսես ավագ ֆանաճան Թավուզեյանը, Գրեգին ավագ ֆանաճան Պաղարյանը և ուրիշներ:

Հատկապես Սփյուտում այսօր մեր ազգային-եկեղեցական կյանքը կարիք ունի դաստիարակ. գիտուն, յուսամիտ ու հավատալի ֆանաճաների:

Այս մտածումների լույսի տակ և ֆանաճայության դիրքն ու հեղինակությունը քառնաջնելու ազնիվ մտահոգությամբ, որպես քառայական ֆառալերություն և իրան, հեւրավոր չէ՝ արդյոք ֆանաճաներին ևս տալ վարդապետական աստիճան: Ինչպես հայտնի է՝ վարդապետական աստիճանը մեր եկեղեցւում «ուսումնական աստիճան է և ոչ եկեղեցական ձեռնադրություն» և տրվում էր «ուսման րնթացքը լրացնողներուն» (Օրմանյան): Ուսումնական այդ աստիճանը ունեցող հոգևորականը՝ վարդապետը՝ իրավունք էր ստանում ուսուցանելու, ֆառոգելու ժողովրդին և որպես նշան այդ ուսումնականության, կարող էր ձեռնում հովվական գավազան քնել: Ինչպես նշվեց, տարբերություն չկա ամուսնացյալ և կուսակրոն ֆանաճայության միջև, որով վարդապետական աստիճանի տվչությունը նապես կրոնական նկարագիր չունի:

Ինչպես Հայ եկեղեցւում, այնպես էլ Քրիստոնեական Բնդանուր եկեղեցւում «վարդապետական սիստեմը» հաստատվել է «ապահովելու համար եկեղեցիի մեջ քրիստոնեական ուսուցման քառն մակարդակը և ֆառոգչի բեմական ձեռնասությունը»: Որով թե՛ պատմականորեն և թե՛ կանոնական տեսակետից. «վարդապետական աստիճանը

իմբեիւ կապ չունի ստացողի ամուսնական վիճակի հետ»:

Հայ եկեղեցւոյ կազմակերպման, գորացման և կենսունակության և հավատացյալ ժողովրդի հոգևոր-քառայական դաստիարակության տեսակյունից դիտված, ԱՆԽԱՅ ՊԱՀՆԼՈՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՋ ՀԱՍՏԱՏՎԱԽ ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ, կարելի է վարդապետական աստիճան տալ ամուսնացյալ այն ֆանաճաներին, որոնք լրացնում են այդ աստիճանի համապատասխան հոգևոր, մտավոր և քառայական պայմանները:

Այսօր, ինչպես անցյալում, ունենք Ս. Էմմանի ձեռնարանից, Արմաշի դպրեւանքից, Նրուսեղեմի ժառանգավորաց վարժարանից, Անթիլիասի դպրեւանքից շրջանավարտ հմուտ, գարգացած, հավատալի հին և նոր ֆանաճաներ, որոնք իրենց կյանքի փորձառությամբ, գիտությամբ և ձառայությամբ կկարողանան արժանի լինել վարդապետական աստիճանի: Հառցն այն է, որ կարող ֆանաճաներին տրվելիք վարդապետական աստիճանը չդառնա ՍՈՎՈՐԱԿԱՆ ՁԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Մեր համեստ կարծիքով՝ Մայր Աթոռում մշակված հատուկ մի կանոնադրությամբ պետք է հշտել այն պայմանները, որոնցով կարելի կլինի վարդապետական աստիճան շնորհել նաև ամուսնացյալ արժանավոր և գիտուն ֆանաճաներին:

Այսօր էլ հայ ֆանաճան իր գիտական պատրաստությամբ, հոգևոր-մշակութային գարգացմամբ ունի կատարելիք մեծ դեր և պատականություն հայ ժողովրդի ձեռքում: Ներկա հոգևորականությունը մի կոշում և մի նպատակ ունի, — գրվել է Հայոց եկեղեցւոյ քառեկարգության մասին Գեւորգւյն Հոգևոր հոռնոքի գեկուցման մեջ, 1937 թվականին, — այն է՝ հանդես գալ իրեն Ավետարանի ֆառոգիչ, դաստիարակել հայ ժողովրդին քրիստոնեական ոգով և եկեղեցւոյ վերաձեռնության ուղին հառթել: Այս նպատակին ձառայելու համար, նոր հոգևորականությունը գինված պիտի լինի նառագւյն գիտությամբ, ունենա փիլիսոփայական և քրիստոնեական լայն աշխարհայացք: Նա հիմնականորեն ձառնոր պիտի լինի ներկա րնա-

կան գիտությունների, բանասիրական և օո-
ցիալական գիտությունների հզորացու-
թյուններին:

Ճանաչարձե ֆանանայության առաջ...

Պատճառն պետք է լինի ԿՈՑՄԱՆ ՄԱՐԴ,
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՏՆՐ:
«Շրթունք ֆանանայի զգուշացին գիտու-
թեան և օրէնս խնդրեսցին ի բերանայ նորա,
զի հրեշտակ Տեառն ամենակալի է (Մա-
ղաք. Բ 7):

«Եթե կոչումը առաջնական ռզի կուտա
նոգեւորականին և կգտնւնդն զայն արիւ-

թյամբ, եթե նկարագիրը հարատւության
շիզր կգորացնեն նոգեւորականին ներքո, ՈՒ-
ՍՈՒՄՆ ալ անադիկ կընեն անոր տրամաբա-
նության ամրոցը, ծանոթութուններու և
հմտության նոյն մթերով մը դիտելու ու
դատելու սուր կարողության մը նմայեով»
(Բարգեն կաթողիկոս):

Բարեկարգ Նկեղեցի՝ հավատալու, յուսա-
միտ, կարգապահ և ժողովրդանվեր նոգեւորա-
կանությամբ: Ա՛յս պետք է լինի մեր կարգա-
խոսը, ինչպէս կուսակրուն նույնպէս և ամուս-
նացյալ նոգեւորականների համար:





Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

(Առաջնորդ Իրաւի հայոց բնմի)

Վ Ս Ր Դ Ե Վ Ս Ռ



ուրք Գրիգոր Լուսավորչի ատենեն ի վեր, Հայոց մօտ Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տունը ծանոթ է նաև

Վարդավառ անունով:

Բայց Վարդավառը, իբր հեթանոսական տուն, կկատարվեր Հայոց քրիստոնեութունն ընդունելեն ալ առաջ:

Հայոց հին կրօնին մեջ Վարդավառը հավանաբար տունն էր Աստղիկ դիցուհիին, որ աստվածն էր սիրո, գեղեցկության, գուցե նաև հեշտանքի և ցանկության, ինչպես էր հույներու մօտ Ափրոդիտեն, որուն Մելիդիենի սքանչելի արձանը չարգուփշուր ըրին վանդալները: Բայց գեղարվեստի սիրահարները համախմբեցին անոր երեսուն կտորները և վերանորոգեցին զայն մեծ ճարտարությամբ:

Հայոց Աստղիկի մեծագույն մեհյանը կգտնվեր Աշտիշատի (Տարոն) մեջ և կկոչվեր «Սեւեյակ Վանագնի»: Տարոնի մեջ էր նաև Աստղաբերդը կամ Աստղաբերդը:

Աշտիշատի մեջ, Աստղիկի բնակութեան շուրջը, ամեն տարի աշխարհախումբ կհավաքվին հեթանոս հայերը՝ տոնելու համար Վարդավառը:

Լուսավորչի ժամանակն սկսյալ, վաղեմի այդ սովորության համաձայն, մեր քրիստոնեայ նախնիքը ուխտավորաբար կհամախմբվին Մշո Ս. Կարապետի շուրջը, կատարելու համար Տեր Հիսուսի Այլակերպության

Գուրյան եղիշե մեծ վարդապետի հիշատակին, իր ծննդյան հարյուրամյակին առթիվ:

տունը Վարդավառյան հանդիսություններով միասին:



Արևելյան ժողովուրդներու մօտ յուրաքանչյուր մեծ տուն իրեն հատուկ արարողություններ և ավանդություններ ունի, եկեղեցիներն ներս, հոգևոր իմաստով, իսկ դուրսը՝ աշխարհիկ, ընկերային, զբոսական նպատակով:

Առանձնահատուկ այդ ծիսակատարություններն ու սովորությունները պատկերավոր կերպով երևան կրեն կատարվող տոնին իմաստն ու ծագումը և կոգնորեն ժողովուրդը: Անոնք նույն ատեն իրարու հետ կշաղկապեն եկեղեցիներն ներս և դուրս հավատացյալներու վարած հոգևոր, առտնին և ընկերային կյանքը:

Երբ գիտակցությամբ և ներդաշնակությամբ տեղի կունենան այս բաները, այն ատեն ոչ միայն տունն ու անոր իմաստը կպայծառանան, այլ կարծեք թե տոնախմբողները կպայծառանալին:

Ս. Գրիգոր Լուսավորիչ, որ հայկական հին Վարդավառի տունը փոխանակեց Քրիստոսի Պայծառակերպությամբ, չարգելեց Վարդավառին կապված ինչ-ինչ սովորություններու պահպանությունը, բայց ինքն ու ժամանակը նոր և ավելի գեղեցիկ իմաստ տվին անոնց:

Վարդավառին հայերն առհասարակ սովոր էին վարդեր նվիրել, աղավախներ թռցնել, իրարու վրա ջուր սրսկել, ժողովրդական պարեր և կայթեր կատարել, ողիմպիական խաղեր ընել, ուխտի երթալ, մաստաղ կտրել և այլն: Աստուծո թուրքը մեր քնաշխարհին մեջ կկատարվեն հոծ բազմաթիվամբ, ոչ միայն պատմական սրբավայրերու շուրջը, այլ նաև այգիներու, պարտեզներու, ծովափերու, գետեզերքի և ուրիշ բացօդյա հարմար վայրերու մեջ:



Հետաքրքրական են և նշանակալից ինչ-ինչ գավառներու մասնավոր սովորությունները, զոր օրինակ Ագուլիսի զոկերու խնդումը, որ ժողովրդական խաղ մըն է Վարդավառին հատուկ և կկատարվեր մինչև նախորդ դարուն վերջերը:

Ըստ Ս. Սարգսյանի նկարագրության, ագուլիսցիք Վարդավառն առաջ խոշոր սակառի կամ կարասի մը մեջ հացահատիկ (ցորեն, գարի) կկանալցնեն, Վարդավառին անոր մեջ կտնկեն մանուկի մը հասակով ամուր փայտ մը մերթ թնափոր, զոր կզարդարեն վարունգով, խնձորով և վարդով:

Ժաշեն ետքը կանալով, պտուղով և ծաղիկով զարդարուն այդ սակառը կգետնելի բաց տեղ մը, հրապարակի վրա, տարիքոտ կնոջ մը հսկողությամբ: Երկսեռ բազմությունը, խայտարեղ զազված, նվագաժողովամբ և պարերով կըրջապատեն զայն: Ձվարճությունները կշարունակվին մինչև ուշ երեկու: Պահապան կինը սակառն ղուրպ կքաշե զարդարուն զավազանը և զայն բարձր բռնած կերգե ու կպարե ծափերով: Ձվարճությանց վախճանին, վիճակ փախցնելու պես, տղամարդիկ մեկնեն կհարձակին և խաղացվոր տիկնոջ ձեռքն կհափշտակեն ու կցրվեն խնդումը, որ միննույն ժամանակ անունն է Վարդավառի ժողովրդական այս հանդիսության և անոր կնդրոնը կազմող զարդարուն դավազանին:

Այս առթիվ խնդումի պահապանին երգած ժողովրդական սա զույգ տաղերը ցույց կուտան հսկող տիկնոջ վախը և խնդումը հափշտակողներու վրա թափած անեծքը, Ագուլիսի բարբառով:

Խնդում օնիմ վառդավ լի,
Ջրդիրդիչն խնձուր լի.
Վախիմ թա քուրքս տաճի,
Խնդումըս յաղի՞ն տաճի:

Խնդումը փախցնելին ետքը կերգե.

Խնդումըս յաղի՞ն տաճալ ա...
Ճուր քուրքի՞, այ ճաճալ.
Խզվիկնուտուր էլի ճո,

Ու՛վ ամ խընդումըս տաճալ ա,
Ասաված քո ջանիդ ճուր տո,
Ու՛վ ամ խնդումըս տաճալ ա,
Տեսնիմ օր ա սաղ սյուն տո,
Նո կըրնչ կուտուր էլի,
Արկու աղճավ խվարի,
Գիճաճաճու շունճ պտոկ տրի,
Ըրասիսի շունճ չիճ արի՛:



Վարդավառի և ուրիշ տոնական նման սովորությունները՝ ավանդական, պատմական, հոգևոր և քնկերային արժեք ունին, ժողովուրդի կյանքին մաս կկազմեն, Երբ անոնք նոր զուգորդություններով նոր իմաստ կըղենուն, ավելի ևս կգեղեցկացնեն տոնն ու հանդիսությունները:

Հայերեն Վարդավառ և Պայծառակերպություն անունները միմիայն բանաստեղծական պատկերներ չեն, այլ անոնցմե յուրաքանչյուրը կներկայացնե ներշնչող դրվագ մը մեր ազգային և կրոնական կյանքին:

Վարդավառը տոնն էր Աստղիկի: Ան կկատարվեր հայկական նավասարդին կամ նոր տարիին սկիզբը, օգոստոսին, երբ վառ է արևը, երբ իսպառ կօրսված է Հայաստանի հաճվոր ձմեռն հետքը, երբ դարձած են խստաշունչ քամիները, փարատած մտալլ ամպերը, տաքցած են դաշտերը, պտղավորված ցանքերն ու ծառերը և իրենց լրությանմբ բացված են ծաղիկները:

Գեղեցիկ է Հայաստանի վարդը, Ըստ դիցաբանության, գեղեցկության աստուծո՝ Աստղիկին տուրքն է վարդը՝ Ուստի հին

1 Ա. Շ. Մեղակեյան, «Հայկական զարդարվածություններ», 1955, էջ 129: Հմմտ. Ս. Սարգսյանի «Ագուլիսի բարբառը», Բ. Մոսկվա, 1883, էջ 28—27, որտեղ ցուցված Ա. Շ. Մեղակեյանի (անդ):

2 Եղիշե Երեմյանի «Երեմյան, իր «Հին հայոց կրոնը» գործին մեջ, կծանոթագրե, թե ըստ Արշարունյաց Գրիգորիս եպիսկոպոսի «Մեկնութիւն ընթերցումնոց»-ին, «Աստղիկի նվիրված վառդը և մուրտը իբրև թե իր մարմնին փոփոխության պատճառով, երբ բոկ ու մեղք կքաշի դիցունքին, ոտքերն կաթկթած արյունն կբուսնեն: Վարդը ճերմակ էր նախապես, և հետո կարմիր գույն ստացավ, Ըստ առասպելների, Ափրդիտե (Աստղիկ) իր վիրավորված սիրականին՝ Աղունիսի մոտ փութալու ատեն վարդերու վրա կոխեց և իր խոցված ոտքերու արյունն վարդերը կարմրեցան (անդ, էջ 48—49):

Հույն դիցաբանության համաձայն, երբ Հերաս գողացավ Ափրդիտեի զարդեղներու արկղը, աղոր մեջն առավ դիցունքին զգնատները, և երբ հազավ զհոնք, երկրի վրա բուսան գեղեցիկ ծաղիկներ՝ վարդ, շուշան, մանուշակա (Բարդեն Ա կտրողիկոս, «Դասակ Ավետարանեն», Անթիոս, էջ 129):

հայերը ուրախ-զվարթ վարդի պսակներով և վարդի փուռներով կվառնին, այսինքն կզարդարեն Տարոնի Աստղկան արձանը: Ասկե կծագի տոնին Վարդավառ, ըստ ռմանց Վարդևուհի անունը, որ կնշանակե վարդազարդ, վարդեղ:

Վարդավառ անունին պես հին են և պատկերազեղ վարդածղի և վարդավատն ստորոգելիները հայոց Աստղիկ դիցունվուն:



Վարդավառին կապված է նաև Ջրհեղեղին հիշատակը, որմե, ըստ Մ. Գրոց, ազատեցան միայն նույն նահապետն իր ընտանիքով և յուրաքանչյուր տեսակե մեյմեկ զույգ անասուն և թռչուն: Ասոնցմե տապանին մեյ գտնվողներն նույի ձեռքով արձակված աղավնիին վիճակվեցավ ավետել ցամաքին երևումը՝ ձիթենիի ճյուղով մը:

Ջրհեղեղին հուշըովն է, որ Վարդավառին հայերը եկեղեցիներ ենք վարդի ջուր կտրուկեն, իսկ զուրսը անուշ ջուր կթափեն իրարու վրա և աղավնիներ կթոցենն:



Անոնք, որ մեղքին կործանարար գործության վրա գաղափար ունին, անոնք, որ Աստուծո փրկարար շնորհքին կհավատան, անոնք դժգոհություն պիտի չունենան հասկանալու, թե ինչու Վարդավառի նախակատիքին շարաթ օրը թիշատակ է Տապանակին հետ և տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ (Տօնացոյց):

Մեղքի պատճառով աշխարհս ողորդող ջրհեղեղեն Աստուծո տնօրենությանը ազա-

3 Վարդավառի մասին տրված ինչ-ինչ բացատրություններ, ինչպես հետագա երկու օրինակները, սոսկ բարոյական, հոգևորական հնարամտություններ են:

«Անուն տօնիս կոյի Վարդեվառ, զի Քրիստոս յաշխարհի որպէս ի կոկոնի ծածկեալ էր զԱստուածութիւն որ բացեալ էր ի յարութեան, և յետոյ փոխեալ զհոգ աստուածութեան ընդ ամենայն նրկիր» (Արմէն վրդ. Երեմեցի, քարոզ 88, «Դարձեալ ի վերայ Վարդավառին»): Բաղդադի հայոց եկեղեցիի ձեռագիրը:

«Կասն այսօրիկ ասացաւ Վարդիվառ, այսինքն աւրդ տաւ: զի այսօր էլեայր զինուորացն Քրիստոսի ընդ ամենայն աշխարհս ամառ տոնին և կողոպտեցին հօգորին սատանայիս (Նույն, անգ):

4 Եղիշ արքեպիսկոպոս Դուրյան աղավնիներ թոցենու մասին Աստղիկին նվիրած զուրիս մեղ կծանոթագրե. «Իսկ թոյններն աղավնին, իր սիրատարի թռչուն կպատկանեն հույն Աֆրոդիտին, ինչպես և հայ Աստղիկին, և այս պարագան կդիտվի արդեն Վարդավառի տոնին առթիվ աղավնիներ թոցենու հայկական հին սովորության մէջ» (Եղիշ պատմաբան Դուրյան, «Հայոց հին կրօնը», Երուսաղեմ, 1933, էջ 48—49):

տեցան մարդկային սերունդն ու կենդանական նմուշները՝ նոյան տապանին միջոցով:

Արդ, նոյան տապանը նախատիպն է Հին Ուխտի տապանակին, որ Իսրայելի համառ խորհրդանշան դարձավ փրկութեան, սրբության և Արարհամեն հետո Մովսէսի մեջոցով Աստուծո հետ վերստին կնքված ուխտին: Իսկ Տապանակ Ուխտին, ինչպես նաև նոյան տապանը խորհրդանշաններն են նոր Ուխտի Տապանակին, զոր կկազմեն Հիսուս Քրիստոսի Եկեղեցին և նաշափայտը:

Ջրհեղեղը ցամքեցավ, նույն իրենները դուրս եկան Արարատի լանջքին, բայց շուտով ծայր տվին մեղքի հեղեղները, որոնք, եթե չզգուշանանք, կրնան կլանել ամբողջ աշխարհը և ընկուզելի ամենքս, զորս Քրիստոս ուզեց ազատել իր արյամբ:

Պայծառակերպութեան տոնով Եկեղեցին ցույց կուտա ոյ միայն հավիտենական փրկութեան հույսը, այլ նաև վերանորոգութեան, նոր ստեղծագործության և Քրիստոսի նման պայծառակերպելու հնարավորությունը, պայմանով որ, ինչպես որ Աստված կխոնարհի և կմոտենա մեզ, այնպես ալ մենք վերանանք զկալի հոգեկան և բարոյական բարձունքները Սինայի, Քարորի, Հերմոնի, և մոտենանք Աստուծո՝ ի զին ամեն զոհողության:

Ուրեմն, Քրիստոսի Պայծառակերպության յուշով բանանք մի արջերը, տեսնելու համար, թե իսկապես ինչ է Վարդավառը, և ինչ են իմաստներն այն մասնակի երևույթներուն, որոնց ականատես կլինինք Վարդավառին:

Այսպես ընելով, պիտի տեսնենք, թե մարդոց հոգեկան վերելքին ազդակներ կհանդիսանան Վարդավառի առթիվ հայտնաբերված առանձնահատուկ երևույթները, ջուրը՝ զոր իրարու վրա կթափենք իբր նշանակ մկրտության և սրբության ավազանին, աղավնին՝ զոր կթոցենք իբր խորհրդանշան ոչ թե տուփական սիրտ և ներշնչման, քանի որ Մ. Հոգին անով կկերպարանվի Քրիստոսի մկրտութենեն լսողին, մարդական մերցանքներն ու զորեղ մկանները՝ իբր նշանակ ժուժկալության և հոգեոր կրթանքի, կտրված մատաղները՝ իբր նշանակ զոհողության և երախտագիտական արտահայտություն, վարդի փուռներն ու պսակները՝ իբր նշանակ մեղքի վրա տարված հաղթանակին վարձատրության, պարերն ու խաղերը՝ հոգեոր խրախճանքի և ցնծության:

Ահա բուն իմաստը Քրիստոսի Պայծառակերպության տոնին, զուգորդված Վարդավառի հատուկ հայ ժողովրդական ծիսակատարությանց և սովորությունց:



Իբրև հետաքրքրական դիտելիք ավելցընենք, թե ուղղափառ ոռոսերն ալ Պայծառակերպության առթիւ, որ ամենեն ժողովրդական տոներն են կնէ, խնձաւ և մեզ կրերեն եկեղեցին, օրհնել կուտան և կրածն են ներկաներուն, Ս. Հաղորդության քաշխումն են ետքը, իբր նշանակ Աստուծո ստեղծագործության բարի և քաղցր լինելուն, Ռուսերն առիկա կընեն նույն ատեն ցուցնելու համար գեղեցկութիւնն ու փառքը այն աշխարհին, որուն տեսիլքն ունեցաւ Տերն մեր Հիսուս Քրիստոս Թարորի վրա, և որ դարձաւ պիտի հայտնվի աշխարհի կատարածին:

Վարդավառի շրջանին, Իսրայելացիք ալ կանխաւ յոթն օր Տաղավարահարաց տունը կկատարեն ի հիշատակ քառասուն տարի անապատները թափառելուն և ռազկօք և ոստիւք ծառոց միմեանց բնծայարերք լինելին և ուրախանային յիշելով զքարերարութիւնս և զերախտիսն Աստուծոյն⁵:

⁵ Սիմեոն վրդ. Երևանցի, քարոզ 68, «Դարձեալ ի վերայ Վարդավառի» (Բաղդադի հայոց եկեղեցիի ձեռագիր, էջ 327):

Վարդավառին, հուլները մեծ հանդիսությամբ, ծաղիկներու և ոստերու նվիրարծրումով կկատարեն տունը Ափրոդիտի, զոր կհամարեն ծնած ծովու սպիտակ փոփուրներն: Անոնց մոտ ալ ասիկա փոխանակվեցաւ առնախմբությամբն Ալլակերպության Քրիստոսի, զոր ի կուսէն կուսածին մարմնով ծնաւ կարմիր և սպիտակ⁶:



Ներկայիս հին Վարդավառին զուգորդած է Ալլակերպության տունը, զոր նվիրապացիք կկատարեն օգոստոս 6-ին, իսկ հայերս՝ Ս. Հարութենեն հարյուր օր ետքը, ի յիշատակ Քրիստոսի Պայծառակերպության⁷ և ի խորհուրդ Որդվո Մարգո մյուս անգամ զալրատյան⁸:

⁶ Նույնը, անդ, էջ 326:

⁷ Մատթ. Ժն, Մրկ. Թ., Ղուկաս Թ:

⁸ Մատթ. ԻԴ 27—31, Մրկ. ԺԳ 24—27, Ղկս. ԻԱ 25—27:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՀՈՒԼԻՍԻ 2-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն Եպիսկոպոս արձակուրդով մեկնեց Ռոստով, իր հարազատների մոտ: Սրբազանը հովվական այցելություն տվեց միաժամանակ Ռոստով քաղաքի հայ հավատացյալներին և շրջակա հայ գյուղերին: Սրբազանը Մայր Աթոռ վերադարձավ ամսի 20-ին:



ՀՈՒԼԻՍԻ 3-ին, ՈՒՐԱԼԹ, Հոգևոր Ժեմարանի Գլխարանի հինգ ուսանողները մեկնեցին Սուխումի քաղաքը, ավարտական քննություններից հետո 15 օրով հանգստանալու: Նրանք վերադարձան հոկտեմբերի 18-ին և լծվեցին իրենց ավարտաճանաչության պատրաստման աշխատանքներին:



ՀՈՒԼԻՍԻ 5-ին, ԿԻՐԱԿԻ, ՎԱՐԳԱՎԱՌ, «Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Օրվա մեծ տոնի առթիվ պատարագեց և քարոզեց Վեհափառ Հայրապետը: Սուրբ պատարագին ներկա էին հավատացյալների մի մեծ բազմություն և սփյուռքահայ ուխտավորների մի խումբ: Վեհափառ Հայրապետը իր քարոզի մեջ նախ նկարագրեց պայծառակերպության ավետարանական դեպքը, ապա ծանրացավ մարդու և ազգերի պայծառակերպության զազափարի վրա, շեշտելով այն միտքը, որ ժողովուրդներն ալ ունին իրենց պայծառակերպությունը, երբ անոնք, թոթափելով հին կապանքները, կրթարձրանան զեպի ոգեկան նոր կատարներ: Մենք մեր պատմության ընթացքին ընդամենը այսպիսի պայծառակերպություններ ենք ունեցել: Ազդեցման վերջինն է առաջին համաշխարհային պատերազմին հետո մեր վերածնած Մայր Հայրենիքը, որ 40 տարվան համեմատաբար շատ կարճ միջոցին պայծառակերպված է անպատմելի լա-

փով: Անոր շողափելի մեկ ապացույցն է մեր երջանիկ առօրյանը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը օրհնեց խոյուններում հավաքված հավատացյալներին և ապա առաջնորդվեց Վեհարան, ուր օրհնեց Ազգն ու Եկեղեցին, ժողովուրդն ու Հայրենիքը: Վերջում Վեհափառ Հայրապետը ընդունեց սփյուռքահայ ուխտավորներին և հայրական յերմ զրույց ունեցավ նրանց հետ Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքի շուրջ:



ՀՈՒԼԻՍԻ 6-ին, ԵՐԿՐՈՇԱՐԹԻ, «Թիշատակ մեռելոց»: Պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաթևյանը: Պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ ավասն համարէն ննջեցելոց Ազգիս Հայոց:



ՀՈՒԼԻՍԻ 12-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Ախալցխայի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Գանիկյանը և քարոզեց «Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դա լուսրութ» բնաբանով: Արժանապատիվ Տեմ հայրը խոսեց Քրիստոսի պայծառակերպության ազդեցությամբ հայ ժողովուրդի էլ հոգեպես և իմացապես պայծառակերպված լինելու մասին՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի միջոցով:

Հավարտ սուրբ պատարագի հոգեհանգիստ կատարվեց Ֆրանսահայ ուխտավորների ննջեցյալների հոգիների փրկության համար:



ՀՈՒԼԻՍԻ 15-ին, ԶՈՐԵՔՇԱՐԹԻ, Մայր Աթոռ ժամանեցին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս Եպիսկոպոս Տեմ-Ստեփանյանը և Ազրբեջանի հայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր

վարդապետ Մարտիկյանը թեմական գործերով և մեկնեցին ամսի 22-ին:



ՀՈՒԼԻՍԻ 19-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Աղբյուրյանի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը և քարոզեց Հոգեշնորհ Տ. Մաշտոց արքեպիսկոպոսը, բնաբան ունենալով «Արդ, զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»:

Հոգեշնորհ քարոզիչը բացատրեց ընտանեկան կյանքի մաքրության անհրաժեշտությունը և Ս. Պատկի խորհրդի անլուծանելիությունը՝ իբրև խարիսխ և գրավական ընտանեկան կյանքի բնականոն աճման, սիրո ու համերաշխության: «Ընտանեկան կյանքի մաքրությունն ու ամրությունը, — ասաց Հոգեշնորհ քարոզիչը, — Ազգի մաքրությունն ու կենսունակությունն է, նրա տեականության հուսալի հենարանը: Ահա թե ինչու ամեն հայ ընտանիք պետք է լինի զարդարված Հոգեկան և քարոյական առաքինություններով, որովհետև անբարոյությունը արմատն է բոլոր տեսակի շարիքների և թուլի, կազմալուծ ընտանիքներից բաղկացած ժողովուրդն էլ կլինի անկայուն և վաղ կամ ուշ մահվան դատապարտված»:



ՀՈՒԼԻՍԻ 26-ին, ԿԻՐԱԿԻ, պատարագեց Հոգեշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արրահամյանը, բնաբան ունենալով «Որ ուտէ ի հացէ՝ յայսմանէ կեցցէ յափտեան»: Սրբազան քարոզիչը խոսեց Հիսուսի՝ բազմությունները կերակրելու հրաշքի մասին, շեշտելով, որ Հիսուս նրանց կերակրելիս միշտ զգացնում էր մարմնավոր հացի ժամանակավոր սնունդ լինելու հանգամանքը՝ մարմնի պաշտպանության համար, և է՛լ ավելի շեշտում էր այն միտքը, որ մարդիկ պետք է ապահովեն իրենց հոգևոր և անկորնչելի հացով:



ՕԳՈՍՏՈՍԻ 2-ին, ԿԻՐԱԿԻ, պատարագեց Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց Տ. Հարություն արքեպիսկոպոսը, բնաբան ունենալով «Զարմանալի է ինձ սէր քո քան գերզս երաժշտականաց զձայն ողբոց քոց հնչմանս, ով երանելիդ տէր Վահան, Գողթնեաց իշխնցող շարականի բառերը: Հոգեշնորհ հայ սուրբը նկարագրեց Վահան Գողթնացու կյանքն ու հուզիչ նահատակությունը, մասնավորապես ծանրանալով հայ ժողովրդի

հավատի վրա, որպես խարիսխը մեր ժողովրդի փրկության և բոլոր ղեկավարություններ հաղթահարելու վճռականություն:



ՕԳՈՍՏՈՍԻ 9-ին, ԿԻՐԱԿԻ, արքեպիսկոպոս Ս. Աստուածածին պահոց: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:



ՕԳՈՍՏՈՍԻ 15-ին, ՇԱՌԱՔ, Ս. Աստվածածին Վերափոխման տոնի առթիվ, լենինական մեկնեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ պատարագելու և քարոզելու: Սրբազանը Մայր Աթոռ վերադարձավ երկուշաբթի օրը:



ՕԳՈՍՏՈՍԻ 16-ին, ԿԻՐԱԿԻ, «Վերափոխումն Ս. Աստուածածին» Ավանդական հանդիսությամբ և ի ներկայության ծովածավալ հայ հավատացյալ բազմության, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և խաղողորհնեք կատարեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Սուրբ պատարագին ներկա էր ամերիկահայ և ֆրանսահայ ուխտավորների մի մեծ խումբ:



ՕԳՈՍՏՈՍԻ 17-ին, ԵՐԿՈՒՇԱՐՔԻ, այիշատակ մեռելոց: Պատարագեց Հոգեշնորհ Տ. Մաշտոց արքեպիսկոպոսը: Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգիստ Ժաման համար էն ճեղքելոց:



ՕԳՈՍՏՈՍԻ 23-ին, ԿԻՐԱԿԻ, Իջման Ս. Սևդանի վրա պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:



ՕԳՈՍՏՈՍԻ 25-ին ԵՐԵՎԱՆԻ, Կիսլավոդսկում մոտ մեկ ամիս հանգստանալուց հետո Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետի, Երևանի օգանակալայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և Երևանի քահանայական դասը:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր Հոգեշնորհ Տ. Նդիշե վարդապետ Սարգսյանը:

ՕԳՈՍՏՈՍԻ 30-ին, ԿԻՐԱԿԻ, «սոսն գիտի գոտույ Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ **Տ. Հովհաննես քահանա Մարությանը** և քարոզեց՝ «Վարդապետ, ոչինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ։ Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն... Եւ եղև խաղաղութիւն» ընարանով (**Մարկ. Գ 39**) ընարանով։



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ին, ԵՐԵՎԱՆԻ, Գերագույն Հոգևոր Խորհուրդի նիստում արձանագրվեցին Հայրիկ և Մեսրոպ վարդապետների 3 հուլիս 1959 թվականի որոշումները, որոնցով նրանք ընդմիջում հրաժարվում են իրենց

Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՈՒԼԻՍԻ 2-ին, ՀԻՆԳՇԱԲԹԻ, սիրիահայ և մանրիկահայ մի խումբ տուրիստներ այցելեցին Մայր Աթոռ և նրա մոտակա սրբավայրերն ու տեսարժան վայրերը։ Եկեղեցահանգիստական թանգարանում նրանց առաջնորդեց և անհրաժեշտ բացատրություններ տվեց թանգարանի վարիչ հոգեշնորհ **Տ. Հուսիկ արևդա Սանթրոյանը**։ Ուխտավորները մեծ հետաքրքրությամբ լսեցին տրված բացատրությունները Մայր Տաճարում վերջերս կատարված և զեռնա շարունակվող վերանորոգումների և պեղումների մասին։ Ապա ուխտավորները արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելության և օրհնության։ Նրանք Մայր Աթոռից բաժանվեցին լավագույն տպավորություններով։



ՀՈՒԼԻՍԻ 9-ին, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Տաճար այցելեց անգլիահայ լուսանկարչուհի Իդա Քարը (Քարամյան)։ Նա եղավ եկեղեցահանգիստական թանգարանում, ուր զիտեց հայկական զարդարվեստի և մանրանկարչության զոդտրիկ նմուշները, հետո կատարեց տարբեր դիրքերից Մայր Տաճարի մի քանի լուսանկարումներ, որոնք արվեստագիտուհին նպատակ ունի օգտագործել իր հետագա ցուցահանդեսներում։



ՀՈՒԼԻՍԻ 10-ին, ՈՒՐԱԿԹ, էջմիածին այցելեց Կորեական ժողովրդա-դեմոկրատական սոցիալիստական Դեմոկրատական երիտասարդական միության պատվիրակությունը։ Պատվիրակության ղեկավարն էր Կորեայի դեմոկրատական երիտասարդության կենտրոնի նախագահության տեղակալ Կիմ Բոն Ուն։ Հյուրերը եղան Մայր Տաճարում և նրա մոտակա մյուս սրբավայրերում։ Ամենու-

պաշտօններից և հոգևոր ասպարեզից, Գերագույն Հոգևոր Խորհուրդը միաձայնությամբ որոշեց խնդրել Վեհափառ Կաթողիկոսին՝ նրանց հայտարարել կարգապահական և դասնաշխարհականների շարքում՝ Հենրիկ Ավետիսեան և Փայլակ Անթարյան իրենց նախկին անուններով։

Վեհափառ Հայրապետը 1959 թվականի սեպտեմբեր 8 թվականի վճռով հաստատեց Գերագույն Հոգևոր Խորհրդի սեպտեմբերի 1-ի որոշումը և Հայրիկ ու Մեսրոպ վարդապետներին հայտարարեց կարգապահական համաձայն Հայաստանյայց Ս. Եկեղեցու կանոնների։

Նրանք խորապես տպավորվեցին հայկական ճարտարապետության հնօրյա հուշարձաններից, որոնց բազմաթիվ լուսանկարումները կատարեցին այլևայլ գիրքերից, Հյուրերը խոր հիացմունքով դիտեցին նաև եկեղեցահանգիստական թանգարանում ցուցադրված իրերը, հատկապես ձեռագրերը, ոսկեբրուցյան և ասեղնագործության վերաբերյալ առարկաները, որոնք ունեն ոչ միայն պատկանելի հնություն, այլև հայկական նուրբ արվեստի բոլոր առանձնահատկությունները։



ՀՈՒԼԻՍԻ 11-ին, ՇԱՐԱԿԹ, Մայր Աթոռ այցելեց Ֆրանսահայ տուրիստների մի խումբ։ Նրանք եղան նաև Մայր Տաճարում, ապա եկեղեցահանգիստական թանգարանում և մյուս սրբավայրերում։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուխտավորներին և զրուցել նրանց հետ։ Ուխտավոր տուրիստները Մայր Աթոռից մեկնեցին հոգեպես մխիթարված։



ՀՈՒԼԻՍԻ 14-ին, ԵՐԵՎԱՆԻ, Մայր Աթոռ այցելեց լեյտենանտական երկաթուղայինների պատվիրակությունը։



ՕԳՈՍՏՈՍԻ 3-ին, ԵՐԱՆԻՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեցին Հայաստանում որպես հյուր գտնվող ԱՄՆ-ի էներգետիկների պատվիրակության անդամները։ Պատվիրակության կազմումն էին «Դիտրոյտ էդիսոն կոմպանի» ընկերության ղեկավար և վիցե-պրեզիդենտ Վոլտեր Սիսկերը, «Մատուգերն Կալիֆոռնիա էդիսոն կոմպանի» ընկերու-

թյան դիրեկտոր և վիցե-պրեզիդենտ Ջեյմս Դավենպորտը, «Էդիսոն էլեկտրիկ ինստիտուտ»-ի դիրեկտոր և վիցե-պրեզիդենտ Էդվին Բենարդը, «Օհիոհոմա էլեկտրիկ կոմպանի» ընկերության պրեզիդենտ Դոնալդ Կենեդին, «Կոնսոլիդեյտեդ Էդիսոն կոմպանի» օֆ Նյու-Յորք» ընկերության պրեզիդենտ Զարլզ Իրլը:

Հարգարժան հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցաճակատական թանգարանում և ժանոթացան Մայր Տաճարում նորերս կատարված և դեռևս շարունակվող վերանորոգումներին, կատարված պեղումների արդյունքներին:



ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Ֆրանսիայից Մայր Հայրենիք այցելող մի խումբ հայ տուրիստներ, Տուրիստները Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո առաջնորդվեցին Վեհարան, ուր, ի քաջակալության Վեհափառ Հայրապետի, նրանց ընդունեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը: Ընդունելության ներկա էր նաև Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսը:



ՕԳՈՍՏՈՍԻ 8-ԻՆ, ԵՐԱԿ, Մայր Աթոռ այցելեց ֆրանսահայ տուրիստների երկրորդ խումբը: Տուրիստները եղան Մայր Տաճարում, եկեղեցաճակատական թանգարանում, Հոգևոր Ճեմարանում և զրույց ունեցան Մայր Աթոռի երիտասարդ միաբանների հետ: Հյուրերը եղան նաև Ս. Հռիփսիմի վանքում: Ուխտավորները Էջմիածնից տարան խոր և անշնչելի տպավորություններ:



ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին երիտասարդության և ուսանողության Վիեննայի Համալսարանի 2-րդ ֆեստիվալի մի խումբ մասնակիցներ: Խմբի կազմումն էին Բուլվիայի, Պերուի, Սալվադորի, Վենեսուելայի և Լիբանանի երիտասարդ ներկայացուցիչներ: Նրանք ներկա գտնվեցին Մայր Տաճարում երկրյան ժամերգության, ժանոթացան Մայր Տաճարի ճարտարապետական կառուցվածքին և քաղցրին արժեքավոր տեղե-

կություններ ընդհանրապես հայ ճարտարապետության մասին:

Նույն օրը Մայր Աթոռ այցելեց նաև Ֆրանսիայի ինժեներ-հիդրավիկների պատվիրակությունը, որը պատասխան այցով գտնվում էր Սովետական Միությունում: Պատվիրակության ղեկավարն էր «Էլեկտրիսիտե դը Ֆրանս» գիտահետազոտական դեպարտամենտի գլխավոր տեսուչ, Ֆրանսիայի հաղորդակցության ճանապարհների ազգային ինստիտուտի հիդրավիկայի պրոֆեսոր Պոլ Շապուտին:



ՕԳՈՍՏՈՍԻ 13-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց պարակվայի գրող Ռոմերո Էլվիոն իր տիկնոջ՝ բրազիլիական գրող Դիադո Պե Մորանս Մարիա Անտոնիետայի հետ: Հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցաճակատական թանգարանում, ժանոթացան միաբանական կյանքին, նոր կատարվող շինարարությունը:



ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ, ՈՒՐԱԿ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Զեխոսլովակա-Սովետական քաղաքականության միության տեղական քաջամուսնիների և ակտիվիստների պատվիրակությունը, օգոստոսի 17-ին, երկուշաբթի՝ Լիտվական ՍՍՌ մայրաքաղաք Վառնասի կուլտուր-լուսավորության հիմնարկների մի խումբ աշխատողներ:




ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ, ՀԽՍՀԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեցին Միացյալ Արաբական Ռեսպուբլիկայի Միրիական շրջանի Հալեպ քաղաքի «Ահալ-Իստիկալ» մարզական միության ֆուտբոլիստները, կազմված հայ և արաբ սպորտսմեններից, նրանց ընկերակցում էին Երևանի «Սպարտակ» թիմի ֆուտբոլիստները: Հյուրերին Մայր Տաճարի դռան մոտ ընդունեցին Մայր Աթոռի երիտասարդ միաբանները և նրանց ուղեկցեցին Մայր Տաճար և եկեղեցա-ճակատական թանգարան, Հյուրերը եղան Հոգևոր Ճեմարանում, ժանոթացան գրադարանի կազմակերպության և գործունեության, վերջում ի պատիվ հյուրերի կազմակերպվեց ընդունելություն Վեհարանի դահլիճում: Հյուրերը, իրենց խորունկ գոհունակությունն ու ընդու-

հակալուծությունը հայտնելով, անշնչելի տպավորություններով վերադարձան Երևան,



ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ, ՈՒՐԱՒԱԹ, ՄԱՅՐ ԱԹՈՒ
այցելեցին ֆրանսահայ մի խումբ տուրիստ-
ներ, որոնք իրենց բարեպաշտական և հա-
րենասիրական այցելությունները կատարե-
ցին պատմական հուշարձաններին, ծանոթա-
ցան միարանության և Հոգևոր Ընմարանի
առօրյային և Մայր Աթոռից բաժանվեցին
անմոռանալի հուշերով:

ՕԳՈՍՏՈՍԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՄԱՅՐ ԱԹՈՒ
այցելեց Ավստրիայի բանվորական սպոր-
տային միության պատվիրակությունը, որի
կազմումն էին Բրուկ, Զիգնդորֆ և Օրտման
քաղաքների 16 ուժեղագույն ֆուտբոլիստ-
ներ: Պատվիրակության ղեկավարն էր Ավս-
տրիայի ֆուտբոլի ֆեդերացիայի անդամ
Կարլ Շտարկը: Հյուրերը զիտեցին Մայր
Տաճարը, եկեղեցահնազդեական թանգարա-
նը և Մայր Աթոռի ու էջմիածին քաղաքի այլ
տեսարժան վայրերը:





ԳԵՐԱՇՆՈՐԸ Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ԾՆԵԳԱՆ ՈՒԹՍՈՒՆԱԾՑԱԿԻ ԱՌԹԻՎ)



Օգոստոսի 24-ին լրացավ Մայր Աթոռի երիցագույն միաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի ծննդյան 80 և քահանայության 56-ամյակը:

Այս ուրախ առիթով, սեպտեմբերի 6-ին, կիրակի, Վեհարանում տրվեց ճաշկերույթ, որտեղ ժերոնազարդ բայց միշտ կայտառ հոգեւորական շերմ ու սրտագին խոսքերով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետը,

Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամները:

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը մեր եկեղեցականության երիցագույն և սիրված դեմքերից մեկն է: Նա իր հոգևորականի լայն պատրաստվածությամբ, իր հավատարիմ ծառայությամբ և մանավանդ իր անաշու ու զվարթ քնավորությամբ իր համեստ անձի շուրջը ստեղծել է համակրանք և սեր՝ իր ուսուցչական և քահանայական գործունեության ժամանակ և միաբանական կյանքի տարիներին Մայր Աթոռում:

Սահակ սրբազանը ծնվել է Թբիլիսիում 1879 թվականի օգոստոսի 11-ին (24-ին), Մկրտության անունը եղել է Լևոն, Նախնական կրթությունը ստացել է Թբիլիսիի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցում, այնուհետև մտնելով Ներսիսյան հոգևոր դպրոցը, ավարտել է այն 1899 թվականին:

Դպրոցն ավարտելուց հետո վարել է ուսուցչության և վերակացության պաշտոն: Ծառայել է Արմավիրի և Աստրախանի հայոց եկեղեցիներում:

Ստավրոպոլ քաղաքի ծխականների կողմից ընտրվելով քահանայության թեկնածու, 1903 թվականի փետրվարի 9-ին Արիստակես արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվում է քահանա և նշանակվում կրոնի ուսուցիչ Ստավրոպոլի գիմնազիաներում և հայկական դպրոցներում:

Այնուհետև երիտասարդ Տ. Սահակ քահանայի առաջ բացվում է եկեղեցական-հասարակական գործունեության լայն ասպարեզ:

Տ. Սահակ քահանա Տեր-Հովհաննիսյանը ունեցել է նաև զրական-եկեղեցական գործունեություն: 1909—1919 թվականներին նա հրատարակել է ուսուցիչների ընդարձակ օրացույց՝ ուսախոս հայերի համար: Նա առանձին հատորներով հրատարակել է նաև կրոնի դասագրքի Ա մասը հայ-ուսուցիչներին:

րառարանով, Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի կենսագրականը, Գևորգ Ե կաթողիկոսի կենսագրականը, 1912 թվականին, հայկական տառերի գլուխի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի կապակցությամբ՝ «Հայ ժողովրդի մեծ տոներ», Հայ Եկեղեցու Պատարագամատույցի ռուսերեն թարգմանությունը մանրամասն բացատրությամբ: Թղթակցել է նաև հայ և ռուս պարբերական մամուլին, Իր գործունեության և աշխատանքների համար Տ. Սահակը արժանացել է Խրիմյան Հայրիկի, Գևորգ Ե և Խորեն կաթողիկոսների զնահատության և եկեղեցական պարգևատրումներին:

Իր երիցուհու կոյստից հետո, 1945 թվականին, Ս. Էջմիածնի միարանության անդամ է հանդիսանում: 1947 թվականին արժանանում է ծայրագույն վարդապետության աստիճանին և նշանակվում է Մայր Տաճարի ավագ լուսարար:

Մկսած 1946 թվականից նա է կազմում Ս. Էջմիածնի օրացույցը:


Երջանակահշատակ Տ. Գևորգ Զ Կաթողիկոսը 1951 թվականի հուլիսի 8-ին արժանացնում է նրան Եպիսկոպոսական րարծր աստիճանի:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, զնահատելով Մայր Աթոռի միաբան, լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի երկարամյա և օգտաշատ ծառայությունները եկեղեցական-վանական և ուսուցչական հասարակական ասպարեզներում, Իր դահակալության առաջին տարեդարձի երջանիկ առիթով, 1956 թվականի հոկտեմբերի 7-ին սրբադանին շնորհեց արքության պատիվ:

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, լնայած իր առաջացյալ տարիքին, հոգով արի է և աշխատանքում ժիր:

Սիրելի հոբելյարին սրտազին մաղթում ենք խաղաղ ծերություն՝ նույն նվիրվածությամբ ծառայելու Մայր Աթոռին և Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցուն:





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

(ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)



այ Եկեղեցին թեև աշխարհագրականորեն տարածվել է ամբողջ աշխարհով մեկ, այնուամենայնիվ այն մեկ է իր գավառաճաճով և իր նվիրապետությամբ:

Քրիստոնեական Ընդհանուր Եկեղեցու կաթնոր ստորոգելիներից մեկն է միությունը: Հայոց Եկեղեցին ևս մեկ է իր հավատով, ձեռով, սուրբ խորհուրդներով, իր կանոնական օրենքներով և ավանդութիւններով, իր նվիրապետական և վարչական դրութեամբ:

Հայ Եկեղեցու նվիրապետութեան կամ հոգևոր իշխանութեան բարձրագույն Գլուխն է Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետը, օրինո՞ք և իրավամբ: Նա վերահսկողն ու պահապանն է Հայ Եկեղեցու գավառութեան, ձեռի, օրենքների, կարգերի, ավանդութեան և միութեան և ունի լիակատար իշխանութիւն Հայ Եկեղեցու վարչութեան վրա, կանոնական սահմանների մեջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռը Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի Առաքելական Աթոռն է և նա օրինավոր հաջորդն է նաև Ս. Գրիգոր Լուսավորչի:

Հայ Եկեղեցու միութիւնը մարմնավորվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձի մեջ: Ով չի ճանաչում այս միակ Գլխի կանոնական իրավասութիւնը, նա դուրս է մնում Հայ Եկեղեցու միությունից:

Հայ Եկեղեցու նվիրապետութեան դարավոր ու պատմական գերագահ Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը հիմնվել է Դ դարի սկզբում Վաղարշապա-

տում, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հիման վրա, երբ Միածինը իջավ ի Հայաստան Աշխարհ և Արարատյան դաշտի սրտի վրա հիմք դրեց հայ հավատի մեծ Կաթողիկեի, թե՛ սիւնն հրեղէն՝ Կաթողիկէ Եկեղեցի է, որ ժողովէ գամենայն ժողովուրդս ի մի միաբանութիւն սուրբ հաւատոյ ի ներքոյ թեոքն յորոց... և տեղին այն լիցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն նաւառացելոց և Աթոռ Քաճառապետութեան (Ագաթանգեղոս):

Ամենայն Հայոց Հայրապետութեան առաջին աթոռանիստ մայրավանքը եղել է Վաղարշապատը: Հայրապետական Աթոռը առհասարակ հաստատված է եղել քաղաքական իշխանութեան կենտրոնում, Վլասն հանապազորդ բանակցութեանց ընդ տիրոջ աշխարհին մերօրս:

«Ժամանակի ընթացքին,— գրել է Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանը,— տեղափոխվել է Աթոռը, այլ չէ տեղափոխվել աստվածահրաշ տեղին իջման և չէ փոխվել Աթոռույն իշխանութեան և իրավասութեանց, արև տոնութեան և պաշտաման կերպն ու կարգը: «Հայոց Կաթողիկոսութիւնը երբեք տեղադրական անուն լուսնեցավ Աթոռին կամ Հայրապետութեան տեղին անված, այլ միշտ կոչվեցավ Կաթողիկոսութիւնը Ամենայն Հայոց: Այդ կոչման գորութեամբ նա իրավունք ունեցավ յուր Հայրապետանոցը հաստատել այնտեղ՝ ուր կգտնվել ազգին քաղաքական կեդրոնը, որն ալ ըլլար ժամանակին իշխող կամ տիրապետող կառավարութեան գլխաւ:

վոր քաղաքը» (Օրմանյան, «Հայոց Եկեղեցի», Բեյրութ, 1957 թ., էջ 42)։

Հայրապետական Աթոռը վաղարշապատում մնաց Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև Հովհան Մանգակունու ժամանակը՝ 485 թվականը, մոտ երկու դար, երբ այն փոխադրվեց Դվին, ուր նստում էին ամարդպանը Հայոց և ապա արաբ ռադիկալների, 927 թվականին, Հովհան պատմաբանի օրով, Աթոռը փոխադրվեց Աղթամար, ուր իշխում էին Արծրունիները, ապա Բագրատունիների մոտ՝ Արցիկա, Անանիա Մոկացու օրով 947 թ., Անի՝ Սարգիս Սեանցու օրով 992 թ., իսկ Ռուսիայանների ժամանակ՝ Հոռմկլա, Գրիգոր Պահլավունու օրով 1166 թ., Սիս՝ Գրիգոր է Անավարդեցու օրով 1293 թ., Գրիգոր Թ Մուսաբեկյանի օրով, 1441 թվականին, Կիլիկիայում Ռուբինյանց անկումից կես դար հետո, Աղզի հավանությանը և ազգային-եկեղեցական ժողովի միաձայն որոշմամբ, Հայրապետական Աթոռը վերադարձավ իր նախկին պատմական վայրը՝ թի բնակ տեղին իւր Ս. էջմիածին, որտեղ մնալուն կերպով նստել են այդ ժամանակից ի վեր Ամենայն Հայոց բոլոր Հայրապետները, մոտավորապես 520 տարի։

Հայ եկեղեցին ունի տեղական ինքնավարության սկզբունքի վրա հիմնված նվիրապետական երեք Աթոռ ևս, զուգու ռեննալով Մայր Աթոռ Ս. էջմիածինը։ Հայ եկեղեցու նվիրապետության մեջ կանոնական դիրք ունեցած այդ Աթոռներն են՝ պատմականորեն կազմված Ս. Երուսաղեմի Պատրիարքական Աթոռը, Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը Սսում և Թուրքիո հայոց Պատրիարքական Աթոռը Կոստանդնուպոլսում, որոնք թի հոգևորա ենթակա լինելով Ս. էջմիածնի գերագահ Աթոռին, պահում են իրենց ներքին ինքնավարությունը թի վարչականս, Ս. էջմիածնի Աթոռի գերագահության տակ, ամեկ եկեղեցի, մեկ Դուխս սկզբունքի լույսի տակ։

Այս ինքնավար աթոռների գոյությունը երեք յի խանդարում Հայ եկեղեցու միությունը, որովհետև զրանք միմյանցից բոլորովին անկախ միավորներ չեն, այլ մի մեծ ամբողջի անբաժանելի մասերը, որոնք կանոնական որոշ օրենքներով կապված են Հայ եկեղեցու կենտրոնական Աթոռ Ս. էջմիածնին։

Յուրաքանչյուր այդ ինքնավար Աթոռի հեղինակությունը տարածվում է իրեն համար սահմանված շրջանակի վրա միայն։ Այդ երեք Աթոռներից մեկի իր շրջանակից դուրս գալը և մյուս Աթոռների իրավասությանը ենթակա շրջանների վրա իր հեղինակությունը տարածել փորձելը միշտ դիտվել է որպես բացահայտ հակականոնական արարք և դատապարտվել է։

Այս հոգվածաշարում մենք համառոտակի կխոսենք Կիլիկիո Կաթողիկոսության ծագման և պատմության մասին, սկզբից մինչև մեր օրերը։

Քաղաքական խառն ժամանակների բերումով Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը սկսել է 1445 թվականին, երբ 1441 թվականին Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը վերահաստատվեց իր պատմական դարավոր կենտրոն Ս. էջմիածնում։

Ժե դարի քառասնական թվականներին Հայրապետական Աթոռի վերադարձը Սսից նորից էջմիածին՝ մեր ազգային-եկեղեցական պատմության շրջադարձային զեպերից մեկն է հանդիսանում՝ որպես հիշատակության արժանի պատմական տարեթիվ։

Կիլիկիայում 1375 թվականին, հայկական իշխանության՝ Ռուբինյանց անկումով վտանգվում էր նաև Հայաստանյայց եկեղեցին։ Ինչպես պատմական տվյալներն են ապացուցում, հատկապես Սսի Հայրապետանոցում թեւադրում էին կաթոլիկ հոգևորականները։

Ի մասնավորի Լուսինյան վերջին լատինամիտ թագավորները, հակառակ հայ ժողովրդի և հոգևորականության բուռն ընդդիմության, ավասն քաղաքական անկախությունը մեծ զիջումներ էին անում Հռոմեական եկեղեցուն, որպեսզի յաջողեցնի նոցա պահել զիշխանություն իւրեանց ի Կիլիկիա։

Հայ հոգից ու հայկական միջավայրից հեռու, օտար եկեղեցական ու քաղաքական աղդեցությունների շրջանակի մեջ ընկած, Հայաստանյայց եկեղեցին կարող էր կորցնել իր դարավոր նվիրապետությունը, ավանդությունները, իր ազգային նկարագիրը, իր ինքնուրույնությունը ու անկախությունը։

Կիլիկիայում հայկական քաղաքական իշխանության անկումով, այլևս ոչ մի արդարացուցիչ պատճառ չէր մնում, որ թի շուքն ու փառքը կորուսած, ափ մը բախտախնդիր եկեղեցականներու ձեռք մնացած, ազգային մարմնի հսկողութենեն հեռացած, ուղղություն և ավանդություն մոռցած, եկեղեցվա շահն ու սրբությունը մեկ կողմ թողած, լոկ անձնական ու արկածալից գործերու հետամուտ Հայրապետական Աթոռը մնարա Կիլիկիայում (Մ. արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում» Բ, էջ 2103)։ Հայրապետական Աթոռը Սսում ապրում էր իր պատմության ամենածանր և տաճապալից շրջաններից մեկը, երբ քախտախնդիր մարդիկ փողի, արյան և այլ անազնիվ միջոցներով

1 Հոգվածաշարում Օրմանյանի «Ազգապատում»-ից կատարված մեջբերումների տեղը կնշենք կրճատ՝ Օրմ. Ազգ. Ա կամ Բ, Գ և էջը։

հափշտակում էին Կաթողիկոսական Աթոռը, ըստ Քովմա Մեծոփեցու վկայության:

Այս պայմանների մեջ «Մխ» Կիլիկիոս երբմանի շքեղ մայրաքաղաքը, այլևս որևէ հրապույր չունեի կեդրոն մը ըլլալու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսության (Բարգեն Ա Աթոռակից Կաթողիկոս, «Պատմություն Կաթողիկոսաց Կիլիկիոս», Անթիլիաս, 1939 թ., 1127)², և թեոլոգիկ Կիլիկիոս վերջին կաթողիկոսունք անտանելի կոտորածին Սիսը, քաղաքապետ իսլամ բռնութեանց ներքև ճգմը ված էր և չէր կրնար կեդրոն ըլլալ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան» (ԲԱԿ Պատմ. 1188):

Համազգային տաղանայի այդ ծանր օրերին, Հայ եկեղեցու և Հայրապետական Աթոռի այդ անփառունակ և տխուր կացութեան հետ չէին կարող հաշտվել արևելյան վարդապետները, աղթամարցիք (վասպուրականցիք), սյունեցիք, ինչպես նաև ժամանակի բոլոր հայրենասեր և նախանձախնդիր հոգևորականներն ու ինքը՝ հայ ժողովուրդը, որ Համազգային ցանկութեամբ և ժողովական երոշմամբ վճռում էին փրկել Աթոռը, այն փոխադրելու իր նախնական և նվիրական սրբավայրը՝ Ս. Էջմիածին, ուր այդ օրերին համեմատաբար խաղաղ պայմաններ էին ստեղծվել:

Հայրապետական Աթոռի Սահգ Էջմիածին վերադարձի շարժման գլուխն էին կանգնել Տաթևյան աշակերտությունը, Կիլիկիան ողջամիտ և եկեղեցանվեր հոգևորականներն ու ժողովուրդը, Աթոռի փոխադրության եռանդուն գործիչներից էին Գրիգոր Տաթևացու աշակերտներ Քովմա վարդապետ Մեծոփեցին՝ Մեծոփա վանքի առաջնորդը, Հովհաննես վարդապետ Կոլոտիկ կամ Հերմոնեցի՝ առաջնորդ Տաթևի վանքի:

Եկիլիկիոս Աթոռին անկումը ընդհանուր Ազգին մտադրությունը կհրապիրեր, մասնավոր Տաթևյան աշակերտության աչքին, իբր եկեղեցվո վերանորոգության կենսական կետ մը: Պետք էր Հայրապետական Աթոռը ազատել Կիլիկիոս վարակյալ մթնոլորտեն, սակայն ցորչափ օրինավոր հաջորդության գիծը այնտեղ մնացած էր, գյուրդին չէր այդ կետը հանկարծ լուծել և անպատրաստ կերպով որոշման մը հանգրվու: Աղթամարի Աթոռն ալ քաղական ճեղքումներ ստացած էր, և Մեծ Հայոց Կաթողիկոսության ձև առած էր, մինչ Կիլիկիոս Աթոռը Փոքր Հայոց Կաթողիկոսության անունով կհիշվեր անդստին Մխիթարի օրեն (ՄՆՍ. Ին 1258) և այդ կոչումները Աղ-

թամարին կարևորությունը կբարձրացնեին: Զմոռնանք հիշել, որ Նույն միջոցին Աղթամար նստող Զաքարիա և Դավիթ Կաթողիկոսները ավելի կարժեհն, քան Սիս նստող Կարապետն ու Հակոբը: Այդ ամեն պարագաները հիմնական փոփոխություն մը, և կարևոր բարենորոգություն մը պետքը կզգացնեին եկեղեցվո շահերով տոգորված հոգիներուն (Օրմ. Ազգ. Բ 2022):

Էջմիածնի Աթոռի վերանորոգումը, գրել է Բարգեն Կաթողիկոս, «անշուշտ բոլոր հայ ժողովուրդը խանդավառեց Արևելյան Հայաստանի մեջ» (ԲԱԿ Պատմ. 1193):

Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին վերադարձի հարցը պաշտոնականացվել և ազգային-եկեղեցական ժողովի որոշումով կանոնականացվել է հատուկ հրավիրված ազգային-եկեղեցական մեծ սրբազան ժողովում:

1440 տարին անցավ ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման և հաջող անցկացման նախապատրաստական աշխատանքներով: 1441 թվականի սկզբների շրջաբերականներ ուղղվեցին ամեն կողմ: Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին վերադարձի շարժման ղեկավարների ցանկությունն էր որպես շարժման հաջորդության հիմ և օրինավորության փաստ գործին հակառակության չհանդիպելը և ընդհանուր համակամությունը և հավանությունը ընդունվելը, ինչպես որ եղավ: Ամեն կողմ ուղարկվեցին շրջաբերական գրություններ, «փութանակի և առանց յապաղանաց գալ եպիսկոպոսոք և վարդապետոք ի խորհուրդն բարի և օգտակար»:

1441 թվականի Էջմիածնի ժողովը լիիրավ ազգային-եկեղեցական մեծ ժողով էր թե՛ իր ներկայացուցչական կազմով և թե՛ պատգամավորների մեծ թվով:

1441 թվականի մայիսին Երևանում հավաքվում են, ըստ Մեծոփեցու վկայության, ավելի քան 300 պատգամավորներ, հոգևորական և աշխարհական. այլ նաև սուրբ հարք և պատուական երիցունք, ազատք և որդիք ազատաց, ձեռնադրեք և տանուտեքք, որոնք Երևանի Ցաղուր խանի զորքերի պաշտպանությամբ, «փողով, թմրով և զուտնով» ուղևորվում են Ս. Էջմիածին:

Էջմիածնի ժողովին հակառակ հանվանե մասնակցում էին Արևելյան Հայաստանի շուրջ մեծ Աթոռների՝ Բջնու Հովհաննես Կոյուղ, Հաղբատի Գրիգոր, Տաթևի Շմավոն, Արտուզի Գրիգոր եպիսկոպոսները, ոտոնք հին կանոնով «կաթողիկոս»-ներ ճանաչվել են, ինչպես նաև սյունեցիներից Հովհաննես Հերմոնեցին, Զաքարիա Հավուցթառեցին, Ստեփան Սյունեցի արքեպիսկոպոսը և շատ ուրիշներ՝ Ալբարատյան վիճակից կամ միջնաշխարհից: Գարբեյ Էջմիածնեցին, Կարապետ Հովհաննեսավանեցին, Աստուռ Խորվիրապեցին, Հակոբ

² Հոգավածաշարում Բարգեն Ա Կաթողիկոսի «Պատմություն Կաթողիկոսաց Կիլիկիոս» աշխատությունից կատարված մեղմեցումների տեղը կնշենք կրճատ՝ ԲԱԿ Պատմ. և էջը:

կողմից և ուրիշներ. վասպուրականցիները՝ Հովհաննես Արճիշեցին, Թովմա Մեծփեցին, Կիրակոս Ռշտունին, Զաքարիա Վարդեցին և շատ ուրիշներ:

Ժողովին ներկա էին նաև Կիլիկիցի շուրս եպիսկոպոս ի ներքին կողմանց, այսինքն՝ թեմակալ լորս առաջնորդները էջմիածնի ժողովին կիլիկյան եպիսկոպոսների մասնակցության պարագան սկսեցին, թե փոխադրության գործը Կիլիկիո եպիսկոպոսական մարմինն հավանությունն ալ ստացած էր» (Օրմ. Ազգ. Բ 2096):

Քաղաքական արդեալակներ և հեռավորության պատճառով, նրանք, որոնք չէին կարողացել ներկա լինել ժողովին, ինչպես Աղթամարի և Տարոնի վարդապետները և ուրիշներ, թողնված միաբանեալ էին ժողովի նպատակներին և որոշումներին, որով, եղբայրացում է Օրմանյան սրբազանը, իրավամբ Վաղարշապատի ժողովը ընդհանուր Ազգին և ընդհանուր եկեղեցականության համակամ և համահան համաձայնությամբ գործեց առանց բացառության, և օրինավոր ու վավերական ժողով եղավ և եկեղեցական կանոններու և ազգային իրավունքներու հիմամբ կատարվեցավ Հայրապետական Աթոռին Սիսե էջմիածնի փոխադրվիլը, ուրկե հեռացած էր 484-ին» (Օրմ. Ազգ. Բ 2108):

Աթոռի վերահաստատությունը էջմիածնի մեջ այնպիսի դեպք մըն էր, — գրում է լուսահոգի Բարգեն կաթողիկոսը, — որ կիլիկիցիք անտարակույս ըմբռնած պիտի ըլլային անոր նշանակությունը և ըստ այնմ պիտի ընենին իրենց դիրքը» (ԲԱԿ Պատմ. 1208):

Կիլիկիայում հայկական քաղաքական իշխանության անկումը (1375 թ.), Կաթողիկ եկեղեցու ոտնձգությունները Հայ եկեղեցուց ներս, Երիստոսի մամուլքների հաճախակի հարձակումները, հարևան մահմեդական սուլթանությունների ասպատակությունները, ժամանակի այս բոլոր դժնդակ քաղաքական պայմանները Վիլիկիո մեջ ընդհանրապես և մասնավորապես Սիսի մեջ, այնպես որ կատարյալ ողջակիզում մըն էր կաթողիկոսներուն պաշտոնավարությունը կործանյալ և հայութենն զրեթե թափուր մայրաքաղաքին մեջ» (ԲԱԿ Պատմ. 1210):

Խանդավառ ու սրտագին մթնոլորտում, վստիքալիցապատի ժողովը միահամուռ հավանություն տվեց Մայր Աթոռի Սոփի էջմիածնի հայրենադարձության, որովհետև շէր այլևս պատճառ պահելու զԱթոռ Հայրապետության Հայոց ի տար աշխարհին, հեռի ի ժողովրդին հայոց, ապա հարկ անհրաժեշտ կայր փոխել զԱթոռ Հայրապետության ի Սոսյ անդրեն ի Վաղարշապատ՝ ի բնակ Մայր Աթոռն Հայոց, և մանավանդ Մուսաբեկյանցի կողմից

մից շուրջ ժողովի և ոչ մի հակառակության հիշատակություն չկա» (Օրմ. Ազգ. Բ 2108): Ահա այս էր պատճառը, որ էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական համագումարը Հայրապետական Աթոռի Ս. էջմիածին վերադարձի ճանապարհին, առաջին առնչու համար հետագա անախորժությունների և աթոռախույս ձգտումների, առողջ մտածումն ունեցավ Մուսաբեկյանին հրավիրել Ս. էջմիածին:

Էջմիածնի ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը զբաղում յարդուլիամբ դիմում է նրան. «Սմին իրի գրեցին եպիսկոպոսունք և վարդապետք առ Գրիգոր Մուսաբեկեանց, և հրավիրեցին զալ լէջմիածին, եղեալ նմա առաջի բաղում յարդուլիամբ բազմապատիկ պատճառս», եվ երբ Մուսաբեկյանց ալ իբրե լէառ յանձն զալ անդր, այնուհետև խորհեցան առաջնորդք ազգին մեծ ժողով դումարել լէջմիածին, և ի ձեռն ժողովոյ վճարել զիրսն: Ունէին իրեանց ձեռնտու և դմեծամեծս հայոց զբնակեալս ի Հայաստան և ի Վրաստան. որոց միշնորդութեամբ հաճեցուցին և զայլազգի իշխանն Երեանայ՝ որ կոչուր Աղուր կամ Եաղուպէկ. որպէսզի աներկիւղ կարասցեն անել զհամադումարն ժողովոյն» (Զամյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 486):

«Մուսաբեկյան, հայտնի չէ թե ինչպիսի պատճառներով, չէ ուզած հեռանալ Սիսեն, և ասոր վրա է որ էջմիածնի ժողովին մեջ ձեռնարկած են կաթողիկոսի ընտրության» (ԲԱԿ Պատմ. 1211):

Ըստ Հ. Մ. Զամյանի՝ Մուսաբեկյանի ընտրությունը կատարվել էր ժառանգ հաւանութեան երեւելի առաջնորդացն և Աթոռոց, իսկ ըստ Օրմանյանի՝ Մուսաբեկյանց «անախորժին սպանությունը և հետապնդողի մը զեմ մըրցեցով հաջողած էր Հայրապետական Աթոռին տիրանալու... և էջմիածնի հրթալ շուրջով հրաժարյալ նկատվեցաւ... և համակամ և համաձայն ազգային ժողով մը զադրած կհույակե Մուսաբեկյանի կաթողիկոսությունը և Աթոռը զադրած ճանչնալով նոր կաթողիկոս կընտրեալ»:

Վաղարշապատի ժողովը ազգին հանրության օրինավոր ներկայացուցիչն էր, յուր որոշումը վավերական եղավ օրինակով և կանոնով, հաստատուն եղավ ու արդյունքով» (Օրմ. Ազգ. Բ 2014): Հայրապետական Աթոռի այս նոր շրջանի առաջին կաթողիկոսը եղավ Կիրակոս Վիրապեցին՝ ալոր սուրբ և բարեպաշտ, հեզ և խոնարհ ի վասպուրականէն, որը մեծ շուքով և հանդիսությամբ 1441 թվականի Համարածման տոնին օծվեց և բարձրացավ Լուսավորչի Գահին վրա:

Ժամանակի բովանդակ հայության և հոգևորականության զգացումն ու համոզմունքն են

արտահայտվել 1442 թվականին ընդօրինակված «Տառնական»-ի հետագա հիշատակարանում, (գրիչ, Հովհաննես Թմուզվեցի, վայր՝ Ալյարատյան գավառ, Սեբեկի գյուղ), ուր խոսվում է Հայրապետական Աթոռի վերադարձի պատմական, համազգային նշանակութիւն մասին:

«Այժմ քաղաք անէծքն սուր Լուսաւորչի աղաթիւքն, ու էր քովս կտաւն եղծեալ և ջնջեալ, նորոգեցաւ Աթոռ Լուսաւորչին վերքաթին, հինն էանց և եղև ամենայն ինչ նոր, հինն անէծքն էր նորս՝ արհնութիւն ի ձեռն սուրբ հարանց, որ ժողովեցան յարեւելից և յարևմտից, ի հարաւոյ և ի հիւսիսոյ ի Վարդգէս՝ ի նոր քաղաքս Վաղարշապատ՝ ի սուրբ էջմիածինս, որ է մայր ամենայն եկեղեցեաց և ծնաւ և յուսատու Հայոց Ազգիս: Որ ի քաղում ժամանակաց անտես արարեալ էին զնա և ինքեանք ի յԱստուծոյ անտեսացեալք էին, զի խնամք ողորմութեանն Աստուծոյ [վերա]ցեալ էր ի յԱզգէս, որպէս ասաց Աստուած՝ Մի մնասցէ հոգի իմ ի դուսս, վասն թողոյ դոցա զտուն իմ, իսկ այժմ շարժեալ ի գութ ողորմութեան արարիչն Աստուած և ողորմեցաւ տառապեալ Ազգիս Հայոց, և ժողովեաց քաղում իմաստունս և առաքինիս՝ քանիքուն վարդապետք, և ուղղափառ եպիսկոպոսք, և խարաղնազգեստ կրօնաւորք, և ողջախոհ քահանայք, և սըրբաւէր աղտիք, և ժողովուրդք, որ ընտրեցին տեսչամբ և կամաւք Ամենասուրբ Սրբորդութեանն՝ զհեզն, զխոնարհն, զիմաստաւէրն, որ ունէր զտեսականն և զգործնական առաքինութիւնն, ըստ Պաշտօնի իմաստասէր կոչմով զոգնազէտս և զայն, որ գոյն քաղում ինչ ի բերան առնուլ, այլ զայն, որ անրիծ և անաղտ վարս ստացեալ ունին, որպէս հայր [սպաս]ս մեր՝ հոգեւոր Տէր Վիկտրակոս կաթողիկոս, որ յիւր ժամանակն ոչ միս է կերել, և ոչ գինի [ի] խմել, և ոչ սուտ ասել, և ոչ երդումն կերել, ոչ նզովք և անէծք ի բերանն է եղել, նէ (47) տարի է, որ յանապատի է և սուրբ կենդանաթաղ խոր-Վիրապին սպաս[աւ]որել (հաշիկյան, «ԺԺ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, Ա մաս, էջ 531—532):

1442 թվականին, վան քաղաքում ընդօրինակված «Տառնական»-ի հիշատակարանում (գրիչ՝ Կարապետ) գրվել է հետևյալը.

«Աւարտեցաւ սուրբ գիրքս ճայսմատւորացս յամի ՊՂԱ թուականութեանս Հայոց (1442), ձեռամբ յոգնամեղ գրչի Կարապետ երիցու, ի խնդրոյ մահդեսի Մխիթարայ: Եւ գրեցաւ գիրքս ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առեքալոցս Պետրոսի և Պողոսի, և սուրբ Ստեփաննոս նախապկայի, և Սահակայ հայրապետի. ի կաթողիկոսութեան Տեառն Կիրակոսի: Որ ի յայս ամի եղև ժո-

ղով եպիսկոպոսաց և վարդապետաց ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ, որոց էր զուխ մեծ քաղաքական Թովմայ և Յովհաննէս վարդապետն. և եղին զտէր Կիրակոսն յէջմիածին՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց, և նոր նորոգեցաւ Աթոռ Սուրբ Լուսաւորչին Գրիգորի ըստ տեսչեանն մեծին Ներսէսի հայրապետին և Սահակայ Պարթևին, և մերոյս առաջնորդի սուրբ ուխտին Վարդայ Յովհաննէս եպիսկոպոսին. ի թագաւորութեան Ջեմշեդի, որ ի յայս ամի էառ զանաոթի բերդն Ընիլ և զԶուլամբեկ (հաշիկյան 536),

«...Ջահնշահի թագավորութեան օրոք՝ 1441 թվականին Հայ եկեղեցու կյանքում տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն՝ Կաթողիկոսական Աթոռը Սսից տեղափոխվեց էջմիածին:

Կաթողիկոսական Աթոռը Արեւելյան Հայաստան տեղափոխվելու ուղղութիւնով հայ հոգևորականության որոշ շերտեր, հատկապես Սյունյաց մետրոպոլիտոսությունը, գործունեություն էին ծավալել դեռևս ԺԳ դարի վերջերին:

Այդ պլանների արգասիքը պետք է համարել Ստ. Օրբելյանի «Ողբ ի սուրբ Կաթողիկէին» պոեմը, որի մեջ հեղինակը բաղձանք է հայտնում էջմիածնում վերականգնված տեսնել «զԱթոռ թագաւորին և զգաւազան պատրիարքին»:

...1432 թվականին, Կաթողիկոսական Աթոռը էջմիածին տեղափոխելու պաշտոնական ձևակերպումից և Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելուց ինք տարի առաջ, Սյունյաց իշխան Բեշքենի որդի Ռուստամը էջմիածին էր ավաճառելս վեց մեծ գյուղ: Այս մի վճռական քայլ էր Սյունյաց իշխանների կողմից էջմիածինը կաթողիկոսական նստավայր դարձնելու ուղղութիւնով: Նրանց կողմից առաջադրված կաթողիկոսացուն՝ Գրիգոր Մակվեցին, որի անունով էր ձևակերպված ավաճառված կալվածների հանձնումը վանքին, մինչև Կիրակոս Վիրապեցու ընտրությունը մի հիշատակարանում կոչվում է «Հայրապետ սուրբ էջմիածնի» (հաշիկյան 522):

Կաթողիկոսական Աթոռը էջմիածին փոխադրելու նախաձեռնողները, ահշուշտ, ունեին բաղադրական բոլոր հնունդները: Պատմական Հայաստանի սրտում՝ Արարատյան դաշտում, վերահաստատված «Հայրապետական Աթոռ» գոյություն ունեցող պայմաններում պետք է նպաստեի համահայկական կենտրոն ստեղծելու գործին, պետք է որոշ չափով շաղկապեր միմյանց հայ ժողովրդի տարբեր բնակավայրերում իշխանությունների միջև հեծող հաշտվածները:

Հայրապետական Աթոռի փոխադրության առնչությամբ էջմիածնի ժողովի որոշման

նկատմամբ և նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Կիրակոս Վիրապեցու հանդեպ Մուրազբեկյանցի կամ սանցիների դիրքը ճշտելով, Բարգեն կաթողիկոս գրում է. «Գրիգոր Մուսաբեկյանը պիտի շարունակեր իր կաթողիկոսությունը մինչև իր վախճանումը և հետո նոր կաթողիկոս մը պիտի լընտրվեր (Սսի համար), քանի որ անդին, էջմիածնի մեջ Կաթողիկոսական Աթոռը վերահաստատված էր և նոր կաթողիկոս մը ընտրված, և կերևի թե ոչ միայն ինքն Մուսաբեկյան, այլ նաև Կիլիկիո եկեղեցականությունը ունենին այդ հասկացողությունը» (ԲԱԿ Պատմ. 1213)։

Կանոնական տեսակետից այդպես էին մտածում բոլոր ժողովականները և այդպես էր մտածում նաև նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Կիրակոս Վիրապեցին, որը Հայրապետական իր առաջին կոնդակով Սիսը աղատում է քանադրանքից.

«Մըսայ կաթողիկոսունք, եպիսկոպոսունք, վարդապետք, քահանայք, սարկաւազունք և կրօնաւորք և ամենայն հաւատացեալք ի Քրիստոս եղիցին օրհնեալք, և կապեալքն եղիցին արծակեալք, և քանադրեալքն աղատեալք ի կապանաց մեղաց»։

Գրիգոր Տաթևացին էլ իր ժամանակ աշխատել էր ազատել Գրիգոր Գ Պահլավունու օրով դատապարտված Աղթամարը Մե լեռան ժողովի քանադրանքից. «Ի սոյն ժամանակի ի խնդիր ելեալ վասն կապանաց Աղթամարայ և մեծահանդէս ժողով արարեալ արծակեաց զամենեանս հնոց կաթողիկոսաց» (Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 52)։

1441 թվականի աղգային-եկեղեցական համագումար ժողովը, ըստ հիշատակարանների, ոչ միայն ավերանորոգեց իւսավորչի Աթոռը, այն վերադարձնելով իր սբնակ վայրը-ը, այլև հաստատեց և հռչակեց Հայ եկեղեցու նվիրապետական միասնությունը՝ Եկրեմելյան վարդապետներու քուն նպատակն էր ոչ միայն Կիլիկիո վտանգավոր միջավայրեն աղատել Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, այլև նաև Կաթողիկոսական միակ Աթոռ մը ունենալը» (ԲԱԿ Պատմ. 35)։

Գծախառնարար սակայն շուտով քանդվեց 1441 թվականի Վաղարշապատի ժողովում ստեղծված աղգային-եկեղեցական միասնությունը, էջմիածնում սկսվեցին Աթոռի համար ամուլ պայքարներ վասպուրականցիների և սյունեցիների միջև. Վիրապեցին զահրնկեց արվեց, «Աթոռի վերահաստատությունը անձնական կիրքերու հազուրդ տալու միջոց մը կդառնա» (ԲԱԿ Պատմ. 1214)։

Այս հանգամանքը օգտագործում են ինչպես երկրի իշխող քաղաքական տերերը շահագրտական նպատակներով, այնպես էլ Կիլիկիայում մի շարք փառասոսեր հոգևորական-

ներ տխուր փառասիրություններով, որոնք Մուսաբեկյանի մահից հինգ տարի հետո որոշում են պահել Կաթողիկոսական Աթոռը Եկրիկիայում, որպես մասնավոր Կաթողիկոսություն և հնգամյա ընդհատումն կամ թափուրութենն հետք Կարապետ Եվդոկիացի կհաջորդե Մուսաբեկյանին, որուն կաթողիկոսությունը կհանլցվի, կհաստատվի եզրիստոսի Մելք Տահերի կողմեն (ԲԱԿ Պատմ. 1214)։

Կիլիկիո կաթողիկոսությունը սկսվում է հիմնականում Կարապետ Եվդոկիացիով (1446—1478 թթ.), Բարգեն կաթողիկոս, խորհրդածելով Կիլիկիո Աթոռի կաթողիկոսի մասին, գրում է.

«Կիլիկիո կաթողիկոսության շարունակությունը Մուսաբեկյանի մահեն հետք, իբրև ուղիղ հետևանք պատմական դեպքերու, ինքնին պետք մը դարձած է Կիլիկիո համար. քանի որ տիրող քաղաքական պայմաններն այլ կնպաստեին կիլիկիացվոց, որոնք այդ միջոցին եզրիստոսի մեկնություն տիրապետության ներքև ահազին դժվարություններ պիտի զգային նույնիսկ հոգևոր հարաբերություններ մշակելու Արևելյան Հայաստանի հեռավոր մեկ անկյունին հետ, որ ուրիշ քրոնապետության ներքև կտառապեր» (ԲԱԿ Պատմ. 1214)։

Սսի առաջին կաթողիկոս Կարապետ Եվդոկիացին աթոռակալում է 1446—1478 թվականներին։ Թովմա Մեծոփեցին նրա մասին գրում է, որ Վիրապեցու կաթողիկոսության խառն ժամանակին կիլիկեցիք զգտեալ երէջ մի աշխարհիկ Կարապետ անունով, հավանաբար շուշտակ վարդապետ, ժվասն հակառակութեան նշանակում են կաթողիկոս, Զամյան ավելացնում է հետևյալը Եվդոկիացու մասին. «Ի մեռանել կաթողիկոսին Սսոյ՝ այն է Գրիգոր Մուսաբեկեանց, Կարապետ վարդապետ ոմն ի Սսոյ, որ ձեռնադրեալ էր Եպիսկոպոս ի Կիրակոսէ, գիմեաց առ ամիրայն Կիլիկիոյ, որ էր ընդ իշխանութեամբն սուլտանին Եզրիստոսի, և խոստացաւ վճարել նմա ամի երեք հազար դահեկան՝ էառ ի նմանէ զիշխանութիւն կաթողիկոսութեան Սսոյ» (Զամյան Գ 491)։

Գրիգոր Դարանաղեցին ևս գրում է, որ կիլիկեցիք լսեցին Կիրակոս Վիրապեցուն պատահած անփրավությունը, ապստամբվեցին և որոշեցին քաժանվել «և եղին իրեանց ինքնազուլս կաթողիկոս... ասելով թէ՛ մեք վասն ամենագովելի առնն Աստուծոյ Տէր Կիրակոս ճգնաւորին եղաք հնազանդ, յորժամ անփրութիւն արարիք. մեք անօրինաց և ապրստամբաց չեմք հնազանդ լինիլ, որ զեռ տակալին երկու ամ է որ լռեմք» (Գրիգոր Դարանաղեցի, «Ժամանակագրութիւն», Երեսուդեմ, էջ 310)։

Նվազեցան, ըստ Օրմանյանի, եղել է ճարտարի, գործունյա և մտավոր կարողութեան իսկ առ տեր անձ մը (Օրմ. Ազգ. Բ 2140), իսկ նրա երկարատև կաթողիկոսութիւնը խաղաղ շնորհիվ քաղաքականորեն և ազգայնապաշտպանական ուրիշ տեղեկութիւններ կապակիւն ալ մասին, թէ ժողովուրդը Սսի և էջմիածնի հարաբերութիւնները, Կարապետ ի՞նչ դիրք բռնեց հանդիպ էջմիածնի և էջմիածնի ի՞նչ դիրք բռնեց հանդիպ Սսի... Կիլիկիայն Աթուրի իրավասութիւնը որչա՞փ ամփոփվեցա՞վ, այսինքն որո՞նք եղան երկու Աթուրներուն թեմական սահմանները՝ (ԲԱԿ Պատմ. 54):

Մայր Աթոռը Մակվեցի Գրիգոր Զաւարեկյանի օրով (1443—1465 թ. թ.) ակամա հաշտվեց Կիլիկիայում ստեղծված կացութեան հետ և խոհանարարութեամբ շարունակեց, վճիռ լարձակեց Կարապետի նոր Աթոռ մը հաստատելու դեմ (Օրմ. Ազգ. Բ 2144):

Կարապետ Նվազեցուց հետո Սսի հաջորդ կաթողիկոսների կյանքի և գործունեության մասին չունենք պատմական ամբողջական տեղեկութիւններ: Մեզ հասած մի շարք հիշատակարաններ վկայում են, որ Սսի կաթողիկոսները ապրել և գործել են շարադետա պայմաններում և աշխատել են պահել թիւրքերի ժողովուրդը: Ստեփանոս Սարաձորեցի (1478—1483 թ. թ.), Սսի Աթոռը փայլեցնելու նպատակով և այն նորեն Ամենայն Հայոց Աթոռ դարձնելու համար (Օրմանյան), թաղում իրից ջանացա՞վ խափանել զԿաթողիկոսութիւնն էջմիածնայ, բայց տեսնա՞լ թէ ոչինչ կարէ, և խաղաղութիւն երկուց Աթոռոցն ևս վրդովի, դադարեցաւ ի ջանիցն անտիւն (Զամյան Գ 491):

Կիլիկիայն Աթուրի հաջորդ հայրապետների մէջ ուշագրա՞վ դեմք է Հովհաննէս Բ Թլկուրանցի (1489—1525 թ. թ.), որպէս հայտնի տաղասաց և բանաստեղծ: Թլկուրանցին ծանոթ է ավելի որպէս տաղասաց քան կաթողիկոս: Բանաստեղծ-կաթողիկոսը գործունյա հոգեւորական մը եղած է և իր բանաստեղծի խառնվածքին ավելցուցած է իր հոգեւոր պաշտոնի հմայակը (ԲԱԿ Պատմ. 76), բայց, ավելացնում է Օրմանյանը, Կիլիկիոյ Աթոռը ի՞նչ օգուտ քաղեց աշուղ կաթողիկոսին, կամ թէ Թլկուրանցին ի՞նչ արդյունքներ բնձնեց Հայ Եկեղեցիին... մեզի անհայտ կմնան (Օրմ. Ազգ. Բ 2211):

Իրապէս ցավալի է, որ չունինք պատմական հարուստ տեղեկութիւններ Սսի Հովհաննէս Գ Թլկուսցի, Կայծակն մականվանյալ (1525—1539 թ. թ.), Միմեոն Ա Զեյթունցի (1539—1545 թ. թ.), Ղազար Անթեպի 1545—1547 թ. թ.), Թորոս Ա Սսեցի (1548—1550 թ. թ.), Խաչատուր Ա Զորիկ (1550—1560 թ. թ.), Խաչատուր Բ Զեյթունցի (1560—

1684 թ. թ.) կաթողիկոսների մասին, որոնք ավելի խաղաղիք են դառնում ժամանակի քաղաքական վերիվայրումներին քան արդյունավետութեամբ ղեկավարում Եկեղեցուն և ժողովուրդին: Սսի այս կաթողիկոսների առկայած ազգային եղելութիւնները մեծ և կարևոր բան մը չեն ներկայացնում (Օրմ. Ազգ. Բ 2259): Տվյալ ժամանակաշրջանի կաթողիկոսներից ոմանք իրենց եղբայրն ու աստիճանին մարդը չէին, եկեղեցականութիւնը պարճանքի և պաճաճանքի զակատեր է, մոռնալով հոգեւորականի վայել պարզ կենցաղի պայմաններն ու հոգեւոր հովիւին պարտավորութիւնները (ԲԱԿ Պատմ. 136—138), թեև եկեղեցականներից և կաթողիկոսներից ոմանք էլ ունեցել են ճշգնազգեսիկ կենցաղը:

ԺԶ—ԺԷ դարի կիլիկիայն կաթողիկոսների մէջ իր գործունեութեամբ և վաստակով կարևոր տեղ է գրավում Ազարիա Զուղայեցի (1584—1601 թ. թ.), յորում կյանքը անդադրում գործունեութիւն մը եղած է, իրեն ուսուցիչ և կաթողիկոս և որպէս պայծառ դեմք՝ Հայ Եկեղեցւոյ իրեն ժամանակակից նշանավոր վարդապետներու շարքին թե՛ իր գիտութեամբ և թե՛ իր կաթողիկոսական բազմաբանգ գործունեութեամբ (ԲԱԿ Պատմ. 150—151): Զեռաղիր հիշատակարաններում նա անվանվել է ճշգրտ բարունապետ, ուսուցիչ և խրատիչ ամենայն հաւատացելոց քրիստոնէից:

Զուղայեցին համազգային հանգանակութեամբ վճարել է Երուսաղեմի հայոց Պատրիարքութեան պարտքը՝ զվասն Երուսաղեմայ պարտուցն... գնացի ի Հին Զուղա՝ նա շարունակել է նաև իր նախորդի՝ Խաչատուր Բ-ի օրով վերսկսած Հայ և Կաթողիկ եկեղեցիների հարաբերութիւնները:

Զուղայեցու օրով Հոռմի Գրիգոր ԺԳ պապը (1571—1595 թ. թ.) նորից առաջ է քաշում Կաթողիկ եկեղեցու և արևելյան եկեղեցիների միութեան հարցը: Պապի ներկայացուցիչը՝ Սիդոնի Լեոնարդո Աբել Եպիսկոպոսը գալիս է Կիլիկիա և Սսում ու Հայկում բանակցութիւններ վարում նախ Խաչատուր Բ և ապա Ազարիա Զուղայեցի կաթողիկոսների հետ: Պապական նվիրակն իր բանակցութիւնների արդյունքը հարգողում է վատիկան 1587 թվականի ապրիլին:

Բնկ պապական նվիրակ Լեոնարդո, որ Արևելքի քաղաքական վրդովմունքներուն պատճառով չկրցա՞վ երթալ էջմիածին, թրդթակցութեամբ կմշակեր իր հարաբերութիւնը Գրիգոր ԺԲ-ի աթոռակից Առաքել Ա-ի հետ:

Պապերու հետ այս բոլոր հարաբերութիւններուն նպատակը շատ պարզ էր. այսինքն մերձենալ Հոռմի Եկեղեցւոյն, ամեն հնարա-

վոր զիջումներն ընելով, և ադոր փոխարեն քաղաքական շահ մը ապահովել հայ ժողովուրդի օգտին, որ հավասարապես կհարըստահարվի թե՛ Կիլիկիո և թե՛ Հայաստանի մեջ:

Հոռմ կշահագործներ հայ ժողովուրդին այս հարստահարյալ կացութիւնը և Հայաստանյայց եկեղեցւոյ միացումը պայման կդնեն, իրմե ակնկալված օգնութիւնները շնորհելու համար, օգնութիւններ, որ անշուշտ շահագանցորեն կգնահատվեն տառապյալ ժողովուրդի մը առաջնորդներուն հրեակայութեանը մեջ:

Խաչատուր Բ և Զուղայեցիին, այո, հարաբերութիւններ մշակեցին Հոռմի հետ, նամակներ գրեցին, դավանաբանական խնդիրներու մեջ ըրին հնարավոր զիջումները, ոչ թե Հոռմի եկեղեցւոյն ուղղափառութեան նոր ապացույցներ տալու համար, այլ պարզապես իրենց ժողովուրդին քաղաքական կացութիւնը քարվոքելու համար, և Հոռմի հմայիչ անվան ու զորութեան հրաշքները տեսնելու հույսերով:

Խաչատուր Բ-ի և Զուղայեցիի կողմէն Հոռմ ուղղված գրութիւններ պահված են Վատիկանի մատենադարանին մեջ:

Ազարիա Զուղայեցիին իրեն ուղղափառ և հավատարիմ վարդապետ Հայաստանյայց եկեղեցւոյ, իրեն արժանի տեղը տալու համար Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռին վրա Հոռմի հետ իր մշակած հարաբերութիւններու մեջ, շատ զգուշավոր եղած է և միայն աշխատած է ոգտվիլ որեւէ կերպով պապական իշխանութեան ճոխութենէն և գլուրութիւններէն, ինչպես որ կտեսնվի իր վավերական մեկ գրութիւնէն, զոր ուղղած է Գրիգոր ԺԳ պապին:

Ինչպես կտեսնվի առ Գրիգոր ԺԳ պապ ուղղած նամակին ամփոփումէն, Ազարիա հնարավոր զիջումները ըրած է Վատիկանին՝ անկից քաղաքականապես և նյութապես օգտուվելու հույսերով, և փորձի համար ալ միայն հայերեն Աստվածաշունչ մը տպագրելու առաջարկը ըրած է պապին, այլ նաև քանի մը տղա դրկած է որ կրթվին, իհարկն այն նախատեսութեամբ, որ անոնք սորվելով տիրող լեզուն և ուսումնասիրելով Հոռմի եկեղեցին և պապութիւնը, օգտակար ծառայութիւններ պիտի ընեն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին մեջ:

Թե ի՞նչ եղավ այս խնդրանքներուն արդյունքը, այդ մասին լուռ է պատմութիւնը, և այդ լուրթիւնը նշանակալից է ինքնին, այսինքն լեռնարդշի պատմութիւնները Վատիկանի ուժին և հնարավորութեան մասին իր ըրած խոստումները հարստահարյալ հայութեան վիճակը քարվոքելու կողմէն, հարկավ Ազարիայի և իր հպիսկոպոսներուն բեր-

նին ջուրերը վազել տվին, բայց իրականութեան մեջ Վատիկան հայերեն Աստվածաշունչ միակ չկրցավ տպագրել, և Անթիպիք Հովհաննէս հպիսկոպոս և Գրիգոր Կաթողիկոս թերեւ նոր խոստումներով և եկեղեցական նվերներով վերադարձան Կիլիկիա, չըսելու համար բոլորովին ձեռնուռայն և հուսախաբ:

Ահա վատիկ բոլոր արժեքը և արդյունքը Ազարիա Զուղայեցիի Վատիկանի հետ մշակած հարաբերութիւններուն» (ԲԱԿ Պատմ. 168—187):

Զուղայեցու հաջորդ սասկան կաթողիկոսների մեջ ժշնորհքով պատրաստված կոռնպետ է եղել Հովհաննէս Դ Անթիպիքի (1602—1621 թ. թ.), թիւ շնչոված հոգևոր նկարագրով, իրեն գրեթէ ու գրի մարդ, իրեն թագմաշակերտ ուսուցիչ, իրեն զործույնյա առաջնորդ՝ իր պաշտոնին եկեղեցական և վարչական ճյուղերուն մեջ (ԲԱԿ Պատմ. 199): Ժամանակակիցները նրան անվանել են ժերմիշտ և բարձրարարաւ քարոզիչ տիեզերաց, քաջ և անհաղթ փրկիստիպա:

Անթիպիքու օրով, Հալեպում, Պետրոս Կարկառեցու կաթողիկոսացումով Կիլիկիայի Աթոռը երկփեղկվում և բաժանվում է երկուսի: Վտանգը լուրջ էր, որովհետեւ Կարկառեցին ժամանակի նշանավոր վարդապետներից մեկն էր և աշակից ու գործակից Ազարիա Զուղայեցու Պետրոսի վախճանումով, բարեբախտաբար, վերջ է գտնում եկեղեցական ժերկպառակութիւնը:

Հատկապես ԺԶ և ԺԷ դարերում, էջմիածնի Ամինայի Հայոց Հայրապետական Աթոռի և Սսի Կաթողիկոսական Աթոռի միջև սկզբում են կաթողիկոսական իրավասութեան սահմանների և հպիսկոպոսական ձեռնարկութեան վերաբերյալ վեճեր, որոնք առանձնապես սուր բնույթ են ստանում Ամինայի Հայոց Կաթողիկոս Փրիկպոս Արքակեցու (1633—1653 թ. թ.) և Սսի Սիմեոն Բ Սեբաստացի (1633—1648 թ. թ.) կաթողիկոսի օրով:

Կաթողիկոսական Աթոռին էջմիածնի մեջ վերանորոգումն (1441 թ.) հետո խնդիրներ ու կեճիւններ պատկան շեղան երկու Աթոռներուն միջև, անոնց թեմական իրավասութեան կողմէն, նվ գլխավոր դժվարութիւնը կդառնար ձեռնարկութեան շուրջ: Հայրապետական Աթոռի Ս. էջմիածնի վերադարձից հետո էլ Կիլիկիայի կաթողիկոսները փորձում էին իրենց թիրախութեան ընդարձակել և ձեռնարկութեան կատարել էջմիածնի թեմին պատկանող թեկնածուներու վրա, մասնավորապես հպիսկոպոսական ձեռնարկութիւն: էջմիածնի կպնդեր, թե Սսի կաթողիկոսները իրավասու չեն, իսկ անոնք, լնդհակառակը, տարբեր կերպով կըմբռնեն կացութիւնը, հիմնվելով 1441-ին առաջ տի-

որոշ ավանդության վրա, նվազանքն այս կետին վրա կիլիկացիք իրավունք չունենին, որովհետև իրաց վիճակը փոխված էր քաղաքում, էջմիածին Մայր Աթոռ ճանաչված էր և ան իրավունք ունեւր պահանջել կիլիկիո Աթոռին, որ իր սահմաններին անդին շահեցնի ձեռնադրության խնդրին մեջ» (ԱԱԿ Պատմ. 313)։

«Կարելի չէ հաստատել, թե Մուսարեկյանի և Վիրապեցիի հաջորդներում ժամանակ խնդիրներ հուղված չըլլան երկու Աթոռներուն միջև, քանի որ Սիս իր իրավասության ներքև պիտի պահեր Կիլիկիո սահմանակից հայաբնակ երկրները։ Իսկ էջմիածին, իբրև Աթոռ Ամենայն Հայոց Կաթողիկոսության, իր իրավասության տակ պիտի հռչակեր Կիլիկիո սահմաններին դուրս այս երկրները» (ԱԱԿ Պատմ. 1213)։

«Սանդոքն արդեն, — գրում է Օրմանյան սրբազանը, — երկու Կաթողիկոսական Աթոռները Աղթամարի և Սսի մեջ, որոնք հակաթոռության կերպարանի ներքև սկսան, սակայն օրինավորության կերպարան առած էին, Աղթամար՝ Վիրապեցիին օրհնությանը և Սիս՝ սկիզբին իրեն դեմ վճիռ շտրվելով, որով հանրության կողմին ընդունված Աթոռներ էին, Երկուքին այլ սահմաններ ոչ սկզբին և ոչ ալ հետո որոշ գծված չէին, և քաղաքական տիրապետությանց համեմատ կփոխվեին իրավասությանց վիճակները, վերջապես Մայր Աթոռի անկարգ անկանոն կացությունը, մանավանդ վերջին ժամանակներում մեջ, համարձակություն տվեց էին մյուս Աթոռներուն ուղածուն պես գործել և ուղած կողմերուն համար եպիսկոպոսներ ձեռնադրել։ Սիմեոն Սեբաստացի, որ 1633-ին Կիլիկիո Կաթողիկոս էր եղած, ևս առավել կրնա դարձակեր յուր ձեռնարկները և ձեռնադրությունները» (Օրմ. Բ 1441—1445)։

1633 թվականին Սսի Սիմեոն Սեբաստացի Կաթողիկոսը Կոստանդնուպոլսից Սիս իր վերադարձի ճանապարհին հանդիպում է Անկյուրիա (Անկարա) և Թորոս անուն մի վարդապետի եպիսկոպոս է ձեռնադրում։ Անկյուրիան էջմիածնի թեմ էր։ Թեմում այս ձեռնադրության առթիվ թխուկություն կծագի։ Կոստանդնուպոլսի Գրիգոր Կեսարացի պատրիարքը, որը թեմ Սիմեոն Սեբաստացու էլ բարեկամն էր և սերտ հարաբերություններ էր պահում Կիլիկիո Աթոռի հետ, իր դժգոհությունը հայտնում է Սիմեոնի դեմ և միաժամանակ որպես ի պաշտոնն «էջմիածնի վեթիլ և երեսփոխան», ինչպես նա գրում է իր մասին, հարցը ներկայացնում է Փիլիպոս Կաթողիկոսին, որպես նախանձախնդիր Հայրապետ էջմիածնի կանոնական իրավասությանց ու չեմ պաշտպանը կարգ ու կանոնի, Թորոս եպիսկոպոսին կախակալում է, իսկ Սսի Սիմեոն Կաթողիկոսին ուղղում է մի ազդեցիկագին, մեղա-

դրելով նրան «աղիկամի և յուր իրավասության վիճակներին դուրս ձեռնադրություն, կատարելու մեջ»։

Փիլիպոս Կաթողիկոս իր թուղթը որպես ընդհանրական նամակ և քարտեզ ուղղում է առ ամենայն արմենակոչ խումբան, որ յաշխարհս Կիլիկիա, ի Սիս և ի Բերիա քաղաքի, այսինքն Կիլիկիայի ամբողջ ժողովրդին և հոգևորականության։

Իժրախտաբար մեղ չի հասել Փիլիպոս Կաթողիկոսի պատմական մեծ արժեք ներկայացնող այս կանոնական թուղթը։ Նամակի րովանդակության և նշանակության վերաբերյալ որոշ տեղեկություններ քաղվում են Սսի Սիմեոն Կաթողիկոսի պատասխանագրից։ Պարզ է, որ Ամենայն Հայոց Հայրապետի նամակի հիմնական հարցը երկու Աթոռներուն մեծության վրա կհանգի։ Փիլիպոս Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. էջմիածնի գերագահ և գլխավոր Աթոռ լինելը պաշտպանելիս ավանդական, պատմական, կանոնական անհրաժեշտ փաստերից բացի դիմում է նաև փիլիսոփայական փաստարկումներին, ասեռի և տեսակի և անհատի փոխհարաբերությունների, հզորացնելով փիլիսոփայորեն, որ «մասունքն ի հանուրն տեսանին, բայց ոչ հանուրն ի մասունքս»։ Փիլիպոս Կաթողիկոսը փաստարկում է, որ Ս. էջմիածինը առաջ է և Սիսը վերջին, Ս. էջմիածինը գլուխ է, Սիսը՝ մասունք։

Սիմեոն Սեբաստացի իր պատասխանագրի մեջ, որը հասել է մեզ, 1634 թվականին, ճշտավորյն սկսելով, Կաթողիկոսներուն շարքին քաղվածք մը առջև կդնե, ոչ ճիշտ թվերով և թվականներով, հետեցնելու համար, թե «մինչև ցայսօր կայ Հայրապետութիւնն հաստատ աստ (ի Սիս), և Ա. Լուսաւորչի Աջն աստ, զի ի սմա բնակեցաւ, զի հանեցաւ ընդ առ»։

Օրմանյան Սրբազանը Սսի Սիմեոն Կաթողիկոս Սեբաստացու այս հայտարարությունը իրավացիորեն զնահատում է որպես «կիլիկացիներուն հավանոր մեծամտության մերթ ընդ մերթ երևան եկող հայտարարություն, որ հերքելու իսկ պետք չունի, զի պատմական պարագաները շատ որոշ են այդ մասին» (Օրմ. Ազգ. Բ 2447)։

Կիլիկյան Կաթողիկոսների պատմությունը գրող մեծահմուտ Բարսեղ Կաթողիկոսը ևս, քննության առնելով Սսի Կաթողիկոսական Աթոռի կանոնականության և Լուսավորչից աուղագիծ հաջորդության և Շնորհալու Աթոռ լինելու հարցը, գրում է.

«Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին կանոնականությունը պաշտպանելու համար միշտ պատմական սխալ բացատրություններ և փաստեր քված են անվախ՝ թե՛ նույնիմե Կիլիկիո հին և նոր Կաթողիկոսներու կողմեն և թե՛ Կիլիկիո Աթոռը պաշտպանել

ուղղորդված կողմնակից ընդգծված ազդեր հակառակ էջմիածնի կաթողիկոսներուն և ընդգծված նաև անոնց ջատագովներուն...

Անոնք որ ըսին կիլիկիո Աթոռը ուղղակի Ս. Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական գիծին շարունակություն է կամ Շնորհալիի կաթողիկոսության հաջորդությունը, այսպիսիները տարակույս չկա որ ստույգ պատմությունն ալիլի պատմական գեպքերու երևույթներով ողորդվեցան. վասնզի Լուսավորչի կաթողիկոսության շարունակությունը, բառին կանոնագիտական առումով, լքն տեղի հետ կապվի. էջմիածնեն, դուրս պետք չէ ելլել. իսկ եթե կաթողիկոսական իշխանության փոխանցումի խմատով պիտի առնվի շարունակությունը, այդ պարագային բոլոր կաթողիկոսներն ալ, որ Լուսավորչի կաթողիկոսության հաջորդության շղթան կկապեն, որինավոր կաթողիկոսներ են, առանց կապվելու տեղի և մասնականի:

... Պատմության այս լույսերուն տակ Կիլիկիո Կաթողիկոսությունը աշխարհագրական և տեղագրական ստույգներով չի կրնար Շնորհալիի հաջորդությունը ըլլալ, որովհետեւ Սիս չէ եղած Շնորհալիի նստոցը (ՔԱԿ Պատմ. 17, 19):

Փիլիպոս Կաթողիկոսին ուղղված Սիմեոն Սերաստացու պատասխանն նամակը «անսպասելի էր», ոճը՝ «անվայել կոնդակներու համար», ինչ որ ցույց կտա նրա լսելիությանը, «կարի հանդուգն, չնմ կամիր ըսիլ լրբենի լեզվով գրված պատասխան մը», — գրում է Իվմիրյան սրբապանը, «Հայրապետություն Հայոց և Աղթամար ու Սիս» աշխատության մեջ (Կոստանդնուպոլիս, 1889 թ. էջ 437—438), «որ ամեն բարեպաշտից և ազգասիրտ արդար պայքարվի կշարժեն»:

Փիլիպոս Կաթողիկոս խոհակախոսության մարված է խնդիրը շարժարժելով ու սլացաբը շարժարժելով, համոզված ըլլալով, թե այսպիսի քննությունն և լեզվագրության տեր մեկու մը հետ հնար չէր խոսք հասկնալ և բարեկարգական կանոններու վրա համոզում գոյացնելը:

Փիլիպոս Կաթողիկոսը այնուհետև երկու Աթոռների փոխհարաբերությունը բարելավելու և հակառակության պատճառները վերացնելու համար, գրում է Ներսադեմի Գրիգոր Պարոնտեր Գանձակեցի պատրիարքին (1613—1645 թ. թ.), որպեսզի «ազատառանձն անի երկու Աթոռների միջև 1609 թվականին Սիմեոն Սերաստացին Հարության Զատիկի տոնին ուխտավորաբար դառնում էր Ներսադեմում: Գրիգոր Պարոնտեր պատրիարքը, զգուշանալով առիթից, միջամտում է, որ վերջ տրվի լարված կացության: Սիմեոն Սերաստացին հավանում է և իր իսկ ձեռքով մի թուղթ է գրում և խոստանում «ոչ ևս զենել ձեռն ի վերայ քահանայի և եպիսկոպոսի արտաքուս եղելոց ի վիճակի իւրում, նոյնպէս Կաթողիկոսն Մ. էջմիածնի, ասէ, մի՛ ձեռնադրեսցէ զոր, որ չիցէ ընդ իշխանութեամբ իւրոյ վիճակի: Եւ եթէ որ լեկեղեցականաց դատուէ եկեացէ ի վիճակ մեր, հարասիրութեամբ մեծարեսցի, և թողցի նմա ժողովել կամաւոր նոյնքո զորմութեամբ. նոյնպէս և որոց առ ի մէջ ի վիճակս Ս. էջմիածնի երթիցեն, նոյնի սիրով և պատճառով ընկալցին, Սակայն մի որ ընգդէմ իւրաքանչիւր աստեղութեանց լեկեղեցական արարողութիւնս ձեռներէց փոխի փոխել զնոսա»:

Այս թուղթը ստորագրում են նաև Գրիգոր Պարոնտեր պատրիարքը, Տփղիսեցի Հակոբ, Մոկացի Կարապետ, Սիրաստացի Ներսես և եպիսկոպոսները և ուխտավորաբար Ներսադեմում գտնվող քահանաներ, մահտեսիներ, խոջաներ, որոնք ներկա են գտնվել նաև ժողովին: Մայր Աթոռը Ներսադեմի այս ժողովում ներկայացուցել է իր ունեցել, այնուամենայնիվ պատմական այս թուղթը ուղարկվում է Ս. էջմիածին և Փիլիպոս Կաթողիկոսն ընդունում է այն (Տ. Սավալանյան, «Պատմություն Ներսադեմի», ձեռագիր: էջ 699—700. հմտ. Մնարոկ Կաթողիկոս Նշանյանի աշխարհաբար թարգմանության հետ, էջ 587—588):

Այնուամենայնիվ երկու Աթոռների հարաբերությունները չեն բարելավվում մինչև Ներսադեմի երկրորդ ժողովը, որը տեղի է ունենում 1651 թվականին՝ Փիլիպոս Կաթողիկոսի նախագահությամբ:

Սաի Աթոռի վրա Սիմեոն Սերաստացուն հաջորդում է Ներսես Սերաստացին (1648—1654 թ. թ.), «զամենայն կրթութիւն և վարժումն մանր երգոց երաժշտականութեան» և «ընթերցումն Աստուածաշունչ Գրոցն տիրացած, «հշարտութեան իրաւացն Աստուծոյ ջատագով», «սրբասէր» (Դարանաղցի, էջ 337) կաթողիկոս, որն «ալիլի խաղաղասիր և խոհական զաղափարներու տեր անձ մըն էր և բարեկեցիկ հարաբերությանց պետք կղգար» (Օրմ. Ազդ. Բ 2453):

Փիլիպոսի և Ներսեսի օրով փոխադարձ հասկացողության և սիրալիր համագործակցության մի շինարար մթնոլորտ է ստեղծվում Մայր Աթոռի և Սաի միջև:

Երկու Աթոռների նախկինում սրված հարաբերությունների բարելավումը պայծառ ապացույց է Փիլիպոս և Ներսես Կաթողիկոսների խոհուն վարչագիտության և ազգասիրության, որը փառավորապես արտահայտվեց 1651 թվականին, Ներսադեմի ժողովում:

«Երկու Աթոռներուն միջև տիրող անհասկացողությունները ու հակառակությունը

չէր կրնար երկար տեւել և պետք չէր որ տեւեր (ՔԱԿ Պատմ. 343):

Միմեռնի վախճանումից հետո, Ներսէս Սեբաստացին, որպէս իրոր խոհեմ և հեռատես հայրապետ, զգում էր, որ հնարավոր չէր Միմեռն կաթողիկոսի մտայնութիւնը և մեթոդով կարգադրել վիճելի և Հայ Եկեղեցու ու ժողովրդի գերագույն շահերը շոշափող հարցերը: Նպաստավոր էին նաև ժամանակի քաղաքական պայմանները: Երկար կոփվեցից հետո, օսմանցիների և պարսիկների միջև տիրում էր երկարատև զինադադարի մի շրջան: Փիլիպոս Աղբաղիցին, օգտվելով առիթից, ցանկանում է Հայեկ—Ներսէսին գծով գնալ Կոստանդնուպոլիս, փերչ տալու համար հայոց Պատրիարքական Աթոռի շուրջը ստեղծված գրգռութիւններին, հուզումներին և կաթողիկոսների կողմից ստեղծված ազդային եկեղեցական պատակտումներին:

Կոստանդնուպոլսի (հայութիւնը, լսելով Ամենայն Հայոց կաթողիկոսի ռեզոլուցիան մասին, կարգադրում է պարտ ու պատշաճ՝ համազգային հանդիսութիւնը ընդունելու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնարքը, պատմական այցելութիւնը: Օսմանյան կառավարութիւնը հրահանգում է, որ սցորչալի կաթողիկոսը օսմանյան հողի վրա գտնվի, պարտ ու պատշաճ հարգանքը ընծայվի տեղական իշխանութիւն կողմից և անոր մոտ նշանակվի թագավորական ծառա, ի գրպանն թաղապիրին:

Ամենայն Հայոց Հայրապետի այցը Հալեպ՝ Սահ Աթոռին՝ պատմական մեծ իրադարձութիւն էր Հայ Եկեղեցու պատմութեան մեջ, Փիլիպոս կաթողիկոսը Հայեկ հասավ իր շքախմբով և այնտեղ հանդիպեց Սահ Ներսէս կաթողիկոսին: Երկու հայրապետները, իրենց հետևորդներով միասին, ուխտի գնացին Ս. Ներսէսին, Զատիկի տոնի առթիւ, 1651 թվականին:

Հալեպում երկու կաթողիկոսների հանդիպումը, նրանց միասին ուխտագնացութիւնը Ներսէսին երբեք էլ պատահականութիւն չէր, այլ, ինչպէս ճիշտ կերպով նշում է Բարսեղ կաթողիկոսը, «Երկու կաթողիկոսներու կողմն հառաքանութիւն ծրագրված՝ անշուշտ թղթակցութիւններ և հասկացողութեան մը գալն հետո»:

Դրիմեցի Մարտիրոս վարդապետի վկայութեամբ Ներսէսին ժողովին ներկա էին Փիլիպոս և Ներսէս կաթողիկոսները, Ներսէսին Աստվածատուր պատրիարքը (1645—1664 թ. թ.), որը ժամանակի նշանավոր դեմքերից էր և աշխատում էր հաշտարար դեր խաղալ հայ ժողովրդի եկեղեցական միասնութիւնը չլատող երկպառակութիւնների մեջ, 7 եպիսկոպոսներ, 18 վար-

դապետներ, 35 կրոնավորներ, ժողովին ներկա են եղել նաև բայց ձայն չեն ունեցել: 60 քահանաներ, մեծ թվով ուխտավորներ, մոտավորապէս 1000 հոգի:

Ներսէսին ժողովի գումարման, ժողովի օրակարգի, տեղութիւն և այլ կարևոր հարցերի մասին սպառիչ տեղեկութիւններ չունենք: Կարևորը, սակայն, Ներսէսին ժողովի նշանակութիւնն է: Ժողովի զխավոր նպատակը եղել է օսել և միաբանութիւն երկուց Աթոռոց կաթողիկոսութեանն էջմիածնի և Սոսիւ,— ինչպէս վկայում է հայրենասեր պատմիչ Առաքել Դավրիժեցին (Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 250):

Դավրիժեցին, որ Ներսէսին ժողովի մասին խոսող առաջին պատմագիրն է և որն անձամբ ճանաչում էր երկու կաթողիկոսներին, գրում է միայն ժողովի եզրակացութեանց մասին, որ «հանուր ժողովն գումարեալ եկեղեցականք և աշխարհականք... միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս հայրապետին Փիլիպոսի և հաստատեցին կանոնական քան իրենց տասան զուխ, զորս համառօտիւ նշանակեցից աստէն, որոց առաջինն:

1. Յուրաքանչյուր կաթողիկոսական Աթոռ յուր վիճակալինը եպիսկոպոս ձեռնադրե, յուր վիճակներուն համար: Եթե յուր վիճակալին չեղողը ձեռնադրե, յուր վիճակին մեջ տեղավորե, և մեկուն ձեռնադրածը մյուս Աթոռին մեջ անընդունելի լիցի: Այս կանոնն է, որուն զորութեամբ Կիլիկիա ձեռնադրված եպիսկոպոսները էջմիածնի վիճակներուն մեջ վարչական պաշտոնի չեն կոչվիր, բայց եթե էջմիածնի Աթոռին պաշտոնապէս միաբանելով:

2. Մեկ Աթոռն ձեռնադրվածը մյուս Աթոռին դիմել մի՛ համաձայնեցի:

3. Առանց ժողովուրդի խնդրանքին և առանց վկայականի մի՛ ձեռնադրեցի ու յեպիսկոպոսութիւն:

4. Որեւէ պատճառով եպիսկոպոս մը ուրիշ եպիսկոպոսի մը վիճակը մի՛ յափշտակեցէ:

5. Մեկ վիճակի վրա երկու եպիսկոպոս կամ երկու առաջնորդ չլլա, բայց թէ կարի մեծ ինչ պատճառ ի մէջ գայցէ: Հետ այսմ թեմակալի մը կենդանութեան ուրիշ թեմակալ պիտի չձեռնադրվի, բայց եթե առաջինը հեռանա, կամ ծանր պատճառով մը հեռացվի:

6. Եպիսկոպոսներ իրենց վիճակալինը չեղողը ձեռնադրեն, և եթե համարձակին, լուծցին ինքն և իւր ձեռնադրեալն, որ է ըսել եպիսկոպոսը թեմակալութենէն զրկվի և ձեռնադրված քահանան ղարդղանա քահանայութիւն ընել: Այդ գլուխը այնպէս պետք

է իմանալ, որ եպիսկոպոսը ուրիշ վիճակի համար քահանա շնորհաբեր, և եթե ոչ վիճակայինը ձեռնադրեն՝ իր վիճակին մեջ տեղավորեն:

7. Եպիսկոպոս մը, որ առանց կաթողիկոսի հրամանին կաշառո՛ւ և այլազգեաց բռնութեամբ վիճակի մը տիրանա, լուծցի ի կարգէն:

8. Մեծ վարդապետը ուրիշ իշխանութիւն վարդապետութեան յատ, և թե նվիրյալը ըլլալ կատարեալ ուսմամբ և առաքինութեամբ և հասակաւ աստուածային երկիւղի և վկայեալ յամենեցունց: Հայտնի է, թե վարդապետութիւն տալու իշխանութիւնը օրինոք մեծ վարդապետներունն էր, և ոչ եպիսկոպոսներուն, զի ուսումնական աստիճանն էր և ոչ եկեղեցական ձեռնադրութիւն: Այժմայն սովորութեամբ կապահանջվի, որ տվողը եպիսկոպոս և ծայրագոյն վարդապետ եղած ըլլա միանգամայն, իսկ ընծայալին համար դիտելի են շորս պայմաններ. ուսումն, առաքինութիւն, տարիք և օրինավոր վկայութիւն:

Երուսաղեմի ժողովի 9—13-րդ կանոնները խոստում են եկեղեցական քարեկարգական այլ հարցերի մասին ընդհանրապես և կապ չունեն եպիսկոպոսական ձեռնադրութեան և Աթոռների իրավասութեան վերաբերյալ հարցերի հետ:

Ինչպես երևում է Դավրիժեցու վկայութիւնից, Երուսաղեմի ժողովի որոշումները կամ կանոնագիրը ստորագրում, վավերացնում են երկու կաթողիկոսները, Աստվածատուր պատրիարքը, ժողովում ներկա վարդապետներն ու եպիսկոպոսները, ինչպես նաև իշխաններ և տանում են իրենց հետ, որպես պատմական, կանոնական մեծ փաստաթուղթ, նշանով առաջնորդվելու համար հետագայում: Երուսաղեմի ժողովը սկսեց խաղաղութեան մեջ և վերջացավ խաղաղութեամբ: 1651 թվականի Զատիկը տոնվեց Երուսաղեմում համազգային շուքով և համահայկական կրկին ցնծութեամբ:

Երուսաղեմի ժողովից հետո երկու կաթողիկոսները միմյանցից բաժանվեցին սիրով և հարգանքով, ազգային և եկեղեցական մեծ նշանակութիւն ունեցող հարցերը հաջողութեամբ և հօգուտ եկեղեցուն և ժողովրդին լուծված տեսնելու արդար միութեամբ: Փիլիպոս Աղբակեցին մեկնեց Կոստանդնուպոլիս, իսկ ներսես Սեբաստացին վերադարձավ իր Աթոռը և վախճանվեց 1654 թվականին խաղաղասեր, հոգեսեր և ազնիվ կաթողիկոսի բարի հիշատակով:

Պատմական շատ քիչ տեղեկութիւններ ունենք ներսեսի հաջորդ Սսի Թորոս Բ (1654—1657 թ. թ.) թառաքինի և սրբակնեցադո կաթողիկոսի, ճշայն ժողովուրդի ազ-

գային ազատագրութեան տեսիլով աշխուշ շոուն զարձուցած և լատինասեր կուսակցութեան գործի հիշատակ վաստակած և իր անխոհեմ ու վտանգավոր քայլերուն պատճառով: Կիլիկիայում մի շարք հակաթոռների ստեղծելու պատճառ զարձած հալատուր Գ Գաղատացու (1657—1674 թ. թ.) մասին:

1663 թվին Սսի հալատուր Գ Գաղատացի կաթողիկոսի համաձայնութեամբ և օմանդակութեամբ Եղիազար Անթեպի եպիսկոպոսը փորձում է Թուրքիայի տիրապետութեան տակ գտնվող ամբողջ շրջանների համար Երուսաղեմում ստեղծել էջմիածնից անկախ հակաթոռ կաթողիկոսութիւն՝ «Կիլիկիոյ աթոռին լղիպելով և անոր թողով որչափ ինչ արգեն անոր կպատկաներ» (Օրմ. Ազգ. Բ 2651):

1664 թվին Հալեպի Ս. Փառասնից Մանկանց եկեղեցում Եղիազար կաթողիկոս է ձեռնադրվում հալատուր Գ-ի ձեռքով և օրհնութեան կոնդակ է ուղարկում բոլոր արևմտահայ թեմերին, հալատուր թեմերից դուրս: Անթեպից հակաթոռութիւնը առաջ է բերում բողոքներ և բուռն վեճ, կրկնապատկութիւն, ժողովուրդը բաժանվում է երկուսի՝ «էջմիածնական» կամ «Հալոյսն» (Հակոբ Զուղայեցու անունով) և «Եղիազարյան» կուսակցութիւնների: Սկսվում է նոր պայքարը: Առաջինը Անթեպից: Կոստանդնուպոլիսի զեմ ծառանում է Փիլիպոս Աղբակեցու հաջորդ Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցին (1655—1680 թ. թ.): Եկեղեցականութեան և ժողովրդի ջախջախի մեծամասնութեան համակրանքը Ս. էջմիածնի կողմն էր, որովհետև բոլորը համոզվել էին, որ Եղիազարի հակաթոռութիւնը վտանգավոր քայլ էր, մեծապիս վնասակար հայ ժողովրդի շահերին, որը կարող էր ծանր հետևանքներ ունենալ բովանդակ հայ ժողովրդի համար:

Այդ վտանգը խորապես գիտակցում էին մասնավորաբար Մայր Աթոռը և ժամանակի խելացի ու հայրենասեր գործիչները: Մայր Աթոռը վճռում է ամեն զեմով առաջն առնել ազգային մեծ աղետի էջմիածնում հավաքվում են բամենայն առաջնորդք վանօրէից, եպիսկոպոսներ և վարդապետք... աշխարհական արք երեւելիք և մեծ հանդիսավորութեամբ Զուղայեցին ճանապարհվում է Կոստանդնուպոլիս:

Զուղայեցին հասնում է Կոստանդնուպոլիս. թեկին ի տեսութիւն նորա բազումք ի մեծամեծացն Հայոց և թէպէտ գրեթէ ամենեքին նոքա ի կողմն Եղիազարու էին, բայց յորժամ տեսին զբաղցր բարս և զառաքնազարդ քաղաքավարութիւն նորա, որում չէին

մանավանդ որ բոլոր տաճկահայոց կաթողիկոս ճանչցվել կուզեր, պնդելով, թե «Իճէ վայել է ունել զայս երկիր» ուր բնդ իշխանութեանս օսմանցուց է, որով և ես և Աթոռս իմ կամեմ: Սակայն Կոստանդնուպոլսոյ մեծածնները իրեն քաջախելութիւն չտվին և մինչև իսկ արքունական հրովարտակով հանին Միքայելը ի Բաղաթէն և ի վիճակէն էլ՝ «Իրածնի» (Օրմ. Աղղ. Բ 3070):

Գաբրիէլ Աջապահյանը (1757—1770 թ. թ.) Աջապահ Տ. Հուսիկ քահանայի երրորդ կաթողիկոս զավակը՝ պաշտոնավարել է 12 տարի և նմանապես զբաղվել է Սասի Աթոռի վերաշինութեան և պաշտառութեան գործերով և «հետու մնաց այն ձգտումներն զորս ոմեհ. ցած էր Միքայելը»:

Սսի Աջապահյան կաթողիկոսների մեջ հայտնի է Եփրեմ Ա (1771—1784 թ. թ.), նա գրել է իր կաթողիկոսութեան պատմությունը, իսկ կիսատ է թողել Աջապահյան տոհմի ամբողջական պատմության գրությունը:

Մանրամասն տեղեկություններ չունենք Թեոդորոս Աջապահյանի (1784—1796 թ. թ.) մասին, որի ձեռնադրությունը կատարվել է Կոստանդնուպոլսում: Իր հայրենաշին գործունեությամբ և եկեղեցեանվեր շինարարությամբ Աջապահյան կաթողիկոսների մեջ յուրահատուկ տեղ է գրավում Կիրակոս Ա (1797—1822 թ. թ.), որը կոչվում է մեծ, «առաքինազարդ, սրբակրօն երիտասարդ հոգեւորական, գեղեցիկ փառահեղ զեմքով»: Կիրակոս 25 տարի ծավալում է «անդուլ և անշեղ զործունեություն մը» և անմոռանալի հիշատակ է թողել իր ժողովրդի սրտում և իր Աթոռում որպես մարդ, շինարար և զործունյա կաթողիկոս և վայելչագիր գրիչ: «Կիրակոս Ա Աջապահյանը եղած է մեծ իր կյանքի բոլոր գործունեության մեջ, նույնիսկ երբ մահվան բաժակ տվին իր ձեռքը» (ԱԱԿ Պատմ. 558):

Հիշատակության արժանի որևէ գործ չի կատարել Եփրեմ Բ Աջապահյանը (1823—1831 թ. թ.), թեև եղել է պատրաստված անձ մը, հարմար իր պաշտոնի մեծությունը:

Տեկր աստվածասեր, յանդուգն և համարձակախօս էր Միքայիլ Բ Աջապահյանը (1832—1855 թ. թ.), որ 100-ամյա խոր ծերության մեջ է մահանում խաղաղությամբ: Բայց նրա 23 տարվա պաշտոնավարությունից մնալուն արժեքներ կայացնող գործեր չեն արձանագրված, թեև նրան «հուժկու զեմք» համարում է Բարդես կաթողիկոսը: Ընդհարումներ է ունենում Կոստանդնուպոլսոյ Պատրիարքարանի հետ եպիսկոպոսական ձեռնարկությանց և վանական ու վարչական այլ հարցերի շուրջ, և սպա Մսինետ կգրեն, որ ասկի հետ եպիսկոպոս Նպիտի ձեռնադրի առանց գիտություն Պատրիարքարանի հոգևոր ժողովույն և պատրիարքին, բայց 1851 թվակա-

նին «վերստին կսկսի յուր նախընթաց, արարքները ի վնաս Սսի վանուց և վիճակաց Կիլիկիո և ի նախատինս Ազգին և եկեղեցւոյն Հայաստանայց»:

Պատրիարքարանը, նրիմյանի կազմատեղեկագրի վրա, 1852 թվականի հոկտեմբերի միջինին հանդիմանական գիր է ուղարկում Միքայելին՝ նրան անվանելով «վանահայր վիճակավոր Սսոս»՝ որի «ազգային սահմանադրութեանց և բարենպաստակ կանոնաց անհնադանդությունը արգեն հայտնի եղած է»:

«Ազգային ժողովո հանձնությամբ, սաստիկ հանդիմանական գրեւ գրվեցան կաթողիկոսին» (Իզմիրլյան 480—500):

Աջապահյան տոհմի վերջին կաթողիկոսն է Կիրակոս Բ (1855—1865 թ. թ.): Ազգային Սահմանադրության հրատարակումը և Ջնթութունի ապստամբությունը պատահում են Կիրակոս Բ-ի օրով: «Ազգային և կառավարական գործերու մեջ իր ցույց տված անշահասեր և անալառ ջանքը», Կիրակոս Բ շահում է կառավարության վստահությունը և ժողովրդի հարգանքը և «արժեքավոր անձնավորություն մը կաներկայանա պատմության մեջ» (ԱԱԿ Պատմ. 657—658): Կիրակոս Բ-ի մահով շիջում է Աջապահյանների տոհմը և Կիլիկիոյ կաթողիկոսների պատմության մեջ սկսվում է մի նոր շրջան:

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանը Կիրակոս Բ-ի մահից հետո չի քաջալերում Սսի նոր կաթողիկոսի ընտրության հարցում Աջապահյանների ժառանգական գրությունը և աշխատում է Ազգային Սահմանադրության ժողովրդական սկզբունքներով լրտրել տալ մի արժանավորի:

1860-ական թվականներին սկսյալ Թուրքիայում հայազգային-եկեղեցական կյանքը դեկավարվում էր ըստ Ազգային Սահմանադրության: Ազգն ու եկեղեցին խանդավառ ին Ազգային Սահմանադրությամբ, որով վերջ էր տրվում ազգային-եկեղեցական տիրող կամայականությունների և բոլորի ցանկությունն էր, որ ազգային-եկեղեցական կյանքում իշխեն օրենքն ու իրավունքը, պարտքն ու սպասուկանությունը:

1836 թվականից սկսյալ արեւելահայերի ազգային եկեղեցական կյանքը ղեկավարվում էր Պոլսի ժեմիայով, իսկ արեւմտահայ ազգային եկեղեցական կյանքը՝ Ազգային Սահմանադրությամբ (1863 թ.): Ազգային Սահմանադրության մեջ չկար սակայն ոչ մեկ հոգված Կիլիկիոյ կաթողիկոսության մասին: Ինչպետք էր անել Հայ եկեղեցու ավանդության և ոգու համապատասխան կարգ ու կանոնի ինթարկելու համար Կիլիկիոյ կաթողիկոսների ընտրության եղանակը և իրավասության սահմանները:

(Շարունակելի)



ՍՍՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿ. ՏԵՐ-ԸՈՎՀԱՆԵՒՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԲՇԵՇՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐԻ ՏԵՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հին և նոր տոմարների տարբերությունը որոշ շփոթության մեջ է գցում գործածողներին, սույն համառոտակի հոգվածով ցանկանում հմ մի շարք ծանոթություններ տալ այդ մասին:

Եկեղեցական բոլոր շարժական տոները կախում ունեն Ջատիկից, իսկ Ջատիկը՝ զատկական լուսնի ծնունդից, որի ավագ լրումը հանդիպում է զարնան գիշերահավասարին:

325 թվականին, Նիկիո տիեզերական ժողովը որոշել է Ջատիկի տոները կատարել:

1) Գարնանային գիշերահավասարից կամ մարտի լուսնի լրումից հետո պատահող առաջին կիրակի օրը:

2) Եթե մարտի լուսնի լրումը մարտի 21-ից առաջ պատահի, Ջատիկը տոնել ապրիլի լուսնի լրումից հետո պատահող առաջին կիրակի օրը:

3) Եթե մարտի կամ ապրիլի լուսնի լրումը պատահի ուրաթ, շաբաթ կամ կիրակի օրը, Ջատիկը տոնել հետևյալ կիրակին:

Նիկիո ժողովի այս որոշումները կայացվել են, որպեսզի քրիստոնեական Ջատիկի տոներ հրեական Պասեքի (Ջատիկ) տոնի հետ լշփոթվի և լտոնվի: Մարտի 8-ից մինչև ապրիլի 5-ը ծնած լուսինը կոչվում է Ջատկական լուսին: Երբ լուսնի ծնունդը պատահի մարտի 8-ին, ապա լրումը կլինի մարտի 21-ին, հետևյալ օրը՝ մարտի 22-ին կտոնվի Ջատիկը, իսկ երբ ծնունդը պատահի ապրիլի 5-ին, լուսնի լրումը կլինի ապրիլի 18-ին և Ջատիկը կտոնվի ապրիլի 25-ին:

Ուրեմն Ջատիկի տոներ 35 օրվա շարժականություն ունի, սկսած մարտի 22-ից մինչև ապրիլի 25-ը:

Այստեղ մեծ դեր է խաղում զարնանային գիշերահավասարը մարտի 21-ը:

Որևէ տարվա Ջատիկը և Ջատիկ հետ կապված տոները գտնելու համար անհրաժեշտ է իմանալ տվյալ տարվա՝

1) Յոթներյակը կամ կիրակագիրը:

2) Իննետասներյակը կամ ոսկեգիրը:

3) Վերագիրը:

4) Տարեգիրը:

Այս տվյալներով հաշվված և կազմված արեգակնային և լուսնական շրջաններով կարելի է կազմել որևէ տարվա օրացույցը:

ա) Յոթներյակ.— Յոթներյակը ցույց է տալիս, թե տարվա առաջին օրը ինչ օր է. Տարվա մեջ եղած կիրակիները այդ պատճառով էլ կոչվում են կիրակագիր:

Յոթներյակով գտնում ենք տարեգիրը, Ջատիկը, միջոց ուտիքները և ամսամուտը:

Նոր տոմարով յոթներյակները ճեղագրված կարգով են իրենց շրջանը բոլորում, այսինքն Ա-ից է, է-ից Ա են գնում:

Հասարակ տարում գործ է ածվում մի տառ, իսկ նահանջ տարում՝ երկու տառ միանգամից, Առաջին տառը հունվար և փետրվար ամիսների համար է, իսկ երկրորդը մարտից մինչև դեկտեմբերի վերջը:

Նոր տոմարով յոթներյակները գտնելու համար, անհրաժեշտ է գտնել արեգակնային շրջանը:

Յոթներյակները գտնելու համար մի քանի ձևեր կան, որոնցից մեկն է հետևյալը: Ցուցակի թվերը ցույց են տալիս արեգակնային շրջանը, իսկ տառերը՝ յոթներյակները: Ձույզ տառերը նահանջ տարիների համար են:

1 Ե	2 Դ	3 Պ	4 Ր	5 ԱԷ	6 Զ	7 Ծ
8 Դ	9 ԴՐ	10 Ա	11 Է	12 Զ	13 ԾԴ	14 Պ
15 Ր	16 Ա	17 ԷԶ	18 Ծ	19 Պ	20 Պ	21 ՐԱ
22 Է	23 Զ	24 Ծ	25 ՊԴ	26 Ր	27 Ա	28 Է

Այս աղյուսակից օգտվելու համար պետք է պահանջված տարվա արեգակնային շրջանը գտնել, իսկ որն է տարվա արեգակնային շրջանը գտնելու համար, պետք է ուզած թվականի վրա ավելացնել 9 և գումարը բաժանել 28-ով, մնացորդը ցույց կտա ուզած տարվա արեգակնային շրջանը:

Օրինակ՝ գտնել 1960 թվականի արեգակնային շրջանը:
 $1960 + 9 = 1969, 28 = 70$, մնացորդ՝ 9, վերին աղյուսակի 9-րդ թվի տակ դրված է 98, Ուրեմն 1960 թվականի յոթներյակն է 98:

բ) ԻճԵՆՏԱՍԵՆՐՅԱԿ կամ ռսկեգիր.— լուսնի 19 շրջանը կոչվում է լուսնի շրջան, իսկ այն թվերը, որոնք ցույց են տալիս այդ շրջանի տարիները՝ կոչվում են ԻճԵՆՏԱՍԵՆՐՅԱԿ:

Իննետասներյակը գտնելու համար, պահանջված թվականին պետք է ավելացնել 1 և բաժանել 18-ով, Բաժանման մնացորդը ցույց է տալիս իննետասներյակի շրջանը, իսկ քանորդը՝ Քրիստոսի ծնունդից մինչև պահանջված թվականը քանի շրջան անցած լինելը, ըթն մնացորդ չտա, նշանակում է իննետասներյակի վերջին շրջանն է:

Օրինակ՝ գտնել 1960 թվականի իննետասներյակը:

$1960 + 1 = 1961, 18 = 103$ և մնացորդ 4, որը և 1960 թվականի իննետասներյակն է: Պահանջված թվականին 1 ավելացնելու պատճառն այն է, որ Քրիստոսի առաջին տարին իննետասներյակի առաջին տարին է: Իննետասներյակի շրջանի թվերը իրար հետևից գնում են հաջորդաբար և շրջանը լրացնելուց հետո նորից սկսվում է 1-ից:

գ) Վերադիր.— Արեգակնային (365 օր և 6 ժամ) և լուսնական (354 օր և 8 ժամ) տարիների տարբերությունը որոշողն է վերադիրը: Վերադիրը ցույց է տալիս տարվա հունվարի 1-ը լուսնի քաներորդ օրը լինելը:

Արեգակնային տարին ունի 365 օր (ժամերը չհաշված), լուսնական տարին՝ 354 օր (ժամերը չհաշված): Տարբերությունը, որը 11 օր է, կոչվում է վերադիր: Վերադիրը ավելացնելով լուսնական 354 օրերի վրա, հավասարեցնում ենք արեգակնային տարվա հետ ($354 + 11 = 365$ օր), ևրեք տարվա ընթացքում զոյացած տարբերությունը կադմում է $11 \times 3 = 33$ օր: Սրանից հանելով 30 օրը, ավելացնում ենք լուսնական տարվան, իսկ մնացորդ 3-ը թողնում վերադիր հետևյալ տարվան, Հաջորդ տարում դարձյալ

ավելացնում ենք 11 օր և այսպես շարունակաբար: Վերադիրների շրջանն էլ իննետասներյակի նման 19 է:

Վերադիր գտնելու մի քանի ձևեր կան, այստեղ շատ հեշտ կարելի է գտնել երեք դարաշրջանների որևէ տարվա վերադիրը:

ԻճԵՆՏԱՍԵՆՐՅԱԿ	1	2	3	4	5	6	7	8	9	10
Վերադիր	29	10	31	2	13	24	5	16	27	8
ԻճԵՆՏԱՍԵՆՐՅԱԿ	11	12	13	14	15	16	17	18	19	—
Վերադիր	19	(30)	11	22	3	14	25	6	17	—

Օրինակ՝ գտնել 1960 թվականի վերադիրը, իննետասներյակն է 4, Ցուցակին ճախելով 4 իննետասներյակի տակ դրված է թիվը, որը 1960 թվականի վերադիրն է:

դ) Տարեգիր.— Տարեգիրը ցույց է տալիս, թե Ջատիկը քանի՝ օրով հնու է գարնան գիշերահամասարից (մարտի 21-ից): Տարեգիրը գտնելու համար պետք է իմանալ Ջատիկի օրը կամ հակառակը՝ տարեգիրը:

Յուրաքանչյուր տարվա Ջատիկը գտնելու համար անպայման պետք է գտնել Ջատիկան լուսնի ծնունդը և լրումը (մարտ-ապրիլ ամիսների ընթացքում), իսկ այդ գտնելու համար անհրաժեշտ է գտնել հունվար ամսի լուսնի ծննդյան օրը:

Եկեղեցական տարվա լուսնի ծնունդը հանդիպում է հունվար ամսվա մեջ, իսկ որևէ տարվա հունվարի լուսնի ծնունդը գրանցելու համար պետք է նույն տարվա վերադիրը հանել հունվարի 31-ից, մնացորդը միշտ ցույց կտա լուսնի ծննդյան օրը: Հունվարի լուսնի ծննդյան օրը գտնելուց հետո, մյուս ամիսների լուսնի ծնունդը գտնելը հեշտանում է, այսինքն հունվարի լուսնի ծննդյան օրվա վրա 29 կամ 30 օր ավելաց-

* Այս վերջին 17-ին, որը 18-րդ շրջանի վերջին տարին է, հաջորդաբար, այն է 18-րդ շրջանի առաջին տարին, փոխանակ 11 ավելացնելու, ավելացնում ենք 12, Այսպես, 19 իննետասներյակի տակ նշանակված 17 վերադիրն 17 + 12 = 29, որը կլինի երկրորդ շրջանի 1 իննետասներյակի տակ դրված 29 վերադիրը:

նելով, կարելի է գտնել մյուս ամիսների լուսնի ծնունդը:

Օրինակ՝ 1960 թվականի վերագիրն է 21-ը, 31-ը 2-ը 29-ը: Հետևաբար լուսնվարի 28-ին լուսնի ծնունդն է:

Շարժական տոների և միջոցների սահմանը ցույց տվողն է տարեգիրը: Տարեգիրների համար որոշված են հայկական այբուբենի 36 գրերը, որոնցից ամեն մեկը մի տարվա համար է: Հասարակ տարին ունի մի տարեգիր, իսկ նահանջը՝ երկու, որը գործ է ածվում ճշտապես կերպով, փոխանակ ՋԻ—ԹՃ, որից առաջինը հունվար և փետրվար ամիսների համար է, իսկ մյուսը՝ մինչև տարվա վերջը, որովհետև նահանջ տարվա փետրվար ամիսը ունի 28-ի փոխարեն 29 օր:

Երբ մեր այբուբենի Ա-ն է տարեգիրը, Ջատիկը մարտի 22-ին է (դրանից առաջ Ջատիկ չի կարող պատահել), իսկ երբ տարեգիրն է Փ, ապրիլի 25-ին (դրանից հետո Ջատիկ չի տոնվի):

Հայկական այբուբենի տարեգիրներից միայն Ք-ն է, որ հասարակ տարիներում բոլորովին չի գործածվում, այլ միայն նահանջ տարիներում և միշտ Փ տարեգրի հետ: Ք տարեգիրը միակն է, որ երկամսյա կյանք ունի (հունվար և փետրվար):

Փանի որ երկամսյա Ք տարեգիրը հասարակ ամբողջ տարին համար պիտանի չէ, ուստի նրա փոխարեն գործ է ածվում ութ օրով պակաս Ս տարեգիրը, որովհետև Ս և Ք տարեգիրների հունվարի 1-ը սկսվում է հինգշաբթի օրով:

Եթե Ք տարեգիրը փոխանակ 2 ամսվա գործածենք ամբողջ տարին, այն ժամանակ Ջատիկը կընկնի ապրիլի 26-ին, որը հակասակ է Նիկիո տիեզերական ժողովի որոշման:

Հին և նոր տոմարի տարբերությունը իմանալու համար պետք է աչքի առաջ ունենալ տարեգիրները և գիշերահավասարը (մարտի 21-ը):

Տարեգիրը ցույց է տալիս, թե Ջատիկը քանի օր հեռու է մարտի 21-ից (գարնանային գիշերահավասարից):

Նոր տոմարով 1960 թվականի տարեգիրներն են ՌՃ (Ռ-ն հունվար և փետրվար ամիսների համար, իսկ Ջ-ն մարտի 1-ից մինչև տարվա վերջը):

Ջ տարեգիրը մեր այբուբենում ընդունվել է 27-րդ տեղը: Մարտի գիշերահավասար՝ 21+27=48, Այս 48-ից հանել մարտի 31 օրը՝ 48-31=17, Ուրեմն ապրիլի 17-ին Ջատիկ է: Ջատիկան լուսնի ծնունդը կլինի մարտի 29-ին, իսկ ավագ լրումը՝ ապրիլի 12-ին:

Հին տոմարով տարեգիրն է ԿՍ (Կ-ը հունվար և փետրվար ամիսներին, իսկ Ս-ն մարտի 1-ից): Ժ տարեգիրը մեր այբուբենում ընդունվել է 14-րդ տեղը: Մարտ 21+14=35, 35-ից հանել մարտի 31 օրը՝ 35-31=4, Ուրեմն ապրիլի 4-ին Ջատիկ է, հին ամսահաշվով: Այս ապրիլի 4-ին, նոր ամսահաշվով, ավելացնենք 13 օրը, կլինի 17: Ուրեմն 1960 թվականին թե՛ հին և թե՛ նոր տոմարով Ջատիկը կտոնվի ապրիլի 17-ին:

Հին տոմարով Ջատիկան լուսնի ծնունդը կլինի մարտի 15-ին, իսկ ավագ լրումը՝ մարտի 28-ին:

Եկեղեցական տոները կատարելիս պետք է աչքի առաջ ունենալ միջոց ուտիվները:

Միջոց ուտիքը նոր տոմարով Մենդյան տոնից հետո 28 օր է, հին տոմարով՝ 20 օր:

Նոր տոմարով Առաջավորաց բարեկենդանը (Ս. Սարգսի շաբաթը) փետրվարի 7-ին է, հին տոմարով՝ հունվարի 25-ին: Եթե այս 25-ին ավելացնենք նոր և հին ամսահաշվի 13 օրվա տարբերությունը, կլինի 25+13=38, 38-ից հանած հունվարի 31 օրը, կմնա 7: Ուրեմն թե՛ նոր և թե՛ հին տոմարով Առաջավորաց բարեկենդանը կլինի փետրվարի 7-ին:

Այնուհետև թե՛ նոր և թե՛ հին տոմարները հաջորդում են իրար մինչև օգոստոսի 5-ը: Նոր տոմարով շաբաթ, օգոստոսի 6-ին տոնվում է Ենփեսոսի Ս. Ժողովոյն 300 հայրապետաց տոնը և հետևյալ օրը, օգոստոսի 7-ը լինում է Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոցը:

Հին տոմարով օգոստոսի 8-ը կլինի Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոցը: Նոր ամսահաշվով՝ 8+13=21 և այդ օրը կլինի Ս. Աստուածածնի բարեկանդանը: Պատճառը միջոց ուտիք օրերի տարբերությունն է:

Մի քանի խոսք ևս ասենք հին և նոր տոմարների 13 օրվա տարբերության մասին:

Արևի և լուսնի շրջանառության ընթացքի մեջ մի քանի բուսական տարբերության պատճառով դարերի ընթացքում կուտակված տարբերությունի՝ այնքան շատացավ, որ կազմեց օրեր և դարևանային գիշերահավասարից հետագալ: Որպեսզի դարևանային գիշերահավասարը հավասարվի, Հռոմի Գրիգոր ԺԳ պապը 1582 թվականին հրամայեց հոկտեմբերի 4-ից հետո փոխանակ 5-ը հաշվելու, հաշվել 15, 16, 17 և այլն: Այն ժամանակ տարբերությունը 10 օր էր, իսկ այժմ դարձել է 13 օր: Հռոմի պապի այդ կարգադրությունը ընդունեցին եվրոպական ազգերը, իսկ արևելյան ազգերը մնացին հին ամսահաշվի վրա:

Շատերը հին և նոր տոմարների տարբերությունը 13 օրվա մեջ են գտնում: 13 օրվա

տաքերութիւնը ամսահաշվի կամ օրահաշ-
վի մէջ է։ Որինակ՝ այսօր նոր տոմարով
մարտի 15-ն է. հնով 13 օր հանած, կլինի
մարտի 2-ը։ Կամ եթէ այսօր նոր տոմարով
մարտի 25-ն է, հնով կլինի 13 օր պակաս՝
25—12=13 մարտի։

Այժմ ընդունված է նոր տոմարը Եկեղե-
ցական տոները միայն կատարվում են հին
տոմարով։ Երջանկահիշատակ Գևորգ Ե կա-
թողիկոսի օրով Հայ Եկեղեցին անցավ նոր
տոմարի։ Պաղեստինում, Վրաստանում,

Ռուսաստանում Զատիկը տոնում են հին տո-
մարում։

Այնուամենայնիվ, որոշ դժվարութիւննե-
րից խուսափելու և անպատեհութեանց
առաջքը առնելու համար, ավելի նպատա-
կահարմար կլինէր որդեգրել նոր տոմարի
սիստեմը, միայն Երուսաղեմի Պատրիար-
քութեան շրջանակում պահելով հին տոմարի
գործածութիւնը, հասկանալի պատճառնե-
րով։





ԳՐԱՑ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՑԱՆ

(1837—1901)



Րապարակագիր Մատթեոս Մամուր-
յանը ծնվել է 1837 թվին Զմյուռ-
նիայում, իր ուսումն ստացել է
Մուրադ-Ռաֆայելյան վարժարա-
նում 1845—1849 թվերին սնվելով ազա-
տական և հայրենասիրական գաղափարնե-
րով, նրա մտերիմ դասընկերներից է եղել
Մերենցը, Ուսումն ավարտելուց հետո գնում
է Կոստանդնուպոլիս, ուր նախ լինում է ու-
սուցիչ, հետո Ազգային Պատրիարքարանում
վարում է դիվանագիտի պաշտոն 1861—1865
թվերին և դառնում է մեր դիվանագիտական
լեզվի ստեղծիչը, 1865 թվին հրատարակում
է իր գրական առաջին գործը, որ է Գյոթիի
վերթերի թարգմանությունը Այնուհետև հրա-
վիրվում է հասգյուղի ներսիսյան վարժարա-
նի տեսուչ, Անցնելով իր հայրենի քաղաքը
Զմյուռնիա, 1867 թվից սկսած շարունակ վա-
րում է նույն քաղաքի Մեսրոպյան և Հոփի-
սիմյան դպրոցների տեսչի և ուսուցչի պաշ-
տոնը, Այստեղ շարունակում է իր գրական ըն-
դարձակ գործունեությունը, իրար հետևից
հրատարակելով մերթ ինքնագիր գործեր,
մերթ թարգմանություններ, մերթ զանազան
դասագրքեր:

Մամուրյանը 1871 թվին հիմնեց «Արևել-
յան մամուլ» ամսաթերթը, որի թե՛ խմբա-
գիրը և թե՛ գլխավոր աշխատակիցն էր, Այս-
տեղ հրատարակեց նա իր «Հայկական նա-
մակահիս-ն», «Մե Լեռնի մարդը» և շատ ու-
րիշ գրվածքներ: Թերթի ուղղությունը ազա-
տական էր: Ազգի, դպրոցի և Օկնդեցու շա-
հերի պաշտպան Մամուրյանը ձայն էր բարձ-
րացնում ամեն անգամ, երբ տեսնում էր որևէ
ոտնձգություն դեպի այս հաստատություննե-
րը: Անխնա քննադատում էր Սակայն թեր-
թը, Ֆախ կենտրոնից հեռու լինելու և երկ-
րորդ ուշ-ուշ երևալու պատճառով չկարողա-
ցավ ժողովրդական կամ ընդհանուր ազգա-

լին բնավորություն ստանալ և հայ մտքի ու
հանրային կարծիքի վրա ազդեցություն ունե-
նալ: Հրատարակությունից մի քանի տարի
հետո փակվեց, մինչև որ 1878—1880 թվերին
Կոստանդնուպոլիսից երիտասարդները ձեռք
մեկնեցին և թերթը նորից ոտքի կանգնեց-
րին: Այն օրից մինչև Մամուրյանի մահը
թերթը մի կերպ պահեց իր գոյությունը, իսկ
Մամուրյանի մահից հետո շարունակվեց նրա
որդու խմբագրությամբ:

Երկարատև ուսուցչական պաշտոնից հետո-
անձնական տկարության պատճառով Մա-
մուրյանը 1899 թվին քաշվեց ասպարեզից:
Հայ հասարակությունը, պատվելով իր վաս-
տակավոր գրողին, նույն թվին տոնեց նրա
հոգեւյանը: Մամուրյանը արեւմտահայ գրող-
ներից առաջինը եղավ, որ արժանացավ այդ
պատվին:

Մամուրյանի նշանակությունը շատ մեծ է
հայ ժողովրդի կրթության գործում: Մի կողմ
թողնելով նրա բազմամյա ուսուցչական գոր-
ծունեությունը, երբ նա ամբողջ սերունդներ
է կրթել և բազմաթիվ ուսյալ աշակերտներ է
հասցրել, նա գործել է հայ աշխարհարար
լեզվի մշակության և այդ լեզուն հայ ժողո-
վրդի լայն խավերի մեջ տարածելու համար:
Այս կողմից նրա գործունեությունն անգնա-
հատելի է:

Այն ժամանակ, երբ Մամուրյանը սկսեց
իր գրական գործունեությունը, աշխարհաբա-
րը արդեն բավականին կազմակերպված լե-
զու էր: Բայց ո՞ւմ սեփականություն էր նա:
Մի փոքրիկ ուսումնական խմբակի, որ գրում
ու խոսում էր նույն լեզվով, Հասարակության
ամենալայն խավերը շատ աննշան լսվում
օգտվում էին նրանից, նրանք խոսում էին
կամ թուրքերեն և կամ որևէ բարբառ: Գրա-
կան լեզուն նրանց համար դեռ գրաբար էր:
Ժողովրդական պահանջին բավարարություն

տալու համար շուտով երևան եկավ հայտատա թուրքերեն գրականությունը, որը հետզհետե ընդարձակվեց նախապես հրատարակվում էին հայտարարություններ, փոքրիկ տետրակներ, աշուղական կամ ժողովրդական երգեր, բայց հետո հրատարակվեցին ավելի ընդարձակ գործեր, եվրոպական ոտմաններ, նույնիսկ մի քանի օրաթերթերը՝ «Մանգումլի էֆերար», «Ճերիտլի շարքիլ», «Մէհմուայի ախպար» և այլն, որոնք շատ երկար կյանք ունեցան և որոնք հաջող կերպով մրցում էին հայերեն թերթերի հետ:

Հայատառ թուրքերեն գրականության զարգացման համար երկու նպաստավոր հանգամանք կար. առաջինը հայ կաթոլիկությունն էր, որ իրեն պաշտոնական լեզու ընտրած էր հայատառ թուրքերենը. կաթոլիկ ժողովուրդը թուրքերեն էր խոսում և խորշում էր հայերենից՝ համարելով այն լուսավորչական լեզու: Երկրորդը՝ Փոքր Ասիայի հայությունն էր, որ մայրենի լեզուն դարերի ընթացքում կորցրած, թուրքերեն էր խոսում տանը, դրսում, հիւղեցում: Հայատառ թուրքերեն գրականություն ուներ ուրեմն իր համար ամուր և հաստատուն հող և հաջողապես կարող էր մրցել հայ գրականության հետ:

Հայտնի չէ, թե ո՞ր կտաներ մեղ այս մրցությունը, եթե չգտնվեին մի քանի ուրիշ բարեհաջող հանգամանքներ, որոնք կասեցրին հայատառ թուրքերեն գրականության առաջադիմությունը և հասցրին այսօրվա միայն վիճակին:

Այս բարեհաջող հանգամանքներից առաջինը թուրքերեն գրության կնճռոտությունն էր. նույնիսկ թուրքերը չէին կարողանում վարժվել իրենց զովարենթեռնելի գրությանը: Այս պատճառով ահա հայերը ինքան էլ որ թուրքերեն խոսեին, այնուամենայնիվ հեռու մնացին թուրքական գրերից, կապվեցին հայ գրին և հետևաբար հայ շրջանակի մեջ մնացին. Երկրորդ բարեհաջող հանգամանքը թուրք գրականության խեղճությունն էր. կրթական ո՛չ մի ասպարեզում թուրքը ոչինչ չուներ մեղ տալու. հայ գրականությունը, հատկապես յոսգրությունը թուրքականից շատ ավելի բարձր էր, մինչև անգամ թուրք ուսումնականներից ոմանք սովորում էին հայերեն տառերը և մեր հայատառ թուրքերեն թերթերն էին կարդում: Եթե թուրք գրականությունը որոշ բարձրության վրա կանգնած լիներ, թրքախոս հայերը ամբողջապես կհարվեին թուրք գրականության:

Երրորդ բարեհաջող հանգամանքը նույն այդ կաթոլիկությունն էր, որ նպաստում էր հայատառ թուրք գրականության զարգացման, կաթոլիկներն ընդունելով թուրքերենը և խորշելով հայերենից, հենց սրանով էլ

պատճառ դարձան, որ հայերի մեջ ստեղծվի հակադրեցությունը, իր ազգին և կրոնին հավատարիմ մնացած սովոր հայությունը սառնեց թուրքերենից, իբրև կաթոլիկների լեզվից:

Վերջապես այս գործում մեծ աշխատանք թափեցին հայ գրագետները. հասարակ ժողովրդին հայերեն ընթերցանության վարժեցնելու համար նրանք գիմեցին մի խելոք միջոցի: Տեսան, որ կրթական, բանաստեղծական, ուսումնական և առհասարակ միջակից բարձր նյութերը հետաքրքրական չեն ժողովրդի համար, Հասարակ ժողովուրդը սիրում է ոտմանը, գրական արժանիքից դուրկ, բայց արկածներով, դավադրություններով, զոհություններով, հրեհեղ և սպանություններով յի ոտմանը, որը հեշտ է կարդացվում: Եվ սկսեցին թարգմանել ֆրանսիական թեթև ոտմանները. մի ամբողջ գրականություն հայերենի վերածվեց, ժողովուրդը կարգաց, յափեց այդ վեպերը անհուն հետաքրքրությամբ. ընթերցանությունը պահանջ դարձավ և նա վերջապես հայերեն սովորեց:

Այս թարգմանիչների շարքում (Ռեթուճյան, Տետևյան, Զիլինկիրյան և այլն) առաջնակարգ տեղ է բռնում Մամուրյանը, որ ունի մի քանի տասնյակ թարգմանություններ: Ահա նրանց ցուցակը. Վոտերի՝ «Զադիգ», «Ֆիլիդին», «Միկրո Մեղաս», «Ժան և Կոլեն», «Էմերմակ ու սև», Գյոթեի՝ «Վերթեր» (2 տպ.), Բոմոնի՝ «Մենաստանի աղորին», Բոմարշեի՝ «Սելիլի սափրիչը», Օմեն Սյուլի՝ «Գաղտնիք Փարիզի» (8 հատոր), Ալեքսանդր Դյումայի՝ «Երեք հրացանակիր» (3 հտ.), «Քսան տարի ետք» (4 հտ.), «Պրածուն Գերակոմս» (12 հտ.), «Ամոքի», Վալտեր Սկոտի՝ «Իվանոն» (3 հտ.), «Արքայի՝ «Անիծյալն» (4 հտ.), Իկ. Մարվելի՝ «Ամուրիի մը երազները», Ժյուլ Վեռնի՝ «Աշխարհի շերտն» 80 օրվա մեջ», «Խորհրդավոր կղզի» (3 հտ.), Շանֆլորիի՝ «Մանկտիք», Ժ. Գլասկոյի՝ «Միպերիականի մը հիշատակ», Օնեի՝ «Կարապի երգը», Կորբենի՝ «Բերուղակ», արարական «Հազար ու մեկ գիշերներ» (6 հտ.):

Այս 58 հատոր թարգմանությունները, որոնցից մի քանիսը իսկական գրական գործեր են, շատ բան են ասում Մամուրյանի անխոնջ գործունեության մասին:

Կրթական գործի առաջադիմության համար Մամուրյանը տվել է նաև բազմաթիվ դպրոցական դասագրքեր, որոնցից հիշելու արժանի են «Բնագիտությունը պատմություն» (չին և Միջին դար), «Պատմություն Հայոց», «Երաբանություն», «Առողջաբանություն աղջկանց համար», «Անտոնին տնտեսություն», «Համառոտ պատմություն բնական գիտու-

թիւն», «Գիտելիք ու պարտիք տղոց» և այլն, որքան մարդիկ են կրթվել այս դասագրքերի վրա:

Մամուրյանի զուտ գրական գործերն են «Հայկական նամականիք», «Անգլիական նամականիք», «Ան լեռն մարդու», «Անխիլենց տունը», «Տունն զուրա», «Տիրայր կամ մեծ մարդը»:

«Հայկական նամականիք»-ն (Զմյուռնիա, 1872 թ., 275 էջ) հավաքումն է այն բոլոր հոդվածների, որ Մամուրյանը Պոսիք թղթակցության ձեռք և Վրույր ու Շանեուր ժածկանուններով հրատարակել է զանազան նամականիք՝ զանազան հայ թերթի մեջ ցրուցան, ինչպես «Ծաղիկ», «Մեղուն», «Կիլիկիա», «Արևելյան մամուլ» և այլն: Նամականիքը թվով 70 հատ են, որոնցից 5-ը 1864 թվից, իսկ 53 հատը 1866 թվից: Թեև այս նամականիքը գրված են տարբեր ժամանակներ և տարբեր տպավորությանց ներքև, բայց միմյանց հետ ունեն անձուկ կապակցություն: Բոլորն էլ պատվում են միևնույն նյութի շուրջը և այսպիսով բոլորը միասին կազմում են մի գեղեցիկ ամբողջություն:

Հայկական նամականիքն զբաղվում է ազգային հարցով: Նրա միճաբանություն, ջրնություն և դատողության նյութ են դարձել Ազգային Սահմանադրությունը, որ նույն թվերին վերաքննության ենթարկվելով՝ կառավարության կողմից խափանվելու վտանգի մոտ էր, մեր կրոնական ու Քաղաքական ժողովները, նրուսադեմի Պատրիարքության խնդիրը, գաղափարների անտարբերությունը դեպի Ազգային Սահմանադրությունն ու իրենց իրավունքների ճանաչումը, ազգային տուրքի բաշխման խնդիրը, մամուլի ազատության պահանջը, հայերեն գրական լեզվի մշակության հարցը և բարբառները: Վերջապես բոլոր այն ազգային հարցերն ու գործիչները, որոնք երևան եկան 1860-ական թվականներին՝ արևմտահայոց մեջ:

Հայկական նամականիքն կարելի է բաժանել երկու դիսպոզիցիայի: առաջին մասը, որ պարունակում է առաջին 22 նամականիքը ու հաջորդներից մի քանիսը, խոսում է ազգային զանազան հարցերի մասին: Սկսած 23-րդ նամակից՝ Մամուրյանը մեջտեղ է բերում Պարույր անունով զմյուռնիացի մի երիտասարդ, որի հետ միասին մնում է մինչև գրքի վերջը: Պարույրը զվարճասեր, աշխարհիկ, գեղեցիկին սիրահար բայց մաքուր մարդ է: Վրույրը, իբրև ավելի դիտող, փորձառու և իմաստասեր մարդ, ընկերանում է նրան և երկուսը միասին ման են գալիս Պոլսում, դիտում, փառում և նկարագրում դեպքերն ու անձերը: Պարույրին վերաբերյալ մասերը, մանավանդ նրա ե-

րազը, որ մի այլաբանական պատկեր է բունատիրական իշխանության տապալման. հեղափոխական գործունեության հաղթանակի և ազատության ու սահմանադրական կարգերի հաստատման համար, իր երկարությունը կորցնում է իր հետաքրքրությունը: Վրույր և Պարույր միասին գնում են Պոլսում մի նշանավոր պարահանդես, ուր ներկա են նաև այն ժամանակի նշանավոր տաճկահայ գործիչները: Այստեղից սկսում է «Հայկական նամականիք»-ի երկրորդ մասը, որ պարունակում է 50—70-րդ նամականիքը և մի գեղեցիկ բնութագրություն է հիշյալ ազգային գործիչների: Նա տալիս է մոտ 25 գործիչների բնութագիրը, որոնց սակայն չի անվանում իսկական անուններով, այլ յուրահանար ժածկանուններով: Սրանց մեջ ամենից նշանավորներն են Քաջման, Նուրահան, Յախսինուր, Նուշյան՝ որոնցով ներկայացնում է Պեշկեթաշյանը, Օտյանը, Ռուսինյանը և Նար-Պեշու: Բնութագրությանց մեջ նկարագրված անձերը պատկերանում են արագ, բայց շատ հաստատ գծերով: Կենսագրականներ չկան նրանց մեջ: Հեղինակը աշխատել է տալ յուրաքանչյուր անձի ներքինը, նրա դավանած սկզբունքները և կատարած դերն ու գործունեությունը ազգային գործերի կահմանում, նկարագրություններ ճիշտ, հավատարիմ և իսկական պատկերներ են, ներկայացնում: Մամուրյանը իր դիտողությանց մեջ ուղիղ և դատողությանց մեջ անաչառ է:

«Հայկական նամականիք»-ի մեջ Մամուրյանը երևան է գալիս իբրև համոզված սահմանադրական. ամեն մի քայլում նա զգրվի որ պաշտպան է հանդիսանում 1860 թվի Սահմանադրության, որը սակախ հաջորդ տարիներում խանգարել ու աղճատել աշխատեցին այնպիսի գործիչներ, որոնք թեև իբրև սահմանադրական էին գործում ու քարոզում, բայց խորապես միապետական էին և չէին կարողացել թափանցել սահմանադրականության ոգու և սկզբունքների մեջ:

Այսպիսի անձերի դիմ անողոր է Մամուրյանը: Հայի անցյալով հպարտ, նրա ապագա առաջադիմության հավատով լցված՝ փրկիսփայլական հասուն դատողություններով, երբեմն համեղ սրախոսություններով ու զավեշտական անկարկներով, երբեմն բանաստեղծական սահուն գրչով և անբեմն էլ հայրենասիրական ոգևորված լեզվով՝ դատում, շանթում, նկարում ու ճառում է:

Մամուրյանը հոռետես չէ. որքան որ ներկան մութ գույներով լինի նկարած, այնուամենայնիվ նա լավատես է՝ իր սիրտը լրացված է ազգի առաջադիմության հավատով:

իր տնտեսության մեջ նա այնքան առաջ է գնում, որ չի տատանվում սահմանադրական-ազատամտական գաղափարը առաջին անգամ հայից երկնված համարել: Ենթադրյալի քաղաքագետները կուզեն որ սահմանադրական սկզբունքը Գերմանիո անտառներին ծագած, Անգղիա անցած ու անկից բոլոր եվրոպա տարածված լինի: Սակայն ստեպ Գերմանիա արշավող ժողովուրդներն ուսկից եկած են և սերած՝ ոչ ապաքեն այն կովկասյան անգլերեն, որոց որորանն Արարատնան աշխարհն էր: Հայկազանց իշխանության նահապետական կառավարությունն ինչ էր, բայց եթե սահմանադրական գրություն մը իր ամենապարզ վիճակին մեջ... Պատմությունը Հայկազն նահապետներին շատերն իրեն անգործ և աննշան մարդիկ կենդակայն մեզ, եվ ինչու՝ համար. որովհետև սահմանադրական գրության մեջ գործողն իշխանը չէ, այլ ժողովուրդն:

Պատմությունը օտար քննակալ ազգերի հետ՝ հայը ստրկացավ, կորցրեց իր ազատական ոգին. զիջումի քաղաքականությունը ոչ մի օգուտ չտվեց նրան. հայը սերկու կողմն ալ շահիմա ըսելով և ոչ մի կողմն է շահեր և իր բոլոր քաղաքականությունն ի գործ է դրել անքաղաքագիտությունն երեան հանելու... Իսկզբանե անտի աղային գործերու բնթացքին շարժառիթն այդ խառնակ գրության մեջ է: Բարեխառնել կարծիքները, միարանել հին և նոր տարրերը, կարկտել սեր ճերմակին հետ, ահա այս եղբր է մեր քաղաքագետներու մեծ մասին հոդն, և ահա այս պատճառով քայլ մ'ընդ առաջ չէին դացեր: «Օտարին ոտքը կամ գիրկն ընկած՝ երկու ճամբա կա մեր առջև, կամ սողալ ճղմվելու լափ, կամ կանգնելու պատվով՝ հարգվելու շահով: Եթե մը այսօր՝ վաղը սկզբունք մը, զաղափար մը կիրանա, Ի՞նչ են քանի մ'օր և տարի ազգի մը ապաղային տուգն Ընկնիլ և ելնել, շարժիլ կենթադր. այս շարժումը ըանի որ մտաց մեջ կա՝ գործող մեջ ալ պիտի տեսնվի վաղ կամ անուգան: «Պաշտոնական օրենք, հրաման, հյուստարարություն իրարու համաձայն կամ հակառակ հետզհետե կտրվին ու կատնվին, այսօր ազատության հանգիստ, վաղն անոր հույսը կավորությունն ի պաշտոնն կկատարվի. այսօր ազատական կառավարություն տեսակ մը բռնականի կփոխվի և բռնության գործակալներ նոր նոր շղթաներ ու կոթողներ դարձնելու կենթին, վաղն այս կոթողներն ու շղթաները կխորտակին և նոր տեսակ վարչություն մ'իր արանյակներովն երևան կեն. սակայն այս արտաքին հեղաշրջումներու մեջ կա բան մը, խորհրդավոր գործություն մը, ուժ մը կա մարդկային բնության հատուկ՝ որ երբ անգամ մը շարժման մեջ մտնե, կնկրտի, լռել-

յայն կաշխատի, կտքի և փնտռած արահետոր գտնելով՝ այնուհետև կթալն միշտ, միշտ կհառաջդիմե, և այս հառաջդիմությունն, որ մարդկային կատարելագործության մեջ ունի իր օրենքն և շարժառիթը, հարապետն ու անսասան է, այն հարապետ կամ թաղուն համարություններուն պես, որոնց զահր մարդու հոգիին ու մտքին մեջ է: Ահա այս գահն է, զոր աշխարհիս բոլոր գործությունները չեն կարող խախտել. այս գահն է որ՝ թե՛ շղթա, թե՛ բանտի և թե՛ աքսորի մատնված՝ կտիրապետե արքայական ոսկեզօծ զահերու վրա, որովհետև բարոյական է, որովհետև ժամանակին պես հառաջագնաց ու հավիտենական է...»:

Ինչպես տեսնեք, ճշակական նամականիս-ն իր ժամանակակից կյանքի նկարագիրն է. և զուցե կարծվի, թե իրեն անցյալին վերաբերյալ գործ՝ այժմ հետաքրքրությունից զուրկ լինի: Բայց այդպես չէ: Ճշակական նամականիս-ն ունի այնպիսի ընդարձակ տեսություններ ազգային ու դրական շարժումների վրա, այնպես տիեզերական են իր գաղափարները, որ ճշակական նամականիս-ն կմնա միշտ իրեն հայերեն լավագույն գործերից մեկը, իրեն հայ կյանքի փիլիսոփայական պատմությունը:

«Անգլիական Բամականի կամ Բայու մը Թակատագիր» (Զմյուռնիա, 1880 թ., 462 էջ), որի առաջին մասերը «Միութիւն» և «Կոռնկա» թերթերի մեջ են հրատարակված, նամակների ձևով գրված վեպ է, որ հյուսված են նաև հայոց հին պատմության, նրա ծագման ու անկման, նրա արդի վիճակի ու ապագայի մասին տեսություններ: Մի խոսքով՝ հայոց պատմության իմաստասիրությունն է:

Կայի հերոսն է անգլիացի Նելսոնը, Քեմբրիջի համալսարանն ավարտած պատանի, որ առանձին սեր ունենալով Հայ Ազգի վրա, հայերեն է սովորում և Հայ Ազգը ավելի լավ ուսումնասիրելու համար գնում է Պոլիս: Այստեղից Նելսոնը թղթակցում է իր ընկեր Վուտի հետ, որ Հոնգոնումն է, նամակների մեջ խառնելով իր վեպը և Հայ Ազգի քննությունը: Նելսոնը սիրում է Հորդ Բատհեմի աղջիկ Լիլին, բայց ձնողները մեծում են նրան՝ իրեն հասարակ ծագումով մարդու և նշանում մի ուրիշ պարոնի հետ: Նելսոն և Լիլի կասկածելով իրար վրա իրեն սիրողը խոտովում են միմյանց հետ: Լիլին փախչում է հայրենի տնից և Պոլիս է գնում՝ փնտռելու իր սիրականին: Երկար որոնումներից հետո երկուսը իրար գտնում են: Նելսոնը ցանկանալով իմանալ իր ծագումը, Վուտի միջոցով հետախուզություններ է անում և վերջապես իմանում է, որ ինքը հնդկահայ է, Հորդ Բատհեմն իր հորեղբայրն է, որ մի անգլուհու հետ ամուս-

նանալով. այդ անգլուհին ավերել է նրա տունը, նրա ահագին հարստությունը կողոպտել, պատճառ է դարձել նաև նեխոսնի հոր մահվան և նրա որդուն՝ փոքրիկ Ներսեսին իբր անհայտ որբ խնամելով՝ անունը դարձրել է նեխոսն:

Նեխոսնը լսելով իր հայկական ծագումը, շատ ուրախանում է, դիմում Հայոց Պատրիարքարանը և իբր հայ արձանագրվում. բայց Պատրիարքարանը մերժում է պսակել նրան լիլիի հետ, որովհետև նրա հորեղբոր աղջիկն է: Գաղտնիքը բացվելով՝ Իստհմի կինը գրեթե խելագարված մեռնում է, հարուստությունը կտակելով նեխոսին: Ամուսնությունն անհաջողության պատճառով լիլին հիվանդանում է, բայց կարողանում է դիմադրել և համաձայնվում է նեխոսնի հետ մեկնել Հայաստան. գնում են Մուշ, Հայրենիքի վերակառնման համար աշխատելու:

Վեպի նյութը, իբրև թույլ բան, առանձին հետաքրքրություն չունի, բայց նրա ընդհանուր քննադրությունը, ձգտումը, Հայ Ազգի վրա արված տեսությունները շատ հետաքրքրական են: Մամուրյանը, անգլիացու քոզի տակ ծածկված, կարողանում է անել շատ անաշուտ, խիստ և կծու նկատողություններ: Իր կարծիքով հայը չարքաշ, հուժկու, աշխատասեր, ճարպիկ ու լուրջ ժողովուրդ է, որ միայն եվրոպական սերկայնամուտներն են, միաբանսիրտներն են հնարագիտությունն զուրկ լինելու պատճառով՝ օտար իշխանների լծի տակ է ընկել: Երբ նա տեսնում է, որ հայը դարերի հիզարկություններին դիմադրած, թքանի գլուխը կտրեն, յոթգլխյան հրեշին պես նոր մը տեղը կգնե, արյան և արտասովաջ հեղեղներու մեջն են կե՛նք կկանգնի, ու դարե-դար մինչև մեր օրերը կհասնի... Եվ ծամանակ ո՛ր միայն թիտանում է այդ ազգի վրա, այլ նաև զգում է, թե նախախնամությունը նրա համար վճռել է մի դեր, որ նա դեռ կատարած լրացրած չէ:

Մամուրյանը երկար ծանրանում է կրոնի վրա, նախ դնում է մի ընդհանուր տեսություն կրոնի էության մասին, ապա խոսում է մասնավորապես Հայ Ազգի ու կրոնի մասին: Նա ընդունում է, որ առհասարակ կրոնի գաղափարը տարբեր է ազգությունների գաղափարից, բայց ոչ հայի համար. պետք է որ հայությունը խմբի մի միակ կրոնական դրոշակի ներքև. որովհետև հայի բոլոր հին պարծանքներից միայն էլ միաթիվն է մնացել, որ ո՛չ միայն Հայ Եկեղեցու կենտրոնը, այլև հայ ազգության առանցքն է:

Մամուրյանը, իբր ազատամիտ մարդ, ուղում է, որ Հայ Եկեղեցին էլ լմնա անփոփոխ, հնամուլ, այլ մտցնի իր մեջ բոլոր այն բարենորոգումները, որ անհրաժեշտ են նոր կյանքին: Վկայելու փափագող Եկեղեցի մը պար-

տավոր է համակերպիլ տեղվուն ու ժամանակին հանգամանաց. և եթե Քրիստոնեական Եկեղեցին ու կրոնը դեռևս շարունակվին, այս կյանքը կպարտավորի մեծ մասամբ գտնված միջավայրին հարմարելու ընդունակություն:

Հատ Մամուրյանի, հայության փրկության միակ միջոցն է կրթությունը, լուսավորությունը, ազգային շահերի գիտակցությունը. պետք է, որ հայը թողնի օտար երկրները և հավաքվի իր Հայրենիքը:

Բացի քաղաքակրթական միջոցներից, Մամուրյանը պահանջում է, որ հայը զինվի նաև նյութական զենքով, որովհետև ինքնապաշտպանությունը ժամանակի պահանջն է: Շեյխն եթե գիտնար տեսնել ու կշռել, հիմակ Ասիո առաջին ժողովուրդն ու տերը պիտի լիներ: Անուրանալի է, որ լավ հատկություններ ունի որ կքնանան, և ունեցածն այս է. բայց այս չի բավեր. գեշ հատկություններ այ պետք են անօրեն ազդեցության մեջ մասնավանդ այնպիսի անիշխանական դրություն մը մեջ, որ ամենն ավելի ուժ ու դրամ, վատող ու հրացան ունեցողն ամենն մեծը կլինի, և հարցնող չկա, թե ուսկից առած է այդ մեծությունը... Թուրքիո ամեն ժողովուրդները զինյալ են, բացի հայն, որ կհուսա խաչահանգիստով ամեն թշնամիները հալածել: Բայց ամեն դար իր հատուկ զենքն ունի, իրական ու մտավորական. և այն որ անոնցմե դուրկ է՝ կորսված ազգ մ'է:

«Ան լեռին մարդը» (Իզմիր, 1909 թ., 381 էջ) պատմական վեպ է, որ մաս-մաս տպված է Աերեելեան մամուլ-ի 1871—1874 թվերին և հեղինակի մահից հետո արտատպված է որդու ձեռքով: Նիւթը քաղված է 1828-ի ռուս-պարսկական պատերազմի շրջանից:

Երբ պայթեց այս պատերազմը, հայերը, ձանձրացած պարսկական երկարատև դերությունից, փրկության հույսով լցված հարեցան ռուսներին: Պարսիկները հորդորում էին հայերին, որ միանան իրենց հետ և այն ժամանակ հաղթությունը իրենցը պիտի լիներ: Հայերը սակայն չսեցին նրանց: Ներսես Աշտարակեցին, էջմիածինն ազատելու և պարսիկներից անկախ Հայաստան հիմնելու հույսով, անձամբ հայ կամավորների զույնն անցած, ռուսաց բանակի առաջն ընկավ: Մեծ էր զգևորությունը: Մամուրյան հետևյալ ձևով է նկարագրում այն.

«Արդեն պատերազմի եռանդն ու կրակը տարածվեր էր ամեն տեղ: Հայ քաղաքացին իր տունը, մեծատունն իր գանձը, գյուղացին իր կալն ու կալորայն, կրոնաւորն իր վանքը, պատանին իր հոգին, լեռնականն իր բազուկները կրանար ռուսաց առջն՝ և իբրև ազատարար զանոնք կընդուներ: Այն արտերն ու դաշտերն որ պարսկական կիզիչ ոտից ներքև

թողումներ չորացնել էին, այն դրամներն ու գոհարներն որ ելուզակներու երեսնե գետնափոր տեղովանք թաղվել էին, այն բանվորներն ու արվեստավորներն որ բռնազրոսիկ աշխատութենե խուսափելով՝ անգործության դատապարտվել էին, այն վարդապետներն ու տերտերներն որ վանուց և նկեղեցյալ մեջ ազդեցուն ձանձրացել էին, այն ընտանեաներ կանայք որ իրենց երեսը դաժան բռնավորներն կապահին, հանկարծ օր տեսան, երեւման ելան, և ազգային այս մեծ դատին մասնակից եղան, քաջարի զինվորներ դարձան, Մշակն իր մանգաղը շարժեց, դարբինն իր կռանը, վաճառականն իր տոււարը, վանականն իր խաչն առավ, պատանին իր նժուլգն ու սուրը, կինն իր ասեղը, վիպասանն իր վիւնը և կարծես թե հրաշլուք բերք, զենք, մթերք՝ հայոց շուկաներն ու հրապարակն առատորեն թափեցան, միությունը, սերն ու արիւթյունն ամեն հոգիները վառեցին, մարտական գեղահյուս դրոշակներ և երգեր ամեն սիրտները բորբոքեցին։ Նույնիսկ պարսկաբնուկ հայք որ ի սկզբան կվարանեին և որ կողմը հակել չգիտեին, սկսան ռզնդել և եթե ոչ հայտնի, մեր փոքրիկ բանակին գաղտնապես՝ զինվորներ կուղարկեին որ մեզի աջակցին։ Ընդհանուր խնդրության հանդիսավոր օր մ'էր այս, որ, ավա՛ղ, «ուգի պիտի փոխվեր... Իսկ Արարատ անասան կդիտեր այն մեծ ճակատամարտն որ իր հյուսիսակողմը կհարդարվեր, կնշմարեր տրտմագին իր որդւոց շահատակությունն և իր ալեւոր զւոյսն ստեպ սև ամպերով կծածկեր...»։

Շատ գեղեցիկ է նույնպես Ներսեսի նկարագիրը, որ հեղինակը դնում է Ապրսամի բերանում։ «Գացի տեսա մեծ մարդը, Հայաստանի հովիվը, Ներսես։ Իմ մեծ հասակովս ո՛րչափ պզտիկ երեցա անոր քով։ Թե որ հրամայեի, որ երթամ Արարատ լեռը շալկեմ իր առջև բերեմ՝ կուրորեն պիտի երթայի։ Մեր եղիշն վարդապետը միայն պիտի կրնար ահոր պատկերը ճիշտ քաշել, եթե ողջ լինեի։ Այս սուրս վկա՛, կարգավոր չէ այն, այլ քաջ զորապետ մը, հեռատես քաղաքագետ մը։ Ես որ վազրի, օձի առջև գտնված և անոնց աչքին մեջ անվեհեր նայած եմ, չկրցա վայրկյան մը շարունակ Ներսեսի աչքին մեջ նայիլ, որու կայծերը արտիս մեջ կթափանցեին։ Իրավի սասունցիի դեմքն ունի, այլ ոչ մեր տկար խելքը։ Երկու մանր շողուն բիբեր կհոսան կապույտ շարժուն լճակներու մեջ. թավ ունքն ու արտեանանունքը կսքողեն իր խորհուրդները. փայլուն կունտ ճակատին վրա դրոշմված է Հայաստանի ճակատագիրը կապույտ որոշ գծերով՝ որ հոնիցը մեջտեղ մերթ

կուտին և կարծես թե գլխին փոթորիկը կհայտնեն»։

Վերջացավ պատերազմը ռուսաց հաղթությամբ և Պարսկահայաստանի մեծ մասը մտավ Ռուսաստանի տիրապետության տակ։

«Անֆիլենց տունը» (1877 թ.) անհաջող կատակերգություն է, տպված «Արևելյան մամուլ»-ի մեջ, Վանից եկած և անպարկեշտ միտքներով հարստացած մի մարդ ունի 3 որդի, որոնցից մեկը՝ Նորայրը Փարիզում մեծացած թեթևասլիկ երիտասարդ է, հայության զգացումներից բոլորովին զուրկ, նույնիսկ հայատալաց, իսկ մյուս երկուսը պարկեշտ, կրոնասեր և հայասեր անձեր են։ Հայրը Նորայրի մեծամիտ խոսքերից հրապուրված, ուղում է իր հարստությունը նրան կտակել, բայց նրա անհարակուսյունը տեսնելով՝ հրաժարվում է և որոշում է Հայաստան գնալ և այնտեղ հողեր գնելով՝ երկրագործություն մարապել՝ մաքուր և պարկեշտ կյանքով։

«Տունեն դուրս»-ը նույնպես անհաջող կատակերգություն է, որ տպված է «Արևելյան մամուլ»-ի 1882—1883 տարիներում, Մի խաբեքա մարդ բարեկամանում է մի հարուստ աղայի հետ՝ նրա հարստությունը խելուն պատակով, Այս նպատակին հասնելու համար դիմում է զանազան կեղծավոր շողոքորթ միջոցների. նա ապացուցում է, որ աղան Կամսարականների ազնվական տոհմից է, կազմվում է հացկատակների մի խմբակ, որ շրջապատելով աղային շարունակ շողոքորթում են։ Խաբեքան իբր թի հնարել է մի մեքենա, որով ուղում է Լեման լիճը Կամսարականների երկիրը փոխադրել և շենացնել, Այս ցնորական գաղափարին հավատում է աղան. նրա կինը, որ հավատ չի ընծայում և արգելք է լինում խաբեքայի շահատակության, թունավորվում է սրա ձեռքով. և մինչդեռ խաբեքան ուղում էր աղայի որդուն էլ սպանել, բռնվում է և խայտառությունը դուրս վտնդվում։

«Տիրայր վամ մեծ մարդը», որ շատ անհաջող կատակերգություն է, հրատարակված է մաս-մաս «Արևելյան մամուլ»-ում 1885—1886 թվերին։ Ղազար անուն մի ժլատ մարդ իր Տիրայր անունով որդուն ուղարկում է նվիրույթ ուսում առնելու։ Տիրայրը թերահավատության տիպարն է։ Վերադառնալով նվիրույթից՝ նա ուղում է անմահանալ, մեծ մարդ դառնալ, և մարգերներն ու զանազան անձեր շրջապատում են նրան, շղյուղ նրա փառասիրությունը և հոր ահագին հարստությունը փչացնում։

Վերջին երեք գործերը, որ հիշեցինք, ոչինչ չեն ավելացնում Մամուրյանի վրա. ընդհանրապես շատ բան պակասեցնում են նրա արժանիքից, Մամուրյանը թատերագույն չէ, ինչ-

պես նաև թույլ վիպասան է։ Նրա վեպը ազդված է իր թարգմանած այնքան բազմաթիվ ոտմանների ոգուց, որոնց հյուսվածքը ո՛չ թե իրական կյանքից է կազմված, այլ արկածներից. իսկ հանկարծական հայտնագործությունը նրանց նպատակն է։ Մամուրյանը հրապարակագիր է, զուտ հայ ազգային կյանքի հրապարակագիր, որի միակ նպատակն է հայ կյանքի քաղաքական զարգացումը և Հայ ժողովրդի վերաշինությունը։ Եվ այս սեփականատա-

ծումն է, որ անց է կենում ո՛չ միայն նրա խմբագրականների, այլև վեպերի ու կատակերգության մեջ։


Մամուրյանը իր ժամանակի թունդ աշխարհաբարյաններից է. իր լեզուն մաքուր, հարուստ և ճկուն է. ո՛չ ուսմիկ գրողների գոհակությունն ունի և ոչ էլ մոլեռանդ գրաբարյանների հնամուլ ձևերը. կարելի է առարկել միայն նրա երկարաթանության դեմ։





ՊՐՈՖ. ԴՌԱՅ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՔ-ԲԵԿ

ՍԵՐՈՎԱԲԵ ՊԱՏԿԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱԳԵՏ ՎՐԱՑԻ ԳԱՅՈՍԸ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ



այ և վրացի ժողովուրդների և քաղաքական-պետական, զրական-մշակութային և այլ գործիչների փոխհարաբերությունները, բարեկամական կապերը անցյալում, անկեղծ և ամուր են եղել նաև Հայրենիքից դուրս, ստարոթյան մեջ, ուր նրանք իրերի բերումով ավելի են մոտենցել իրար, հասկացել միմյանց և ընդհանուր լեզու գտել:

Ահա այսպիսի դեմքերից էին Աստրախանում գրեթե միաժամանակ գործող հայ մանկավարժ և գրող Սերովբե Պատկանյանը (1760—1837 թ.թ.) և վրաց գործիչ, նույնպես մանկավարժ, երբեմն Քելավի սեմինարիայի տեսուչ և հետազայում կուսակցուն հոգևորական ու քարձրաստիճան եկեղեցական Գայիոսը (1746—1821 թ.թ.), որոնց փոխհարաբերությանց մասին ցարդ ոչինչ հայտնի չէր:

1809—1827 և 1836—1837 թվականներին Ս. Պատկանյանը պաշտոնավարում է Աստրախանում, նախ 1809—1821 թվականներին իբրև նորաբաց Ազարյան դպրոցի ավագ ուսուցիչ, իսկ 1821—1827 թվականներին նորաբաց հոգևոր վարժարանի ուսուցիչ: Հետևանքով Աստրախանից 1827 թվականին, նա նորից վերադառնում է այնտեղ 1836 թվականին և մնում այնտեղ մինչև իր մահը (1837):

Ս. Պատկանյանի գրական գործունեությունը, ինչպես հայտնի է, արտահայտվել է նրա քանաստեղծություններում, որոնց ընդհանուր թիվն է 29. Սրանց մեջ 11-ը զուտ կրոնական բնույթի տաղեր են, իսկ մնացած 18-ը պատմական և այլ բովան-

դակությամբ խաղեր, ձոներ և այլն¹, որոնց բնութագիրը տալիս է Հր. Աճառյանը այսպես. «Պատկանյանի պատմական տաղերը նվիրված են ոռա-տաճական և ոռապարական պատերազմներին. նրա երգերին նյութ են դարձել Տփղիսի ավերումը Պարսից ձեռքով, Յիցիանովի հաղթանակը, Գանձակի առումը, Գավիթ-Գանիելյան վեճերը, էջմիածնի ազատությունը և այլն: Գովարանական տաղերը նվիրված են ժամանակակից նշանավոր անձերին՝ ոռաաց Աղեքսանդր Ա և Նիկողայոս Ա կայսեր, Ծփրեմ կաթողիկոսին, Աստրախանի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին և ռուսաց Գայիոս արքեպիսկոպոսին², ներսես Աշտարակեցուն³ և այլն:

Նույն տարիներին, երբ Ս. Պատկանյանը ապրում և գործում էր Աստրախանում, այդտեղ պաշտոնավարելիս է եղել նաև Քելավի սեմինարիայի երբեմնի տեսուչ Գայիոսը, որը հայտնի է վրաց գրականության մեջ «Գայիոս Ռեկտորի» հորջորդումով⁴:

Վրաց գրականության մեջ Գայիոսը հիշատակվում է երեք աղբառներով՝ Բարա-

¹ «Երգք Սերովբե վարժապետի Պատկանյանի, ի լոյս քննարկայ աշխատաբերութեամբ Անտիք Խաղեղանց, Մոսկվա, 1857:

² Ընդգծումը մերն է. — Լ. Մ. Բ.

³ Հր. Աճառյան, «Պատմութիւն հայոց նոր գրականութեան», Վաղարշապատ, 1908, էջ 115:

⁴ Լ. Մելիքսեթ-Բեկ, «Անձանաթ նյութեր Գայիոս Ռեկտորի մասին», Բրիլիսիի Պետական համալսարանի աշխատություններ, 69, Քրիլիսի, 1958, էջ 385—391 (վրացերեն):

թաշվիլի՝ անկասկած, իսկական ազգանունն է, որը մատնանշում է նրա իշխանական (թավադական) ծագումը, Թադաշվիլի՝ առաջացել է նրա հոր Թադաշի անունից, հետևապես հայրանունն է և ոչ թե ազգանունը, իսկ երրորդը՝ Նաշվիլի՝ առաջացել է նույն իր հոր Թադաշի վարած ճեպագրված պաշտոնից, որը բառացի նշանակում է փոխանորդ, հետևապես ստացվում է նաշվալիի (փոխանորդի) արդի:

Գալիսաք ծնված պիտի լինի 1746 թվականի մոտերքում, Նա աշակերտել է վրաց Անտոն Ա կաթողիկոսին, որից և ստացել է 1765 թվականին սարկավադի աստիճան: 1772 թվականին ճանապարհորդել է Պետերբուրգ՝ իբրև քարտուղար Վրաստանից գնացած դեսպանության և մի առժամանակ ուսանել է Ալեքսանդր Նևսկու մայրավանքի սեմինարիայում, ապա Մոսկվայի հոգևոր ճեմարանում, որն ավարտել է 1778 թվականին: Կարճ ժամանակով հայրենիքում լինելուց հետո նա երրից Պետերբուրգումն է, ուր 1779 թվականին ձեռնադրվում է կուսակրոն քահանա, իսկ 1780 թվականին վարդապետ: 1782 թվականին նա ստանձնում է Թելավի (Կախեթի երբեմնի մայրաքաղաքի) նորաբաց հոգևոր սեմինարիայի տեսչի պաշտոնը, ուստի և ցմահ պահպանում է Գալիսա-Ռեկտորի: Հորը ընդունելով 1763 թվականին նա մասնակցում է Գեորգի-եկում կնքված ռուս-վրացական պայմանագրին⁶, 1784 թվականին Պետերբուրգումն է, 1785—1789 թվականներին՝ Կրեմենլուգում, 1790—1792 թվականներին՝ Մուղավիայի Ցասսա քաղաքում, 1793 թվականին ձեռնադրվում է Աստրախանի թեմի մեջ մտնող Մոզդուկի (Հյուսիսային Կովկասի) քրեպիսկոպոս, 1799—1803 թվականներին Պենզայի եպիսկոպոսն է, իսկ 1808—1821 թվականների միջոցին՝ Աստրախանի և Ստավրոպոլի արքեպիսկոպոսը: Վախճանվել է Աստրախանում 1821 թվականի 20 փետրվարին և թաղվել է 24 փետրվարին Աստրախանի ներքևի տաճարում:

Գալիսոսի կենսագրությունից առանձնապես ուշադրության արժանի է նրա որոշ մոտիկությունը, շփումը հայ իրականության հետ, այն աստիճանի, որ նա նույնիսկ ուսումնասիրել է հայերեն լեզուն, ինչպես վկայում են նրա ժամանակակից վրաց պատմիչներ:

⁶ Վ. Գրիգորյան, «Ռուսական կայսրության պետական կալիգրանների Գրխավոր ռեզլամենտ-ի հայերեն թարգմանության մասին», «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի», 1956 թ., № 4, էջ 11, ծան. 1.

Հովհաննես Բագրատիոն արքայազնը, «Կալմասորա» (=Կալի մասունք) սովոր երկասիրության հեղինակը, իր «Համառոտ հաղորդագրություն վրաց գրողների մասին» գրվածքում, որը նույն «Կալմասորա»-յի մասն է կազմում, Գալիսոսին նվիրում է հետևյալ տողերը. «Գալիսոսը սնվեց Անտոն կաթողիկոսից փիլիսոփայական և աստվածաբանական գիտություններով: Հմուտ լինելով ռուսերենին՝ նա գիտեց նաև լատիներեն և հայերեն գիրը և այլն»:

Դավիթ և Բագրատ Բագրատիոն արքայազնների ձնոր պատմությունն և ձնոր պատմության կողմած երկերի շարունակող աշխատան հեղինակը գրում է. «Սույն՝ 1821 թվականի փետրվարի 21-ին վախճանվեց Գալիսոս արքեպիսկոպոսը, վրացին, Թադաշի որդին, Աստրախանում, որի թեմակալն էր ինքը: Սա հույժ կրթված մարդ էր՝ հմուտ ռուսերենին, վրացերենին և հայերենին... Սա վախճանվեց 75 տարեկան հասակում: Մնված ու դաստիարակված էր ծան թագավորի որդի Անտոն կաթողիկոսի կողմից: Սա իր ժամանակին հազվագյուտ էր Վրաստան երկրի համար և նրանից հետո, Աստված գիտե, կմնա՝ արդյոք նրա նման որևէ մեկը գիտուն մեր երկրում»:

Կասկածից դուրս է, որ Գալիսոս իբրև ռուսաց եկեղեցական նվիրապետության ներկայացուցիչ և իր ժամանակի նշանավոր եկեղեցական-քաղաքական գործիչ, շփումներ պիտի ունենար իր ժամանակակից՝ ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղուիսյանի հետ Հյուսիսային Կովկասում, Մուղավիայում և այլուր:

Սերովբե Պատկանյանն իր Աստրախանում ապրած տարիներին մոտ ժանդարներին և բարեկամական հարաբերություն ունենալով Գալիսոս արքեպիսկոպոսի հետ, նրան նվիրել է հատուկ սրտատուլ բանաստեղծություն՝ «Առ հայրապետն Գալիսոս վերնադրով», ուր իրեն անվանում է «երգաբանող անուան», «ընկաղ վասն կենաց», «գլուխատ էր որդի», վերջապես և «յօրինող ծառայ Գալիսոսի»:

⁶ «Կալմասորա», Բ, Թբիլիսի, 1948 թ., էջ 191 (վրացերեն)։— Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, «Վրաց գաղութները Հայաստանի և հայերի մասին», Բ, Նրևան, 1955, էջ 256 (ընդգծումը մեջբերումի մեջ մերն է։— Լ. Մ.-Բ.)

⁷ Ներսիսի Վրաստանի պատմության համար՝ մեղծված արքայազն Դավիթ Գեորգիի օրդոս և նրա եղբայրների կողմից, Թբիլիսի, 1905, էջ 157—158 (վրացերեն)։— Լ. Մ.-Բ., «Վրաց գաղութները», Բ, էջ 276, 280 (ընդգծումը մեջբերումի մեջ մերն է։— Լ. Մ.-Բ.)

⁸ «Ներսիս Սերովբե վարժապետի Պատկանյան», էջ 64—65.

Բանաստեղծութիւնը, որը 6 տուն է պարունակում, յուրաքանչյուրը 5 տող, հետեւապէս ամբողջը 30 տող, ակրոստիկա է՝ «Գ-Ա-Յ-Լ-Ո-Ս» զլիստաոտերով, և գրված է, ըստ Ա. Խաղեղյանի, 1813 թվականին:

Ահա և այդ բանաստեղծութիւնը ամբողջութեամբ⁹.

ԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԴԱՅԻՈՍ

Քայիոս Հայրապետ,
Սրբազնագոյն դիտապետ,
Բնտրեալ յԱստուծոյ,
Ռուսաց քահանայապետ.
Օրհնեա՛, աղաչեմք, զերգաբանդս
անուան ԲՈ:

Արդար դատելով,
Ի կայսերէն ընտրելով.
Ասպետ կառաւել,
Հովիւ հօտի քո սիրով.
Օրհնեա՛, պաղատիմք, զրմպոդս վասն
կենաց ԲՈ:

⁹ Բանաստեղծութեան մեջ ընդգծումները մերն են:—
Է. Մ.-Բ.,

Քիսուս Փրկչի
Եւ Ալեքսանդր Պապովիչի
Մանթ սիրելի,
Ռուսաց սուրբ հովիւ բարի,
Օրհնեա՛, աղերսեմք, զսիրախումբ
զառակս ԲՈ:

Իմաստութեամբ քով,
Աստուածաշնորհ հոգեով
Ջաստրախան լնուս
Սուրբ մարգարտօք իբր զծով.
Օրհնեա՛, Սրբազան, բոլօր ներկայ
որդիս ԲՈ:

Արդիք ըստ հոգւոյ,
Բազմեալք աստէն ի սպաս քո.
Ուրախ եմք ըզքե,
Ջարբազան հայրութեամբդ,
Օրհնեա՛, Հայրապետ, զկոչնաւօր
որդին ԲՈ:

Սուրբ Հայրապետին
Յահան Ոսկերեւանին
Վարուց համեմատ,
Օրինակ բարեաց ազգին,
Օրհնեա՛, Սրբազան, ղյօրինող ծառայ ԲՈ:

[1813]





Ա. ԵՐԵՄՅԱՆ

ԳՐԻՉ, ԺԵՂԿՈՂ ԵՎ ՈՍԿՈՂ ՕԳՍԵՆԴ ԵՐԵՂԸ



աղանդավոր գրիչ և վարպետ ոսկող ու ծաղկող Օգսենդ (Աւգստին) արեղան հայ ժողովրդի դարավոր մշակութի գրչական արվեստի պատմության մեջ առանձնահատուկ էջն ունի այն տեսակետից, որ նա միջնադարում շատ մանր տառերով ձեռագրեր ընդօրինակող հմուտ գրիչների շարքում առաջնակարգ տեղ է գրավում:

Նա ժն դարի այն լավագույն և ճարտար գրիչներից մեկն է, որի շատ փոքր, բայց նույնքան էլ պարզ ու գրավիչ տառերով ընդօրինակած ձեռագրերն այսօր հայ գրչական արվեստի թանկագին ավանդներ են և ցայտուն գաղափար են տալիս նրա ինքնուրույն գեղարվեստի էության ու նվաճումների մասին: Բայց նա իր դարաշրջանում փայլել է ոչ միայն մանրատառերով ձեռագրեր ընդօրինակելու վարպետությամբ, այլև որպես հմուտ ոսկող, ծաղկող և տոմարական աղյուսակներ կազմող:

Անժխտելի է, որ նրա ստեղծագործությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն Ղրիմի Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի գրչական դպրոցի պատմության, այլ նաև ժն դարի ձեռագրերի ծաղկման և ոսկեզօծման արվեստի ուսումնասիրության համար:

Վաստակավոր արվեստագետ հոգևորականի կյանքի պատմության գլխավոր էջերի լուսաբանության համար, դժբախտաբար, շատ քիչ տեղեկություններ կան: Այսքանը միայն պարզ է, որ նա իր հոգում թաքնված գեղարվեստական տվյալները մշակել է և ներառել Ղրիմի հայաշատ քաղաքներից Կաֆայի նկարչական և գեղարվեստական արվեստների դպրոցում, որը ձևակերպվել է տաղանդավոր մանրանկարիչ, գրիչ և կազմող Քրիստոսատուրի մոտ և հանդիսացել է նրա լավագույն աշակերտներից մեկը: Նվիրվել է հոգևոր կուլման և եղել է Կաֆայի մոտ

գտնվող Ս. Անտոնի պատմական վանքի միաբան: Իր հեզ բնավորությամբ սիրվել է և գնահատվել թե՛ իր ուսուցիչ, թե՛ վանքի միաբաններից և թե՛ ժողովրդից: Մանրանկարիչ Քրիստոսատուրը դեռ 1492 թվականին գրած «Շարականոց»-ում նրան դրվատել է այսպես. «Ջհեզն՝ իմոյ սնուցեալն զԱւգստինոյ», Վաստակավոր գրիչն երկար տարիներ ապրել է և ստեղծագործել գլխավորապես Կաֆայի Ս. Անտոնի պատմական վանքում, որը 1429—1445 թվականների ընթացքում ընդօրինակել է բազմաթիվ ձեռագրեր, տողել է իր սիրելի ուսուցիչ՝ Քրիստոսատուրի գրած մագաղաթների էջերը և տոմարագիտական աղյուսակներ է կազմել: Չնայած, որ նա հանդիսացել է Կաֆայի գեղարվեստական դպրոցի լավագույն գրիչներից, գծագրողներից և ոսկողներից մեկը, բայց նա համեստությամբ իր գեղեցիկ բարեմասնությունները նվաստացրել է այսպիսի տողերով. «Ապիկար և տխմար գրիչ», «մեղապարտ կրօնաւոր», «անպիտան գրիչ», «սուտանուն արեղայ», «անարհեստ և փոքուն գրիչ», «բազմամեղ արեղայ»:

Նշանավոր արվեստագետ հոգևորականի մեղվաշան գործունեության մասին ավելի պարզ գաղափար տալու համար այստեղ առաջ բերենք նրա ընդօրինակած մեզ ծանոթ ձեռագրերը, որոնք Կաֆայի գրչական դպրոցի թանկագին ավանդներ են և վկայում են Օգսենդի գեղարվեստական ձիրքի մասին:

Իր գրչական արվեստի առաջին շրջանի աշխատանքները մեզ տանում են 1429-թվականը: Այդ ժամանակ նա իր տաղանդավոր ուսուցիչ՝ Քրիստոսատուրի նույն թվականին Կաֆա քաղաքի Ս. Անտոնի վանքում գրած «Շարականոց»-ի մագաղաթի էջերը տողում է: Ահա իր ուսուցիչ Քրիստոսատուրի վկայությունը. «...Յիշեսցէք... և զհեզն՝ իմոյ սնուցեալն զԱւգստինոյ կրաւնաւոր քահանայն, որ մագաղաթն տողեացաւ: Ձեռագիրը խնամքով պահվում է Փարիզում:

1431 թվականին վաստակավոր գրիչ և մանրանկարիչ Քրիստոսատուրը Կաֆայի Ս. Անտոնի մենաստանում գրում է մի ժամանակագրություն՝ Օգսենզն օգնում է ուսուցչին, կոչում է և հարգարում ձեռագիր մագաղաթը, Կարդանք հիշատակարանի տողերը. «...և հոգևոր որդեակն իմ Ալգսէնդ մանուկ կրանաւորն աւգնական եղև կոկելովն և յարդարեալ պատրաստելով... յիշեցէք ի Տէր Քրիստոս... և հոգևոր որդւոյն իմոյ Ալգսէնդ մանուկ կրանաւորի, և եղբաւրն և ծնողաց նորինս: Ձեռագիրը սեփականութիւնն է Երեւանի Պետական ձեռագրատան:

Այնուհետև 1432 թվականին, տաղանդավոր մանրանկարիչ և գրիչ Քրիստոսատուրը ձեռք մայրաքաղաք Կաֆայի Ս. Անտոնի վանքում գրում է մի Մանրուսմունք, որի հիշատակարանում խնդրում է հիշել իր աշակերտին. «...Յիշեսցէք... և դաշակերտն իմ զԱլգսէնտ կրանաւոր քահանայս: Գրչագիրն Երեւանի Պետական ձեռագրատան սեփականութիւնն է:

Երկու տարի հետո՝ 1434 թվականին, Հովհաննէս կրոնավորը Ղրիմում ստանում է մի Ավետարան և կազմել է տալիս: Այս 1451 թվականին ծախում է ձեռագրութիւն Տերտերին: Ավետարանին առանձին գրավութիւն է տալիս ոսկե երանգը, որի համար պարտական ենք Օգսենզին: Ահա հիշատակարանի տողերը. «...Հոսկաւ սուրբ Ավետարանիս զԱլգսէնտ սուտանուն արեղայս աղաչեմ յիշել ի Տէրս: Ձեռագիրը գտնվում է Երեւանի Պետական ձեռագրատանը:

Նշանավոր գրիչ, ծաղկող Օգսենզը հայոց ՊՁԴ (884 + 551 = 1435) թվականին առաքինասէր և սրբասնեալս Եսայի կուսակրոն արեղայի խնդրանքով՝ ձեռք մայրաքաղաք Կաֆայի մոտ գտնվող Ս. Անտոնի վանքում. «ընտիր արիւնակէ» գրում է մի Մանրուսմունք: Կարդանք թխադատետունի էական մասը. «...Գրեցաւ խաղատետրս ի թվ. հայոց ՊՁԴ (884 + 551 = 1435) ամի, ձեռամբ ապիկար և տխմար գրչի Ալգսէնդ մեղապարտ կրանաւորի, ի խնդրոյ Եսայիայ առաքինասէր և սրբասնեալ կուսակրոն արեղայի... Արդ, եղև սկիզբն և գրաւ խաղալ ետրիս ի ընտիր արիւնակէ, որ կոչի Առաքելցի. յաշխարհս հոնաց, ի վ[անս], որ յանուն Արքայն Անտոնի, որ է առընթեր մեծի մայրաքաղաքի Կաֆայի, առաջնորդութեան վանաց և աթոռակալութեան մեծի վարդապետի քաջ քարունոյ տեառն Սարգսի...»: Ձեռագիրն Երեւանի Պետական ձեռագրատան սեփականութիւնն է:

Միջնադարից մեզ հասած հայ ժողովրդի մշակութի մի շարք արժեքավոր ձեռագրերը վկայում են, որ Օգսենզն իր գարաշրջանում հանդիսացել է բեղմնավոր գրիչ: 1435 թվա-

կանին նա առընթեր մեծի մայրաքաղաքի Կաֆայի գրում է հայ գրչական արվեստի զանազան հարստացում է մի նոր ձեռագրով: Դա մագաղաթյա մի ընտիր Տոնացույց է, որ Երեւանի Պետական Մատենադարանի ձեռագրատան ամենավաղագիւղացի գրչական է, որի մագաղաթյա թերթերի մեծությունն է 4×3,3 սմ.: Ահա հիշատակարանի էական մասը. «...Գրեցաւ Տոնացույցս յաշխարհիս Ղրիմի, առընթեր մեծի մայրաքաղաքիս Կաֆայի, ի թվ. հայոց ՊՁԴ (884 + 551 = 1435), ի յեպիսկոպոսութեան Տեառն Կոստանդնուպոլսի և յեպիսկոպոսութեան Տէր Կարապետի, ձեռամբ անպիտան գրչի Ալգսէնտ կրանաւորի... Յիշեցէք... և զիս զօգսէնտ սեղ[ապարտս]: Ձեռագիրը գտնվում է Երեւանի Պետական մատենադարանի ձեռագրատանը:

Մեղվաշան գրիչ, ծաղկող և ոսկող Օգսենզը, 1437 թվականին, դարձյալ Ղրիմում, գրում է և ծաղկում «Համառոտ լուծմունք Յովհաննու Աւետարանին Գրիգոր Տաթևացույց խորագրով ձեռագիրը, որ Երեւանի Պետական մատենադարանի ձեռագրատան սեփականութիւնն է: Առաջ բերենք հիշատակարանի սեղմ տողերը. «Հաստացաւ Սուրբ Գրոցս զտէր Սարգիս քարունապետն և զվրդուն գրիչս զԱլգսէնտ սուտանուն կրանաւորս յիշեցէք... գրեցաւ թվ. ՊՁԴ (886 + 551 = 1437) ...Ջվրդուն գրիչս զԱլգսէնտ սուտանուն արեղայս, որ զգիրքս ծաղկեցի, աղաչեմ յիշել ի Տէրս: Գրչագիրը գտնվում է Երեւանի Պետական մատենադարանի ձեռագրատանը:

Նույն 1437 թվականին գրիչ Օգսենզը կրոնավոր, մեծ մայրաքաղաք Կաֆայում, Հակոբ քահանայի համար, գրում է մի Տոնացույց (Ճառերտիր), ինչպես այդ ցույց են տալիս հիշատակարանի հետևյալ տողերը. «Գրեցաւ Տոնացույցս յաշխարհս Ղրիմ, առընթեր մեծի մայրաքաղաքիս Կաֆայի, ի հայոց ՊՁԴ (886 + 551 = 1437), ի հայրապետութեան Տեառն Կոստանդնուպոլսի և յեպիսկոպոսութեան Տէր Կարապետի, ձեռամբ անպիտան գրչի Ալգսէնտ կրանաւորի, ի վայելումն Յակոբ քահանայի և ի յիշատակ կենակցին իւրոյ Զոհար-Մելիքին, և զաւակացն իւրոյ: Ձեռագիրը գտնվում է Կոստանդնուպոլսում:

Մի տարի անց՝ 1438 թվականին, քաղմավաստակ գրիչ և ծաղկող Օգսենզը կրոնավոր գրում է «Վարք Յովհաննու Ոսկեբերանի» ձեռագիրը:

Այնուհետև՝ 1441 թվականին, օգսենզը դարձյալ մայրաքաղաք Կաֆայի Ս. Անտոնի վանքում գրում է մի Տոնացույց, որի հիշատակարանում կարդում ենք. «...Արդ, գրեցաւ Տոնացույցս բոլոր տարոյն ի թվ. հայոց ՊՁ (890 + 551 = 1441) ամի, ձեռամբ

անարհեստ և փքուն գրչի Աւգսէնգ ի Կաֆայս, առ ոտս սրբոյն Անտոնի ճգնաւորին... րնդ նոսին յիշեսցիք և զիս և զբաղմամեղ արեղայս զԱւգսէնգս՝ զանարհեստ գրչիս և զսակաւոս...» Զեռագիր Տոնացույցը գտնւում է Երևանի Պետական մատենադարանի ձեռագրատանը:

1445 թվականին Օգսենդը հայ գրչական արվեստին նվիրում է մի Տումարատետր, որը գրում է «ի յանբարի և ի դառն ժամանակիս», Ղրիմի մայրաքաղաք Կաֆայում: Ընդգծենք հիշատակարանի էական տողերը. «Եւ զստացաւդ սորա յիշեա զերջանիկ րաբունայետն մեր զտէր Սարգիսն, որ է աթոռակալ Կաֆայիս և առաջնորդ վանիցս Սրբոյն Անդոնի, որ ստացաւ զսա ի յարդեանց իւրոց և ետ գրել զսա և ծնողաց իւրոց, ի թվականութեանս հայոց ՊՂԴ (894 + 551 = 1445)... Եւ ես՝ անարհեստ գրչիս Աւգսէնգ անարժան և բաղմամեղ արեղայս գրեցի զտումարատետրս զայս ի յանբարի և ի դառն ժամանակիս, ի մայրաքաղաքս ի Կաֆայս, առ ոտս սրբոյն Անտոնի, յիշատակ երջանիկ րաբունայետնին մերոյ Տէր Սարգրսի, և որ զմեզ յիշէ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ, որ է աւրհեալ 111 աւիտեան», ամէնա: Զեռագիրը գտնւում է Երևանի Պետական մատենադարանի ձեռագրատանը:

Եզրափակենք, Հայ ժողովրդին պատիվ բերող ժն դարի վաստակավոր արվեստագետներից մեկն է բեղմնավոր գրիչ, հմուտ ծաղկող ու ոսկող Օգսենդ արեղան, որի պայծառ կերպարը դառնում է հմայիչ, երբ դիտում ենք նրա ավանդ թողած ձեռագրերը, որոնք գրչական և նկարչական արվեստների գեղեցկություններ են, որոնց մեջ ցուանում է նրա ստեղծագործական բարձր մշակույթը և վարպետությունը:

Տաղանդավոր արվեստագետ հոգևորականի մեզ ավանդ թողած մի շարք ձեռագրերը գտնւում են Երևանի Պետական ձեռագրատանը: Դրանք հայ մշակույթի մի-մի պեր-

ճախոս վավերագրեր են, որոնք վկայում են, որ Օգսենդը ժն դարի հայ գեղարվեստի այն հազվագյուտ վարպետներից է, որն իր դարաշրջանում փայլել է ոչ միայն որպէս հմուտ ոսկող ու ծաղկող, այլև շատ մանր տառերով ձեռագրեր ընդօրինակող անզուգական գրիչ: Նրա մանրատառ գրչութիւն և ոսկեզօծ դժագրութիւնների մեջ և՛ արվեստի ներութիւն կա, և՛ բանաստեղծական գեղեցկութիւն:

Նրան ենք պարտական Երևանի Պետական ձեռագրատանը գտնվող շատ մանր տառերով գրված ամենափոքր ձեռագիրը: Դա գրչական արվեստի մի թանկագին և հազվագյուտ ստեղծագործութիւն է, որը վկայում է, թե Կաֆա քաղաքի Ս. Անտոնի մենաստանի գրչական մշակույթը ինչպիսի ներութիւն ու կատարելութիւն է հասել: Առհասարակ, Օգսենդ արեղայի ընդօրինակած ձեռագրերը մեզ պատմում են Ղրիմի հայաշատ քաղաքներից Կաֆայի գեղարվեստական դպրոցի գրչական, ոսկեզօծման և ծաղկման արվեստների աճի, ուղղութիւն, ձևավորման, նվաճումների մասին: Արձանագրված երեսութենքն էլ նշում են, որ Օգսենդ արեղան իր հմուտ գրչով, վրձինով և ինքնատիպ ոճով հայ գրչական ու նկարչական արվեստների լավագույն վարպետների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում: Նրա ստեղծագործական արվեստի ներշնչման աղբյուրները անկասկած դալիս են հայ ժողովրդի գեղարվեստի փառավոր անցյալից, նրա դարավոր գրչական, նկարազարդման և ոսկեզօծման գեղեցկություններից: Այս տեսակետից էլ Օգսենդի արվեստի նվաճումներն արժանի են առանձին ուշադրութիւն:

1 Աղբյուրներ.— Գառեգին Խալսկոպոս Զովսեփյանի «Հիշատակարանը ձեռագրեր», Լ. Զովորոս Տաշլանի «Ժուլգալ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխթարեանց ի վիեննա», Լ. Ս. Խաչիկյանի «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», «Զանգեզամսօրեայ», «Արարատ» և ուրիշներ:





Մ. ԲԱՐԹԻԿԳԱՆ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ՆԱՄՐԵԿՆԵՐԸ



այլական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Գրականության և
արվեստի թանգարանում գտնվում
է Մկրտիչ էմինի արխիվը, որտեղ
կան նրա օտար լեզվով դրված 225 նամակ-
ները, որոնցից միայն 13-ը պատճեններ են,
իսկ մնացածները զանազան օտար անձնա-
վորություններից էմինի ստացած նամակ-
ներն են, էմինը նամակակցել է իր ժամա-
նակի հայտնի հայագետ գիտնականների
հետ:

Ամենահին նամակը կրում է 1850 թվա-
կանը, որ ստացել է Փարիզից, Բորե էոթեն
անուն մի կաթոլիկ հոգևորականից, որը,
ինչպես երևում է, հին աշխարհի պատմու-
թյամբ ու հնությունների ուսումնասիրու-
թյամբ և հայ գրականության հետաքրքր-
վող մեկն է եղել, նամակից երևում է, որ
էմինը նրան ուղարկել է իր «Վեպր հնոյն
Հայաստանի» աշխատությունը, որը լույս է
տեսել 1850 թվականին: Այս առթիվ էմինը
շնորհավորակոսն պատասխան է ստանում
Բորեից:

Բորեն, իբր ֆրանսիական կաթոլիկ մի-
սիոներ, ճանապարհորդել էր Հայաստա-
նում, հետաքրքրվել էր հայ գրականությամբ
և եկեղեցական պատմությամբ և գրել էր
հայոց մասին և Հայ եկեղեցուն վերադրված
քաղկեդոնականության մասին: Էմինի՝ Դյու-
Լորիենի ուղղյալ 26 հունիսի 1851 թվակի
նամակից հայտնի է լինում, որ Բորեն մտել
է Ս. Ղազարի վանատիկի Մխիթարյան միա-

րանների կարգը և դադարել է Արևելքում
քրիստոնեական պրոպագանդայով:

Նույն թվականից է սկսում էմինի թվթակ-
ցությունը էդուարդ Դյու Լորիենի հետ, որն
այդ ժամանակ Փարիզի «Սոսիետե ադիա-
տիկա»-ի քարտուղարն էր, էմինը նրան էլ
ուղարկում է իր «Վեպր հնոյն Հայաստանի»
գործը, իբր դիսերտացիոն աշխատություն.
և 1850 թվականի օգոստոսի 13-ին ընկերու-
թյան նիստում զեկուցում է այդ մասին:
Դյու Լորիեն հաղորդում է, որ այդ գործի
մասին իր մի գրախոսականը հրատարակե-
լու է «Ժուռնալ ադիատիկա»-ում:

Դյու Լորիեն այնքան մեծ է գնահատել
էմինի գործերը, որ խանդավառված ցան-
կանում է «Սոսիետե ադիատիկա»-ի անդամ
դարձած տեսնել էմինին, Այդ ուղղությամբ
աշխատանք է տանում, Համաձայն ընկե-
րության կանոնագրի, երկու անգամներ
պետք է երաշխավորեն մի երրորդի թեկ-
նածությունը, ինչ որ կատարվում է Դյու
Լորիենի ու նախագահ Ռեյնոյի կողմից, ինչ-
պես հայտնի է լինում 26 հունիս 1851 թվա-
կի նամակից, եվ 2/15 հունիսի 1851 թվա-
կանին կայացած նիստում, էմինը ընդուն-
վում է իբր ընկերության անդամ, իսկ ան-
դամության դիպլոմը ուղարկվում է հունիսի
26-ին:

«Սոսիետե ադիատիկա»-ի յուրաքանչյուր
անդամի վրա պարտավորություն էր ընկե-
նում աշխատակցել իր հրատարակած հան-
դեսին, գիտական հոդվածներով և թղթակ-

ցություններով, էմինը իբր ալոպիսին, այս անգամ ուղարկում է Դյու Լորիեին իր «Հայկական այրուքներ» աշխատությունը, Հայկական այրուքների շուրջ էմինի մի շարք տեսակետներին համամիտ չի գտնվում ընկերությունը և առաջարկում է նրան վերանայել աշխատությունը, որի համար էմինը վշտանում է և վրդովված ծանր ոճով նամակ է գրում, և այս առթիվ մի շարք անձնական մեղադրանքներ է անում նաև Դյու Լորիեին, որն իր 2/15 1853 թվականի նամակում պատասխանում է «...նրանք ոչ իմ նկարագրի և ոչ էլ իմ բնավորության մեջ են մտնում։ Վստահ չեմ, որ եթե Դուք Ձեր նամակը պաշարյունությամբ կարդալու լինեք, ինքներդ էլ կհամոզվեք դրան»։

Դժբախտաբար էմինի կողմից Դյու Լորիեի գրված նամակներից և ոչ մեկի պատճենը չունենք արխիվում, Դյու Լորիեից կան առհասարակ հայագիտական հարցերի շուրջ գրված 34 ընդարձակ նամակներ, Այդ նամակներում Դյու Լորիեն գրում է և իր կատարած աշխատանքների մասին, որոնց մեջ աչքի ընկնող հրատարակություն էր լինելու «Հայկական պատմական մատենաշար»-ը, որն իր մեջ բովանդակելու էր հայ պատմիչների երկերի ֆրանսերեն թարգմանությունները, էմինն իր կողմից աշխատանք է տարել բաժանորդներ ապահովելու այդ հրատարակության և որոշ գումար էլ է ուղարկել։

Ըր վայան Դը Ֆլորիսի մահանալուց հետո Դյու Լորիեն 1862 թվականին կոչվել էր Փարիզ՝ Արևելյան լեզուների բարձրագույն դպրոցի հայերենի ամբիոնի ռուսացապետություն, Գանգատվում է Փարիզի Մուսուլման վարժարանի՝ հոգևորականներից, որոնք բոլորովին անտարբեր էին հայագիտական հարցերի շուրջ, «նույնիսկ իրենց գրքերը

վաճառելու հոգ չեն անում, հարուստ են մարդիկ և ուրիշ շատ կարևոր գործեր ունեն անելիք...», Իսկ վենետիկի համար էլ ասում է. «Ս. Ղազարի միաբաններն եթե մոռնալու են արել հայ կրոնական գրականությունը, ինստիտուտն (Լազարյան) էլ պետք է մոռնալու անի պատմական և աշխարհիկ գրականություն»։

Էմինի արխիվում կարևոր տեղ են գրավում Դյու Լորիեի նամակները, նա 13 տարի (1850—1863 թ. թ.) թղթակցել է էմինի հետ և նրա նամակները պարունակում են հետաքրքրական նյութեր՝ հայ մշակույթի պատմությանը զբաղվող բանասերների և հայագետների համար։

Օտար հայագետների մեջ, որոնց հետ թղթակցել է էմինը, կարևոր տեղ է գրավում հայտնի ֆրանսիացի պատմաբան Վիկտոր Լանգուան, էմինի արխիվում գտնվում են Լանգուայի էմինին ուղղված 24 նամակներ և վերջինիս 7 պատասխան նամակների պատճենները, Այդ նամակները ընդգրկում են 1854—1868 թվականները (Լանգուան մահացել է 1869 թվականին)։

Լանգուայի հարաբերությունը էմինի հետ, ըստ երևույթին, սկսել է հետևյալ ձևով, 1854 թվականին Մոսկվայի Լազարյան ճեմարանը իր ինստիտուտի պատվո անդամ էր ընտրել Լանգուային, Լանգուան այդ առթիվ խորհուրդ է հարցրել Դյու Լորիեից, որը լավ էր ճանաչում էմինին որպես Լազարյան ճեմարանի տեսչի և իր հայագիտական աշխատություններով հայտնի դիտնականի, էմինի հետ ծանոթանալուց հետո Լանգուան նրան էր ուղարկել իր հնագիտական աշխատությունների մի տեղեկագիրը և խնդրել այն հանձնել Ս. Ղազարյանին։

Մինչ 1861 թվականը, անցած 7—8 տարիների ընթացքում, ի՞նչ են ձեռնել էմինի և Լանգուայի հարաբերությունները, ի՞նչ աշխատանքներով իրար են կապվել, այդ մասին ոչ մի հիշատակություն կամ վավերաթուղթ չկա արխիվում, Միայն 1861 թվականի երեք նամակներից իմանում ենք, որ էմինը իր գործերից երեքը՝ Մովսես Կաղանկատվացիին, Մեծն Ներսեսը և Վարդանը ուղարկել է Լանգուային, Մինչ այդ էմինը համարվ շահած լինելով նաև իր ֆրանսի-

1 Մուսուլման վարժարանը բացվեց նախ Պատույնում, կալվածքից Սամվել Մուսուլման 125 000 սահունի կտակով, Ավստրիական կառավարության ուղղմամբ գումարներից ազատվելու համար վարժարանը փոխադրեցին Փարիզ, Մուսուլման կտակը թողել էր, որպեսզի դաստիարակվեն ազատ ընտանիքի երեխաներ, բայց վարժարանը հակառակ է անում՝ հարուստի զավակներն է ընդունում (Դյու Լորիեի 26 հունիսի 1851 թվականի էմինին ուղղված նամակից)։

րեն թարգմանություններով, հայտնի ֆրանսիական հրատարակչական տուն՝ «Ճիրմին Դիդոն»-ից հրավեր է ստանում աշխատակցելու՝ «Հայ պատմագիրների հավաքածու»-ին, որ բովանդակելու էր այն բոլոր հին պատմական նշխարները, որոնց հունարեն բնագրերը կորել էին և պահպանվել էին հայերեն թարգմանությունները։ Այս հայտնի կարևոր գործի պատրաստությունը հանձնվել էր Լանդուային։ Լանդուան անմիջապես աչքի առաք է ունենում Մկրտիչ էմինին և գրում է նրան, որպեսզի ընդունի հրավերը և առաջին առիթով ֆրանսերենի թարգմանի Փավրստոս Բյուզանդին²։ «Հայ պատմագիրների ժողովածու»-ի գործը հաջող սկզբնավորությամբ է ընթանում։ Մեկնասան էր հանդիսացել Եգիպտոսի թագավորի առաջին նախարար Նուպար փաշան։

Էմինը որոշ տատանումներով հանձն է առնում թարգմանության հրավերը, Իր փորձ ուղարկում է Փավստոս Բյուզանդացու առաջին երեք գլուխների ֆրանսերեն թարգմանությունը և ուզում է իմանալ Լանդուայի կարծիքը, 7/20 մարտ 1865 թվակիր մի նամակով, Լանդուայի պատասխան նամակը այնքան էր խանդավառել էմինին, որ Լանդուային գրած 6 գեկտեմբեր 1865 թվակիր նամակում ասում է. «մենք երկուսս էլ, մեր քննադատություններով, զոգոհությունն ենք առաջացրել հայ գիտնականների, մասնավորապես Մխիթարյանների մոտ։ Սակայն չպետք է հետ կենալ, առաջ, հանուն ճշմարտության»։

Լանդուան հետաքրքրվում է նաև հայկական ներքին խնդիրներով։ 1862 թվականի հոկտեմբերի 25-ի նամակում գրում է, որ ինքը ակնատեսներից իմացել է Ջնիթունում կատարված կոտորածների մասին, բայց ուզում է իմանալ, թե ինչ են գրում Մոսկվայի և Թիֆլիսի հայ թերթերը, Լանդուան դարձյալ հետաքրքրվում է նաև Կովկասում հարկական կյանքով, ուզում է իմանալ, թե ո՞վ է լինելու նոր կաթողիկոսը (1865 թ.)։ Նրա շահագրգռությունն այն է, թե գիտնական մե՞կը լինելու է նորընտիր կաթո-

ղիկոսը՝ թե ոչ, արպեսզի բաց արվեն էջմիածնի մատենադարանի դռները և աշխարհ իմանա, թե ինչ գանձեր պահված են հայկական ձեռագրերում։

Էմինի արխիվի օտար լեզվով վավերաթղթերի մեջ կարևոր տեղ են գրավում նաև Պետերբուրգի հայերեն և վրացերեն լեզուների ամբիոնի ուսուցչապետ և ակադեմիկոս Ֆելիքս Բրոսսի նամակները, թվով 49, որոնք ընդգրկում են 1860—1878 թվականները (Բրոսսն մահացել էր 1880 թվականին)։ Արխիվում էմինի նրան գրած ոչ մեկ նամակի պատճեն չկա։

Բրոսսի առաջին նամակից (21 ապրիլի 1860 թ.) իմացվում է, որ նա էմինի հետ վաղուց ծանոթ է եղել։ Այդ մասին է վկայում հիշյալ նամակի այն մասը, ուր Մովսես Կաղանկատվացու թարգմանությունը ստացած և չափազանց զոհ մնացած լինելը հիշելով Բրոսսն ասում է. «Անցյալ տարի երբ ձեզ տեսա, գաղափարն ունեցա ձեզ մեր Ակադեմիայի անդամ առաջադրելու, բայց հետաձգեցի, խորհելով, որ ձեր այժմու դիրքը ավելի լավն էր։ Բայց տեսնելով ձեր աշխատությունների շարունակությունը, դարձյալ ունեցա նույն գաղափարը։ Ձեր Մովսես Խորենացու թարգմանությունը իսկական ակադեմիական աշխատություն է, ...նա մենակս եմ վրացական և հայկական լեզուների համար և ցանկանում եմ, որ մասնավոր մեկը լիներ հայերեն լեզվի գրականության համար»։

Էմինի և Բրոսսի այս բարեկամական ցանկությունը երկուստեք բավականին երկար թղթակցության նյութ է դառնում։

1860 թվականին Լազարյան ճեմարանի վերատեսուչ էր նշանակվել Նիկողայոս Դավթյանցը։ Էմինը քսան տարի տեսչություն անելուց հետո վշտացած հրաժարվում է տեսչության պաշտոնից, և Բրոսսին գրած նամակում հետաքրքրվում է ակադեմիական ոռճիկի, վարձատրության ինչ և որքան լինելու հարցերով։ Բրոսսն աշխատանքի է լծվում՝ էմինին «Ակադեմիայի մեծեր»-ին ծանոթացնելու և նրա մասին նպաստավոր կարծիք ստեղծելու համար։

Մինչ այդ, Բրոսսի թելադրությամբ, էմինը թարգմանում է և լույս է ընծայում

² Այս թարգմանության ձեռագիրը մնում է Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի Գրականության թանգարանում։

վարդան Մեծի «Պատմութիւն տիեզերական»-ը, Բրոսսսն այնքան խանդավառվել էր այս թարգմանութեամբ, որ իր 25 հոկտեմբեր 1861 թվականի նամակում գրում է էմինին. «Վարդանը երկու անգամ կարդացի, գրիչը ձեռքս: Ամեն օր ես ինձ շնորհավորում եմ, որ ձեզ հանձնարարել էի նման անտիսմի պատմագիր թարգմանել: Այդ թարգմանել չէ, այլ խմբագրել, ծանոթություններով հարստացնել: Միակ ցավս այն է, որ ծանոթագրությունները փոխանակ 400 էջ անելու, արել էիր 200 էջ: Նպատակս այս աշխատությունը նոյեմբերի 1-ին ներկայացնել է «Գեմմիտֆի կոնկուրս»-ի համար և կարող եմ այժմուց սանել, որ վաստակել եք»:

Բրոսսսն էմինի աշխատություններին ծանոթացնում է Ակադեմիայի նախագահին: Տրված մանրամասնությունները լավ ընդունելություն են գտնում: Եվ վերջապես, 1862 փետրվարի 7-ին, Բրոսսսն պաշտոնապես ներկայացնում է իր առաջարկը: Ակադեմիան քվեարկում է փետրվարի 21-ին և հինգի դեմ վեց քվեով մերժում է էմինի ակադեմիկոսի թեկնածությունը: «Մեղադրվում է հայ ծնած լինելու... Հանցանքով: Բրոսսսն ամեն կերպ աշխատում է, սակայն մի շարք անսարկուսի խեղդում է իր ձայնը: «Արտաքու Ակադեմիայից մարդիկ անվանարկեցին քեզ», — գրում է Բրոսսսն էմինին, 1862 թվականի փետրվարի 22-ին:

Բրոսսսն գրում է էմինին. «Վարդանի ընդհանուր պատմության անալիզը, որ այնքան անկողմնակալ է եղած, վեր է հանել արժանիքները, երանի թե կարելիություն լիներ և ցարին ներկայացվեր, առանց Ակադեմիայից անցնելը, օրինակ Գելիանովի և արքունիքի նախարարի միջոցով»:

1865 թվականին փոխվում է Ակադեմիայի նախագահը: Ադմիրալ Լիտկին ընտրվում է նախագահ: Բրոսսսն մի նոր փորձ է մտածում: Հանձնարարում է էմինին, որ իր անունը ներկայացնի ակադեմիայի նախագահության, մի բարձրաստիճան անձնավորություն միջոցով և իր աշխատությունների մի

հավաքածուն ուղարկել ակադեմիայի նախագահին: Այս առթիվ Բրոսսսն հանձնարարում է էմինին թարգմանել Ասողիկը և ներկայացնել ակադեմիային և փափաղ հայտնել, որ տպագրվի ակադեմիայի ծախսով: Բրոսսսն հավատացած է, որ մեծ ընդունելություն գտնելու է: Բրոսսսն շարունակ տանջվել է էմինի ձախողությամբ և այդ արտահայտել է իր յուրաքանչյուր նամակում: «Խղճիս վրա մի ծանր բեռ է և մահը միայն կարող է դարձանել... Հակամարտեց ձեր կրած դժբախտությունը ոչ կարելի էր նախատեսել և ոչ էլ կանխագուշակել... Ձեզնից ավելի ես եմ տառապում ձեր ձախողման համար, և ծերությունս մեջ այդ լինելու է իմ ամենամեծ վիշտը»:

Բրոսսսն հիացող է եղել էմինի ներսես կամբարոնացու թարգմանության առթիվ գրում է էմինին. «այդ քո տաղանդի վկայականն է»: Աշխատել է միշտ էմինի ակադեմիկոս դառնալը հաջողացնել, սակայն դժբախտաբար ցավը սրտին մեռավ 1880 թվականին:

ԺԹ դարի 50-ական թվականներին սկսվել հայագիտական մեծ շարժում կար Ռուսաստանում, Ֆրանսիայում, Բելգիայում, Գերմանիայում: Էմինը առհասարակ իր ժամանակի բոլոր հայտնի հայագետների հետ թղթակցել է հայագիտական հարցերի, հայ պատմիչների թարգմանության և հայ մշակույթի վերաբերյալ հարցերի մասին: Նա թղթակցել է նաև Բելգիայի Լուվեն քաղաքի համալսարանի ուսուցչապետ Ֆելիքս Նեի հետ (չորս նամակ) 1856—1860 թվականներին, Մյունխենի համալսարանի ուսուցչապետ դոկտ. Նոյմանի հետ (երկու նամակ) (1853—1854 թ. թ.), Հատ ու կենտ նամակներ կան նաև Ժյուլ Մոհլից, Եվարիստ Պրուտհոմից, Ադոլֆ Պիկտեից, Ռեյնոյից, Էմիլ Տեդայից, Զորը Ուիլյամդից, Ֆ. Մյուլլերից, դոկտ. Պաուլ Միլլերդեբերից, Զ. Պետերմանից, պրոֆ. Կարլերից, Լեգեր-Լից, Մալան Ս. Կ-ից և այլն:

Էմինը ծնվել էր 1815 թվականին Նոր-Ջուդայում և գաղթել էր իր ընտանիքով Հնդկաստան: 1829 թվականին, հաղիվ 14—15 տարեկան էմինը մենակ, երկար և վտանգավոր ճամփորդությունից հետո հասել և հաստատվել էր Ռուսաստանում: Առաջիկա-

³ Ֆեոդոր Պետրովիչ Լիտկին (1797—1882), հայտնի ծովային, խուզարկու ճանապարհորդ և աշխարհագրագետ, որ բացի բազմաթիվ ճանապարհորդություններից, կատարել է նաև Կամչատկայի շրջանը:

յում լուրեր հասնելով Կալկաթա, իր դարձիկներին՝ Արզարներից ստանում է 5—6 նամակ։ Այդ տարին էմինը հրատարակել էր շարականների ֆրանսերեն թարգմանությունը, որից ուղարկում է Մեյրի Արզարին։ Պատարագամատույցը թարգմանում են անդլերեն, հվրոպական նոտաներով գրում են եղանակները, և որովհետև հայերեն հասկացողները հետզհետե պակասում էին և եկեղեցում ոչինչ չէին հասկանում, ուղում են անգլերեն լեզվով երգել։

Էմինի արխիվում կան նամակներ ուղղված իր կնոջ՝ Ալեքսանդրային, ինչպես նաև Ս. Գոնչարովին և Ստադլերին։ Ս. Գոնչարովի նամակները, թվով 15, ընդգրկում են 1847—1848 տարիները, երբ Ալեքսանդրա Շուլզինը տակավին չէր ամուսնացած էմինի հետ։ Ստադլերը, էմինը, Գոնչարովը եղել են համալսարանի ընկերներ, և ինչպես երևում է՝ օրիորդ Ալեքսանդրա Շուլզինի հետ էլ մոտիկ հարաբերություն են ունեցել։ Էմինը 1838 թվականին շրջանավարտ էր եղել համալսարանից, որով Գոնչարովի նամակների թվականից կարելի է հետևել, որ ուղիղ տաս տարի հետո տակավին բանկամներ են եղել։

Էմինի մտերիմ ընկեր Ստադլերից էլ կան ինը նամակներ, Ալեքսանդրային ուղղված, երեքը՝ երբ տակավին օրիորդ Շուլզին չէր, իսկ վեցը՝ երբ տիկին էմին էր դարձել։ Ստադլերը, բացի քարեկամ լինելուց, ֆրանսերենի ուսուցիչն էր եղել Ալեքսանդրայի։ Ստադլերի Ֆրանսիայից գրված նամակները

կրում են 1851—1866 թվականները։ Ստադլերի 1851 մարտ 22 թվակիր նամակի բովանդակությունից այնպես է թվում, որ օրիորդ Շուլզինը իր բարեկամի օժանդակությամբ գիմել էր, ամուսնանալու համար էմինի հետ։ Եվ շատ շանցած ամուսնացած լինելու են, որ 27 սեպտեմբեր 1851 թվակիր նամակով, Ստադլեր իր «ուշացած» շնորհավորություններն է ուղարկում⁴։

Մկրտիչ էմինը որևէ քաղաքական հանգամանք կրող գործունեություն ունեցել է, իր օտար լեզվով վավերաթղթերում ոչինչ չկա այս բանը հաստատող, բացի մի թղթի կտորից (անգլիական արդյունաբերություն), որի վրա վալելադիր գրվել է. «Ջինվորական տեղեկություններ հարավ-արևմտյան Պարսկաստանի մասին — ստրատեգիական նկատողություններ հնդկական կառավարության», իսկ այս գրության վրա շեղակի գրված է, կարմիր թանաքով, «գաղտնի»։

Մկրտիչ էմինի նամակագրությունները շոշափում են, առհասարակ, հայագիտական հարցեր։ Մենք վերցրել ենք իր կենսագրության հետ կապ ունեցող նամակները, զանց առնելով շնորհավորական, տպարանի հետ կապված և այլ կարևոր բովանդակությամբ մի շարք նամակներ։

⁴ Եր. Շահադիզ, էմինի ամուսնությունը «հավանաբար 1854 թվին տեղի է ունեցել», — գրում է Մկրտիչ էմինի կենսագրության մեջ (էջ 29) և ամուսնանալու տարին էլ՝ 39—40, Միշլդե Ստադլերի նամակից որոշ է. թե 1851 թվին էր ամուսնացել, երբ 36—37 տարեկան լինելու էր։



ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԱՂՈՒԹԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ*

Հայ և ռուս ժողովուրդների միջև մշակութային կապի զարգացման գործում մեծ դեր խաղաց պետերբուրգյան մշակութային գաղութը, որն առաջացել է քաղաքի հիմնադրումից զրեթե անմիջապես հետո:

Պետերբուրգը կառուցվում էր շատ արագ: Տարեցտարի ուժեղանում էր նոր բնակիչների հոսանքը դեպի Պետերբուրգ: Գալիս էին բազմաթիվ օտարերկրացիներ, որոնց Պետրոս Ա-ն շնորհել էր մեծ արտոնություններ: Գալիս էին տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ՝ նկարիչներ, ճարտարապետներ, թարգմանիչներ, գիտնականներ, արհեստավորներ և առևտրականներ:

Քաղաքի հիմնադրման առաջին իսկ օրերից Պետրոս Ա-ն մեծ նշանակություն էր տալիս առևտրի և արդյունաբերության զարգացմանը: Նա հատուկ ուշադրություն առարկա էր դարձրել առևտրի և արդյունաբերության զարգացման հարցը:

Պետրոս Ա-ի հատուկ հրովարտակաները և հրամանները ցույց են տալիս, թե ինչպես նա ամեն կերպ խրախուսում էր մանավանդ հայ առևտրականների և արդյունաբերողների գործունեությունը:

ԺԸ դարի 20-ական թվականներին ուժեղացավ հայերի գաղթը դեպի Ռուսաստան: 1710 թվականին, այսինքն Պետերբուրգի հիմնադրումից յոթ տարի հետո, այնտեղ արդեն եղել է ոչ մեծ հայկական գաղութ. ստեղծվել են նաև հայկական առևտրական գործակալություններ: Շատ շուտով Պետերբուրգը դարձավ առևտրական կարևոր կենտրոն, որտեղ բազմաթիվ առևտրականներ գալիս, մնում էին որոշ ժամանակ իրենց գործերով, իսկ ոմանք նույնիսկ մշտապես բնակվում են այնտեղ: Այսպիսով առաջին հայերը Պետերբուրգում եղել են առևտրականներ, որոնց մեջ եղել են նաև իրենց ժամանակվա համար կրթված, զարգացած

մարդիկ: Այսպես, օրինակ, 1710 թվականին դեսպանատան թարգմանիչ էր մի հայ՝ Աֆանասի Պանկրատով անունով:

Անհրաժեշտ փաստական տվյալների պակասության պատճառով հնարավոր չէ այժմ գոհացուցիչ ստուգություններ անել, թե ինչ էր իրենից ներկայացնում այն ժամանակվա պետերբուրգյան հայկական գաղութը, քանի՜ հոգուց էր բաղկացած այն և կամ ի՞նչ շերտերից: Մական հայտնի է, որ այդ գաղութի գոյացման առաջին իսկ տարիներին, ժողովրդի հոգևոր կարիքների համար, Մոսկվայից գալիս էին հայ քահանաներ: 1730 թվականին Պետերբուրգում բնակություն է հաստատել Իվան Ենրիստանով հայ քահանան: Հետևաբար 30-ական թվականներին պետերբուրգում հայկական գաղութը այնքան էր մեծացել, որ անհրաժեշտություն զգացվեց ունենալու մշտական քահանա: ԺԸ դարի 30-ական թվականների վերջերին Պետերբուրգում կար հայկալեռն փողոց:

Հասարակության ո՞ր շերտերից էին կազմված հայ գաղթականները Պետերբուրգում, Քաղի առևտրականներից, բարձր խավի մարդկանցից և հոգևորականներից, քաղաքում կային նաև զինվորականներ:

1720—1750-ական թվականների փաստաթղթերի մեջ հաճախ հանդիպում ենք հայերի դիմումների, որոնցով նրանք ռուսական զինվորական ծառայության մեջ ընդունվելու խնդրանք են ներկայացնում: 1723 թվականին, մոտ 700 հայեր և վրացիներ մտան ռուսական բանակը՝ կազմելով մի քանի վաշտ: Հայկական վաշտի հրամանատարը լազար Խրիստոֆորովն էր:

ԺԸ դարի 30-ական թվականներին ռուս բանակում հանդես են գալիս առաջին հայ զինեիրալները: 1734 թվականի դեկտեմբերի 9-ին փոխ-գնդապետ լազար Խրիստոֆորովը և Իվան յուզբաշին զինվորական իրենց ծառայության և հավատարմության համար ստացան զինեիրալ-մայորի աստիճան: Լազար Խրիստոֆորովը հրամանատարն էր այն

* Փաղված Կ. Գրիգորյանի ուսերեն համեմուն աշխատությունից:

վաշտի, որը կազմվել էր հայ կամավորներից, Պետրոս Ա-ի դեպի Պարսկաստան արշավանքի ժամանակ, 1760 թվականին սենատոր որոշում հրատարակեց վրացիներին և հայերին ուսաց բանակը ընդունելու մասին, Հայկական վաշտի մի մասը, դիսավորացես սպաներ, մնացին Պետերբուրգում, ուսաց զորքերի մեջ. նրանց համար նշանակվել էր ռոճիկ և պարզեատրումների հատուկ հրաման: Շատ հավանական է, որ այդ սպաներից ոմանք մնալուն բնակություն հաստատեցին Պետերբուրգում:

Դեռևս 1714 թվականին Մինաս վարդապետի՝ Իսրայել Օրու ակտիվ օգնականներից մեկի կանցլեր բարոն Շաֆիրովի անունով գրած վեց խնդրանքներից մեկը վերաբերում էր Պետերբուրգում հայկական եկեղեցի շինելու թույլտվությանը: 1740 թվականին, Պետերբուրգի առաջին հայ բնակիչներից Լուկա Շիրվանովը, թույլտվություն ստացավ իր սեփական տան հողամասում և իր միջոցներով կառուցելու հայկական մի մատուռ:

Հայկական այլ գաղութների՝ Աստրախանի, Ղրիմի, Մոսկվայի հետ համեմատած, Պետերբուրգի գաղութը բազմամարդ չէր: Նույնիսկ ԺԸ դարի 80-ական թվականներին Պետերբուրգում մշտական բնակություն հաստատած հայերի թիվը 150-ից չի անցնում: Պատահաբար Պետերբուրգում լինում էին, բացի առևտրականներից, նաև տարբեր զբաղմունքի տեր հայեր: Օրինակ, 1741 թվականին, պարսկական դեսպանության հետ Պետերբուրգ եկած էին փիղ վարող երկու հայեր՝ Իվանովը և Կոնստանտինովը: Ռուսական աղյուսներում այսպես են գրանցված նրանց ազգանունները, բայց նշված է, որ նրանք հայ են, որովհետև այն ժամանակ քոլոր օտարազգի անուն-ազգանունները թարգմանվում էին ուսերենի, նամանավանդ խոնարհ դասի մարդկանց անունները:

Լուկա Շիրվանովը առաջին հայերից մեկն էր Պետերբուրգում: Նրա եղբայր Կարապետը, որը փաստաթղթերի մեջ անվանվում է Իվան Կարապետով, ռուսական դիպլոմատ էր Պարսկաստանում: Փաստաթղթերում խոսվում է նրա ջանասիրության և ուսաց թագավորին նվիրվածության մասին: Ուրիշ փաստաթղթերում Իվան-Կարապետի անունը հիշվում է իրեն առևտրականի նա ապրել և գործել է Իսրայել Օրու ժամանակ: Պետրոս Մեծի կողմից նա ուղարկվել էր նաև Ղարաբաղ՝ տեղի գինված ուժերը միավորելու համար: Նա 30-ական թվականներին մահացավ: Նրա անձնական հայերեն նամակագրությունը հանձնված էր իր եղբորը, որը դասավորեց այդ նամակները և ծանո-

թություն գրեց նրանց մասին ուսերեն: Հետևաբար Լուկա Շիրվանովը եղել է գրագետ, իմացել է հայերեն և ուսաստան: Նա խոշոր արդյունաբերող էր: Ռուսաստան եկավ ԺԸ դարի սկզբին: Առաջ ապրել է Աստրախանում, հետո տեղափոխվել Պետերբուրգ և օգտվելով 1709 թվականի մարտի 8-ի հրամանից, որի համաձայն հայ առևտրականներին թույլատրվում էր ուղած նւթով գնալ արտասահման, ընդմիջաբնակեց Պետերբուրգում, որտեղ նա մետաքսա, կիսամետաքսա և բամբակյա գործվածքների, բարձր որակի ապրանքների առևտրական լայն գործունեություն է ծավալում, ֆարրիկաներ է կառուցում, զբաղվում է շերամապահության մաստրատիկայով և Ղարաբաղում, ցանում է սորոշինյան կորեկ և 1741 թվականին նրան թույլատրվում է առևտրական նավեր կառուցել Պետերբուրգում, Իվան Կարապետի անունը հիշատակված է բազմաթիվ փաստաթղթերում և գրեթե բոլորի մեջ նա անվանվում է օսանկապետերություն հայո: Պետերբուրգում, Վասիլյան կղզի կոչված թաղամասում նա ունեցել է սեփական խեցարաշեն տուն: Նրա հետ միասին Պետերբուրգում բնակություն հաստատեցին նաև ուրիշ հայ առևտրականներ: Եվ եթե Իվանի ունեւանք այն հանգամանքը, որ այդ առևտրականները շարունակ ճանապարհորդում էին և շփվում տարբեր երկրներում ապրող բազմաթիվ իրենց հայրենակիցների հետ, նրանցից շատերը գրագետ, կրթված մարդիկ էին, ապա պարզ կլինի նրանց դերը, որպես հայերի և Ռուսաստանի միջև ավելի սերտ մշակութային կապեր հաստատողների և միջնորդների:

ԺԸ դարի երկրորդ կեսին Ռուսաստանի կյանքում տեղի ունեցան կարևոր քաղաքական իրադարձություններ, որոնք չէին կարող չանդրադառնալ նաև հայերի ճակատագրի վրա: Ռուս-թուրքական պատերազմը 1768—1774 թվականներին, ուս զորքերի մուտքը Վրաստան, ռուսական քաղաքականության հետաքրքրության ուժեղացումը Կովկասի նկատմամբ, այս ամենը բարենպաստ պայմաններ ստեղծեցին հայ և ռուս մշակութային կապերի զարգացման: Այդ ժամանակաշրջանում ուսաց պլանների մեջ Հայաստանին հատկացվում էր առանձնապես հատուկ տեղ: Հայ բնակչությունը զետեղված էր գլխավորապես պատմական Հայաստանի հողամասում, թեև հայերը ապրում էին նաև Վրաստանում և Անդրկովկասյան բոլոր խառնություններում: Օժանդակելով հայերի ազատագրական շարժումներին, Եկատերինա կայսրուհու կառավարությունը մտադրություն ուներ վերականգնելու հայոց պետությունը, մի բան, որ յիույի համապատասխանում էր

ռուսական արևելյան քաղաքականությունը: Ռուսաստանը ձգտում էր ստեղծել մի նոր քրիստոնեական պետություն, որը Վրաստանի հետ միասին ընդունակ լիներ ամրապնդելու ռուսաց տիրապետությունը Արևելքում: Ստեղծված պատմական պայմանները լսկազանց բարենպաստ էին այդ քաղաքականության իրագործման համար: Այդ ժամանակ ոչ միայն հայ մելիքներն ու հոգևորականությունը, այլ նախ և առաջ հայ ժողովրդի լայն զանգվածները ուսաների մեջ էին տեսնում պարսկական և թուրքական լծից իրենց ազատարարներին:

Հայ ժողովրդի հետ հարաբերությունների հարցում Եկատերինա Բ-ը հետևում էր Պետրոս Ա-ի հայացքներին: Ինքը զգալի քայլեր արեց հայ գաղութներ ստեղծելու գործում: Թագուհու գործնական աջակցությամբ Ժ. Դարում կառուցվում են հայկական քաղաքներ՝ Նախիջևանը Գոն գետի վրա, Գրիգորիփոպոլը, անում են հայ գաղութները ռուսական խոշորագույն կենտրոններում՝ Մոսկվայում, Նաև Աստրախանում, Ղզլարում, Մոզդոկում, Գերբենտում, Ղրիմում: Եկատերինա Բ-ը հայերին շնորհում է իրավունքներ և արտոնություններ, որոնք հաստատվում են ռեզիդենտի հրովարտականներով: Նա հրամայում է բոլոր միջոցները ձեռք առնել, բարելավելու համար եկվոր հայերի կյանքի պայմանները, սերպեսզի ոչ միայն բոլոր հայերը, — գրում էր Թագուհին, — որոնք անցած են մեր սահմանները, պահպանվեն, այլ որպեսզի արտասահմանում ապրող հայերը տեսնելով նրանց բարեկեցությունը՝ միանան նրանց:

Հայ գաղթականության հոսանքը դեպի ռուսաց գավառները բավականին երկար է տևում: Ուժեղ թափով այդ հոսանքը սկսվել էր 1723 թվականից և շարունակվում էր մինչև Արևելյան Հայաստանի Ռուսաստանի միացումը, այսինքն ավելի քան մեկ դար: Գաղթականությունը ավելի լայն լսփերի հասավ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, 1826—1828 թվականներին:

Պետրոս Ա-ի, իսկ հետո Նաև Եկատերինա Բ-ի պլաններում Հայաստանը կարևոր տեղ էր գրավում, որպես Ռուսաստանի՝ Արևելքի հետ հարաբերությունների ճանապարհին կանգնած երկիր: ՇՀայկական հարցը-ի նկատմամբ հետաքրքրությունը, հատկապես Ժ. Դարի վերջերին, ամբողջովին պայմանավորված էր Ռուսաստանի արտաքին քաղաքականությամբ: Եկատերինա Բ-ը մեծ հույսեր էր կապում հայերի հետ, Պատմական Հայաստանի վերականգնումով, նոր քրիստոնեական պետություն ստեղծելու իր փորձը հաջողությամբ պսակվեց: Ի. Լ. Լադարևի

կողքին, պետերբուրգյան հայկական գաղութի ամենանշանավոր և գործունյա անդամներից մեկն էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղուսյանը (Նրկանաբագուկ): Արղուսյանը որոշ ժամանակ ապրել է Աստրախանում: Նրա աջակցությամբ Ղրիմից հայերը տեղափոխվեցին Նախիջևան: Նրա եռուն գործունեությունը սկսվում է 1782 թվականից, երբ ինքը մասնակցում է Վրաստանի՝ Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու համար վարվող բանակցություններին: 1787 թվականին ռուսաց զորքերի հետ նա եղավ Թուրքիայում: Մասնակցել է նաև 1796 թվականի պարսկական արշավին: 70-ական թվականներից Արղուսյանը գտնվել է Պետերբուրգում որպես ոչ միայն հոգևորական, այլ միաժամանակ հայ ժողովրդի քաղաքական ներկայացուցիչ: 1773 թվականից նա եղել է Ռուսաստանում ապրող հայերի առաջնորդ, իսկ 1800 թվականին նա ընտրվում է Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս: Նրա դերը շատ մեծ էր Եկատերինա Բ-ի գահակալության տարիներին, երբ ռուս քաղաքականությունը մշակում էր հայոց պետության վերականգնման պլանները, մի հարց, որ էական մասն էր կազմում ռուսական արևելյան քաղաքականության: Արղուսյանը արտակարգ ընդունակությունների տեր մարդ էր, մի բան, որ նրան հնարավորություն էր տալիս արագ բարձրանալու և նշանավոր դիրք գրավելու: Նա իր ժամանակի զարգացած մարդկանցից էր, հրաշալիորեն տիրապետում էր ռուսաց լեզվին, ինչ որ անպայման նպաստում էր նրա ժողովրդականությանը: Նրա ռուսաց լեզվի իմացությունը մասին կարելի է դատել ՇՀայոց Եկեղեցվո թրիստոնեական հավատի գաղափարները: զրքի ռուսերեն թարգմանությունը կցված առաջաբանից, որտեղ ինքը շարադրում է հայ ժողովրդի ծագման մասին ավանդական և պատմական աղբյուրները, քաղելով հայ հին պատմիչների ստեղծագործություններից:

1779 թվականին Արղուսյանը ծանոթացել է Գրիգոր Խալդարյանի հետ, որը եկել էր Ռուսաստան խոշորից, ուր ապրել էր 10 տարի: Խալդարյանը նոր-ջուղայեցի էր, որոշ ժամանակ առևտուր էր անում Հնդկաստանի հետ և հարստություն կուտակեց: Դեռևս խոշորագույն եղած ժամանակ նա մտածում էր հայկական տպարան հիմնելու մասին՝ նպատակ ունենալով իր հայրենակիցների մեջ լուսավորության տարածումը: Մեծ դժվարություններ հաղթահարելով, վերջապես Խալդարյանը հասնում է իր նպատակին: Նրա պատվերով, Հոլանդիայում ապագա տպարանի համար պատրաստվեցին հայկական

տառերը՝ ինը տարբեր շրիֆտներով, 1779 թվականին հալդարյանը տեղափոխվեց Պետերբուրգ, որտեղ մի քանի տարի անց, 1783 թվականին, հիմնեց հայկական տպարան, իր այդ կարևոր մշակութային արժեքներ կայացնող մեծ ձեռնարկում հալդարյանը գտավ այնպիսի ուժեղ և զործույն հովանավորողի, ինչպիսին էր Արղուիսյանը՝ Թոթախտարար երկար կյանք չունեցավ պետերբուրգյան հայկական առաջին տպարանը, նյութական ոչ բավարար հիմքը, գործավարության առանձնակի դժվարությունները, պարտքերի դումարի աճը շուտով ծանր վիճակի հասցրին տպարանը, 1788 թվականին վախճանվեց հալդարյանը, Արղուիսյանը տպարանը տեղափոխեց նախ նախիջևան, հետո Աստրախան, իր գոյության հինգ տարիների ընթացքում պետերբուրգյան հայկական տպարանը լույս է բնծայել մի քանի գիրք, գերազանցապես կրոնական բովանդակությամբ, նշանակալից գրքերից հանդիսացավ ներսես Շնորհալու ստեղծագործությունների նոր հրատարակությունը՝ հեղինակի հրաշալի գիմանկարներով, Այդ գիրքը հրատարակվել էր 1788 թվականի մայիսի 1-ին՝ հեղինակի առաջաբանով և վերջաբանով, որտեղ մանրամասն պատմվում է հալդարյանի տպարանի և Արղուիսյանի հրատարակչական գործունեության մասին:

Երկրորդ գիրքը, որի մասին պետք է հիշատակել, Ե դարի հայ նշանավոր պատմիչ Եղիշեի «Վարդանանց պատերազմի պատմություն» գրքի նոր հրատարակությունն էր՝ Քաջե Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ Երեցի պատկերներով, Վերջաբանից պարզվում է, որ այդ գրքի հրատարակությանը ձեռնարկված էր դեռևս հալդարյանի օրոք, սակայն գիրքը լույս տեսավ նրա մահից հետո միայն:

ԺԸ դարի վերջում ուժեղացավ ոռոսաց լեզվի նկատմամբ հետաքրքրությունը, կարևոր է նշել, թե ի՞նչ միջոցներով և ի՞նչ ճանապարհներով իրագործվում էր ոռոսական մշակույթի ներթափանցումը հայ միջավայրի մեջ:

Հայկական ձեռագրերի հարուստ պահուստում՝ Մատենադարանում պահպանվել են ԺԸ դարի հայ անհայտ առևտրականների նոթատետրերը, որտեղ կան ոչ միայն առևտրա-

կան գործունեություն արտահայտող գրություններ, այլ նաև այնպիսիները, որոնք մեզ իրավունք են տալիս դատելու հեղինակների հոգևոր իմացական հետաքրքրությունների մասին:

Հայ առևտրականների նոթերը կրկնակի բնույթ ունեն: Մի դեպքում նրանց աղբյուրը հանդիսանում է կենդանի, խոսակցական լեզուն և ժողովրդական բանավոր ստեղծագործությունը, մյուս դեպքում՝ գրքերի տեքստերի, նոթատետրերի մեզ հետաքրքրող բաժնում գտնում ենք ոռոսերեն սեղմ նոթեր Ռուսաստանի պատմության վերաբերյալ Ռյուրիկից մինչև Նկատերինա Բ-ը, ոռոսական ասացվածքներ և ոռուսաց լեզվի վարժություններ, ոռուսական առանձին, սիրային երգեր, ԺԸ դարում բավականին տարածված էր հայկական տառերով ոռուսական տեքստեր գրելու և սովորելու եղանակը, նույն մեթոդը օգտագործում էր նաև Գրիգոր հալդարյանը՝ Պետերբուրգում հրատարակված առաջին հայ-ռուսերեն բառարանի հեղինակը, հալդարյանի բառարանի հրատարակությունը 1783 թվականին՝ հայերի մոտ ոռուսաց լեզվի նկատմամբ աճող հետաքրքրության մասին է վկայում: Բառարանի մեջ զետեղված հնչույթները և կես հազար բառ, Գրքի վերջում տեղադրված է ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթքի հայերեն տեքստը և նրա ոռուսերեն թարգմանությունը: Իր ժամանակի համար հալդարյանի բառարանը մշակութային մեծ նշանակություն ունեցող երևույթ էր: Բառարանը վկայում է նաև հեղինակի անձնական բնորոշակությունների մասին: հալդարյանը մեծ դժվարություններ է հաղթահարել և համեմատաբար կարճ ժամանակաշրջանում տիրապետել ոռուսաց լեզվին:

Նույն տպարանում և 1788 նույն թվականին տպված «Այբբենարան, բառարան և բարոյախոսական որոշ օրենքների իմացություն» բանալիս կոչված իր գրքում կլեպատրա Սաֆարովան առաջ է քաշում ազգի մեծ և հետաքրքիր հարցեր ոռուսերեն լեզուն սովորել ցանկացողների համար: Պատմարան լեռն այս հեղինակին անվանել է «արևելահայ առաջին կին գրողը»:

(Շաբուռնակյի)

զիօք և այլն ցուցական դերանունները Գլխավոր նախագահության մեջ Հարաբերության հակադրության շնորհիվ մասերի միջև երկկողմանի կապակցություն է ստեղծվում, որի պատճառով մտքի կապը բարդ նախադասության բաղադրիչ մասերի միջև դառնում է ավելի սերտ և անմիջական:

Այնպես... որպես կապակցության դեպքում գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է երկրորդական նախադասությամբ նկարագրված գործողության համեմատ, նրա ձևով կամ նրա նմանությունով: Այդ նշանակում է, որ գլխավոր նախադասության գործողությունը ուղիղ Հարաբերում է երկրորդական նախադասության գործողության ձևին, առաջինի գործողությունը իսկ և իսկ տեղի է տանում երկրորդականի նշած գործողության ձևով:

Մտքի Մոդսն և Ահարոն առաջի Փարաունի. և արարի նայելու, որպես պատուիրանաց նոցա Տէր (Եղ. է 10):

Չիք ինչ որ այնպես գայտցուցանել զԱստուած, և ի ցասումն ամէն, և պատժապարտ մեծաց տանջանաց անէն, որպէս և յորժամ անէին որ սուրբ անուն յորջորջիցէ, թէպէս և յամենայն մեղաց սուրբ իցէ, պարտի զանձն ի մեղաւորաց կողմանէ հաշուել: (Մեքե-բիանեսի ճառք Ա—ԺԵ, Վենետիկ, 1830, էջ 60):

...որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ (Յովհ. Ժ 50):

Ինչպես կարելի է դիտել, վերոբերյալ օրինակներում երկրորդական նախադասությունները բացահայտում են գլխավոր նախադասության գործողության ձևը՝ առանց իմաստային այլ հրանգ ավելացնելու: Սակայն այս միևնույն կապակցությամբ կառուցվում են նաև բարդ նախադասության այնպիսի տիպեր, որոնց երկրորդական մասերը, ձևի պարագայի շարահյուսական հիմնական ֆունկցիան կատարելով հանգեցրած, ունեն նաև հովանավորում են նրան: Երկրորդական նախադասությունը նկարագրում է գլխավոր նախադասության գործողության ձևը՝ համեմատելով տարբեր առարկաների հատկանիշները միմյանց հետ:

Ո՞ր ոք այնպէս յարբեցութենէ լինի խնկազար որպէս յարծաթիւրութենէ (Ոսկ. հատ. Ա էջ 413):

...որպէս վատի եղեգն ի կայծականց հրոյ, այնպէս այրանցին ի բորբոքեալ բոցոյ: (Նսալի Ծ 23):

Որպէս ժողովի որսման և ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս (Մատթ. Ժ 40):

Նման կառուցվածք ունեցող բարդ նախադասություններում գլխավոր և երկրորդական մասերի փոխհարաբերությունը, շարահյուսության առումով, համեմատաբար ազատ է, այսինքն՝ երկրորդական նախադասությունը կարող է լինել առաջադաս և հետադաս, համեմատի՝

...որպէս հաշի մօմ առաջի հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւոր յերծաղ Սատուոյ: (Սաղմ. Կէ 8):

Այնպէս, ասէ, ուրախ լինիցին փրկեալն քո, որպէս որք ուրախ լինին ի հունձս, որք զպտուղս իւրեանց վաստակոցն ժողովն, կամ իրեն որք զստարն բաժանն (Մեքեբիանես, էջ 40):

Գրաբարում շատ տարածված են բարդ նախադասության այն տիպերը, որոնց գլխավոր և երկրորդական մասերը կազմվում են ռաբլետ... Նայելու... կապակցությամբ: Նայելու հարաբերյալի առկայությունը գլխավոր նախադասության կազմում մասնանշում է վերջինիս գործողության ձևը՝ երկրորդական նախադասությունը նկարագրված գործողության ճշգրիտ նմանությամբ ու նույնությամբ, ընդգծում է գլխավոր նախադասության գործողության կատարումը՝ նրան զուգահեռ երկրորդական նախադասությամբ բացահայտվող գործողությանը ուղղակի համապատասխանող ձևով:

Եւ խաղասցէ խօսանն վկայութեան և բանակ Ղևտացոցն ի մէջ բանակացն, որպէս բանակեացին՝ Նայելու լուսնացին, իւրացանչիւր զհետ միմեանց ըստ պետութեան: (Թիւր. Բ 17):

Սնւ եթէ խնդեսցէ որ զքնկէր իւր, որպէս արարն՝ Նայելու արասցի նմա. քնկումն ընդ քնկման, ակն ընդ ակն, ատամն ընդ ատամն, որպէս առնիցէ որ զխնդութիւն, Նայելու հատուցի նմա: (Ղևտ. իդ 18—20):

«Այլ զայս որպէս և լսել ոք կամիցի, Նայելու և ընկալցի» (Քրոնիկոն, մաս Ա, էջ 82—83):

Պետք է նկատել, որ նման կառուցվածքի ստորադասական նախադասությունների գլխավոր և երկրորդական մասերը իրենց փոխհարաբերությամբ, շարահյուսության տեսանկյունից, կայուն դիրքում են հանդիսանալիս: Երկրորդական նախադասությունը միշտ նախորդում է գլխավորին և երբեք հետադաս չի կարող լինել, այս հանգամանքը այդ տիպի բարդ նախադասությունների կառուցվածքային կարևոր առանձնահատկություններից մեկն է հանդիսանում:

...որպէս դու կարծես թէ այն ինչ մեզ հակառակ ինչ իցէ, Նայելու և մեք ասեմք թէ այն քեզ հակառակ է: (Ոսկ. հատ. Ա, էջ 420):

Սնւ եւսէ ցնտա Սեմիսոն. Որպէս արարին ընդ իս, Նայելու արարի ընդ նոսա: (Դատաւորք ԺԵ 11):

...որպէս էի ընդ Մոզսիսի, Նայելու եղէք և ընդ քեզ: (Յեսու Ա 5):

Ձևի պարագա երկրորդական նախադասություն պարունակող բարդ նախադասությունները կարող են կազմվել նաև որպէս... այսպէս... որպէս... այդպէս, որպէս... օրնպէս կապակցություններով, որոնք գործողության շատ քիչ հաճախականություն ունեն, սակայն արտահայտում են շարահյուսական միևնույն հարաբերությունները, ինչ որպէս... այնպէս կապակցությամբ կառուցված բարդ նախադասությունները:

Որպէս խառնեցաւ ի կարգ սուրբ ամուսնութեան աշխարհիս, այսպէս լեմուտ ընդ մարմնաւոր պիտոյիք ամենայն պապականացու իրաց աշխարհիս (Նիդշի, էջ 102):

Սնւ նա ասէ. Այդպէս եղիցի որպէս ասացէրք (Մեռնոք Խ 10):

Միթէ որպէս նայն հճար, սա այնպէս վիրատունացի, կամ որպէս նայն սպան, այնպէս աստանկեցի» (Նսալի Իէ 7):

Նայնպէս և ի թագաւորին Պապայ ձեռն արկանէր. երդնոյր և ասէր՝ թէ կեցից և մեռայց ի վերայ քո որպէս նախնիքն իմ ի վերայ նախնեացն քոց, որպէս

և հայրն իմ ի վերայ հորն քո Արշակայ, սոյնպէս և ես ի վերայ քո, բայց միայն շարադասացն ունին մի գնիցեալ (Ռիւք. 291):

Սակայն բացառված չեն նաև այնպիսի կազմութիւններ, որոնց ղեկավար և երկրորդական նախագահութիւնները կառուցվում են «այլպիսի... օրպէս, ետեւիսի... օրպէս» կապակցութիւններով, որոնց կիրառութեան շրջանակները խիստ սահմանափակ են:

«Ուրիշն արգասիքն ոչ ետեւիսի մնացին՝ օրպէս և էինն, այլ զի ի լաւն դարձնաւ՝ լաւք ենք երենցսին» (Եղեկ 22):

Ինչպես կարելի է նկատել մեքերոված փաստերից, շարահյուսական իմաստի անսակնօրէն նման կառուցվածքի բարդ նախադասութիւնները ունեւում չեն տարբերվում «օրպէս... այնպէս» կապակցութեամբ կազմոված ստորադասական բարդ նախադասութիւններից, որոնց մանրամասն քննվել են վերևում:

ՁՈՐ ՕՐԻՆԱԿ.— Դասական հայերենի շարահյուսական համակարգին բնորոշ է նաև երկրորդական նախադասութիւնների այն տիպը, որը միանում է զխաղաղ նախադասութիւնը զօր օրինակ բառակապակցութեամբ, կատարելով շարահյուսական նույն պաշտօնը, ինչ օրպէս հարաբերականը, բառային իմաստով էլ հոմանիշ լինելով նրան (այնպիսիքն արարում նրա համարժեքն է ինչպէս հարաբերականը): Այդ կառուցվածքի երկրորդական նախադասութիւնները ընդհանրապէս չեն ունենում հարաբերյալ զխաղաղ նախադասութեան կազմում: Ենթադասութեան տեսակնօրէն ոչնչացում է այն հանդամանքը, որ հարաբերյալ չլինելու դեպքում երկրորդական նախադասութիւնը, իրեն կանոն, հետագայ դիրք է ունենում. այսպէս՝

«...և կտտորեաց զնա սրով սուսերի և զամենայն շնչաւոր ի նմա, և ոչ մնաց ի նմա և ոչ մի ապրնալ և փայտանական. և արար ընդ Թագաւորն նորա՝ զօր օրինակ արար ընդ Թագաւորն Երիցովի» (Ցեսու Ժ 29):

«Կապել զմամփսն ելաք, և առնել ընդ նա զօր օրինակ արար ընդ մեզ» (Դատարեք ԺԺ 10):

«Եւ զամենայն զհարպն կորզեցէ՛ զօր օրինակ կորգիցի ճարպ յողմակիզէ փրկութեանն» (Դևտ. Դ 31):

Սակայն զօր օրինակ բառակապակցութեամբ միացող երկրորդական նախադասութիւններին զխաղաղութեամբ կարող են համապատասխանել նաև այլպէս, ետեւելու և այլն հարաբերյալներ, որոնց առկայութեան պատճառով երկրորդական նախադասութիւններն ընդհանրապէս զրգում են առաջադաս. այսպէս՝

«Զօր օրինակ զնայ ծառայ իմ Եսայի մէրկ և բոկ, այլպէս զերիս ամա եղիցին նշանք և արուստան Ծղիպաացոյցը և եթովպացոյց» (Եսայի Ի 3):

«... Զօր օրինակ արար զուարակին մեզաց. ետեւելու արասցէ և նմա» (Դևտ. Դ 20):

ՈՐՊԷՍ ԶԻ.— Կրարարում կազմվում են նաև այնպիսի բարդ նախադասութիւններ, որոնց երկրորդական մասերը զրիսավորին միանում են օրպէս զի բարդ շաղկապով: Սակայն նման կառուցվածքի դեպքում օրպէս զի շաղկապին ղեկավար նախադասութեան մեջ, իրեն կանոն, անպայման համապատասխանում է հարաբերյալը, որի շնորհիվ էլ իրեն նպատակի պա-

րագա կիրառվող երկրորդական նախադասութիւնը կատարում է այս դեպքում ձեռն պարագայի հիմնական շարահյուսական պաշտօնը, մնալով դրան, երկրորդական նախադասութիւնը, այնուամենայնիվ, «մտնում է իննում նաև նպատակի իմաստային երանգով»:

«Այնպէս խոսեցարութք և այնպէս արարէր, օրպէս զի ազատութեան օրինորն իջէր զատկոց» (Փարզ 5տկոյրայ Բ 32):

«Եւ ետեւելու Առանձար և զունդն որ ընդ նմա՝ այնպէս շնորհեցաւ նմա յնստութայ, օրպէս զի տեսնէր արանակն Պարսից, և զհօր վերապահ բնաւ մեղով անկնալ՝ զբաղումս հանէին ընդ սուր, և զայս փախըստականս արարեալ արկանէին ի զօրն Պարսից» (Փարզ. 60):

«Թալէտ և ունիցի ոք ինչս և ստացումս քաղումս՝ վարեցէ զնոսա այնպէս, օրպէս զի յետ սակաւ Խնձամանակի լցանելոց է» (Ոսկ. Մեկնութիւն Սուրբ Աւետարանի, էջ 55):

ՈՐՊԷՍ ԹԷ.— Այս բարդ շաղկապով միացող երկրորդական նախադասութիւնները նույնպէս կառուցվում են երկակի կապակցութեամբ՝ պարտադիր կերպով հարաբերյալի առկայութեամբ հանգերձ ղեկավար նախադասութեան մեջ. ըստ որում երկրորդական նախադասութեան ձեռն պարագա լինելու հանգամանքը ամբողջովին կախված է այդ հարաբերյալի առկայութիւնից: Տվյալ դեպքում երկրորդական նախադասութիւնը միաժամանակ արտահայտում է շարահյուսական այնպիսի զուգահեռ իմաստ, ըստ որի նրանով ստիպւած հաղորդումը երկրայական բնույթ է կրում: ղեկավար նախադասութեան զործողութեան ձեռն տեղի է ունենում երկրորդական նախադասութեան զործողութիւնը կարծեցյալ նմանութեամբ կամ համապատասխանութեամբ: Այդ նշանակում է, որ ղեկավար նախադասութեան զործողութեան ձեռն զրանքովում է՝ նրան զուգահեռ մի այլ ոչ-իրական զործողութիւն նկարագրելու միջոցով:

«...այնպէս պնդով ազանին [հանգերձս], օրպէս թէ հանգերձն ընդ մարմինն կարեալ իցէ» (Ոսկ. հատ. Ա էջ 68—9):

«...այնպէս Թուէր՝ օրպէս թէ շնորհակա արարեալ նմա զործեցին զայն» (Ոսկ. Մեկնութիւն Սուրբ Աւետարանի, էջ 175):

«Այդ զի ոչ կարգայ, և զընթերցումն այնպէս առնէ անսայթար, օրպէս թէ գրոցն» (Փարզ. 201):

ԶԻ.— Կիրառութեան մեծ հանաքականութիւն ունեն զի շաղկապով միացող երկրորդական նախադասութիւնները իրեն ձեռն պարագա, որոնց ղեկավարում անպայման, իրեն կանոն, համապատասխանում է այնպէս հարաբերյալը, ինչ իրար, նման տիպի երկրորդական նախադասութիւնները կարող են ձեռն պարագայի շարահյուսական դեր կատարել միայն այն դեպքում, երբ ղեկավար նախադասութեան մեջ առկա է ձեռն պարագայի անվանական (անկան) պաշտօնով հանգան եկող հարաբերյալը, որը չուրի լինելով նշանակական կոնկրետ իմաստից, իր ձեռն բովանդակութիւնը ստանում է երկրորդական նախադասութեան շնորհիվ: Բացի այդ, եթէ հարաբերյալը վերջինս զբխաղաղ նախադասութեան բառային կազմից, զի շաղ-

կապով միացող երկրորդական նախադասությունները անմիջապես կարտահայտեն պատճառաբանի կամ նպատակային հարաբերությունները: Համեմատի՛ր՝

1. «... շնորհից այնպիսի հանգանակն է նմա, զի մեծամեծ նշանն է բժշկությունն առնելը հիսուն դար, ուր դեպ լինէր, զմուրաբիւնն դարձնուցանէր» (Քիւղ. 113):

2. «... շնորհից հանգանակն է նմա, զի մեծամեծ նշանն է բժշկությունն առնելը հիսուն դար»:

3. «Եւ այնպէս քանայ ստատեալ, զի զամենայն ոք ի բարւոյս ակնկալութենէ վրիպեցուցէ, և ի սեռտի յայս կապիցէ» (Նզն. 76):

4. «Եւ քանայ ստատեալ՝ զի զամենայն ոք ի բարւոյս ակնկալութենէ վրիպեցուցէ»:

Ինչպես կարելի է վերաբերել շարք բարդ ստորագրուական նախադասությունների պարզ համեմատություններից նկատել, 2-րդ համարով ցույց տրված երկրորդական նախադասությունը, չունենալով գլխավորում համապատասխան հարաբերությամբ, զրկվել է 1-ին համարում իր կատարած ձևի պարագայի շարահյուսական պաշտոնից և հանդես է եկել սակայն պատճառական հարաբերությամբ, իբրև պատճառի պարագա, իսկ 6-րդ համարով բերված երկրորդական նախադասությունը, չունենալով գլխավորում համապատասխան հարաբերությամբ, զրկվել է 3-րդ համարում իր կատարած ձևի պարագայի շարահյուսական պաշտոնից և հանդես է եկել իբրև նպատակի պարագա: Ամփոփելով հետևում է այն, որ զի շաղկապով միացող երկրորդական նախադասությունների ձևի պարագայի շարահյուսական ֆունկցիայով հանդես գալը պայմանավորված է գլխավորում համապատասխան հարաբերության առկայությամբ:

Նման կառուցվածքի երկրորդական նախադասությունները, իրենց կատարած հիմնական շարահյուսական պաշտոնի հետ մեկտեղ, իբրև առանձին իմաստային ներբանը, գրանցում են նաև նպատակային հարաբերություն: Այդ դեպքում երկրորդական նախադասության ստորագրվելը, իբրև կանոն, լինում է 1-ին կամ 2-րդ ապառնի բայականությամբ, հենց այս վերջին հանգամանքն է, որ օժտում է երկրորդական նախադասությունը նպատակի շարահյուսական իմաստի երանգով:

«Այս րիւս րիւսուց կուտընի, և հազարս հազարաց, զի այնպէս տեսաւ հրաման ի թագաւորէն, զի ամենեկն քրիստոնեայ անուռ ի սահմանս նորա մի գտցի» (Քիւղ. 197):

«... Այնպէս ընթացարանք զի ճոտանիցէն» (Թաղթառ Կորնթացիս Ա, Թ 24):

«Ձայս ասելով՝ ահի սպառնալեացն կամեցաւ ի հաւատս ձգել զնա, և այնպէս հաւանեցուցանել՝ զի մի անհարկն իրսն վտիցի» (Ոսկ. Մեկնութիւն Սուրբ Աւետարանի, էջ 243):

Զի շաղկապով միացող երկրորդական նախադասությունները բնորոշ մի առանձնահատկություն էլ այն է, որ նրանք, որպես կանոն, շարահյուսական մեկ օրինալագություն ունեն. այդ այն է, որ նրանք երբեք առաջդաս չեն լինում, այլ հանդես են գալիս միշտ հետագաս դիրքում: Համեմատի՛ր՝

«Այլ Աստուած այնպէս պատուել զմարդն կամեցաւ, զի տա լատրեանցն խնամուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն պարզեանց նմա.. (Նզն. 30):

«... այնպէս ճակով հասուցին օտարիչքս անօրէնութեանն զՀազարաւոյս ի վերայ Հայաց, զի և տուր միով յառաջ ժամանեցին խոյս տալ ի քաղաքէն և անին ճաղով, և ոչ ինքն կարողիկոսն Յոնան» (Փարպ. 145):

«... այնպէս արքեպիսկոպոս էր խնամել, զի զամենեցուն տէրն ընդ երեսուն տրծարոյ վաճառեաց» (Ոսկ. հատ. Ա, էջ 413):

Եթէ, Թէ. — Այս շաղկապներով միացող երկրորդական նախադասությունները հանդիսանում են շարահյուսական հոմանիշ զի շաղկապով միացող երկրորդական նախադասությունների և օժտված են քերականական նույն հատկանիշներով, ինչ վերջիններս: Հետևաբար կրկնությունից խուսափելու համար այստեղ շնք շարադրի այն առանձնահատկությունները, որնք բնորոշ են ինչպես եթէ, Թէ շաղկապներով, այնպես էլ զի շաղկապով միացող երկրորդական նախադասություններին: Միայն ավելացնենք, որ այդ երկու տիպերի միջև եղած տարբերությունը սպառնում է միայն կիրառության հանձնակալության միջոցով: Այլ կերպ ասած՝ եթէ և Թէ շաղկապով միացող երկրորդական նախադասությունների դորժածությունը շատ հազվադեպ է, քան զի շաղկապով կառուցվող երկրորդական նախադասությունները:

«... այնպէս պարս է իմանալ, եթէ Հոգին Սուրբ ջրովն գրէ զբարեբարութիւնն» (Սնտ. 53):

«... նմա այնպէս թուեցաւ, եթէ զայն շար ինչ կամացն հենեկս Ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռնալս, վասն թշնամութեանն՝ զոր օռնէր ընդ նմա» (Քիւղ. 345):

«Եւ ի տալ Ջրուտեայ զքարամանսն ճրմիզդ և օրհնել զնա, մատուցեալ Արհմենի առաջի Ջրուտեայ՝ ասէ ցնա, ոչ այնպէս փոփոցեմ» Բէ ք յերկուց որդոցն իմաց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից» (Նզն. 30):

«Պարզեա զձեռս մի ընդ երկինս, այլ յաղթատացն ձեռս, եթէ յաղթատսն ձգցին, այնպէս համարեցիք Բէ յերկինցն կատարս հասուցեր» (Ոսկ. հատ. Ա էջ 177):

ՈՐ — Երբեք հատկան հոմանիշի արժեքով հանդէս է գալիս նաև որ շաղկապով միացող երկրորդական նախադասությունների այն տարատեսակը, որը գործածություն չառնում է, որ տալիս անդամ շարք օժի, քան նախորդը: Սակայն ուշադրում է, որ նման կառուցվածքի երկրորդական նախադասությունները հետագայում կիրառության լայն ծավալ չովանելով, դառնում են տվյալ կառուցվածքի համարյա թե միակ տիրապետող տիպը:

«Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչև զհարց և զհաւուց և զիւր տարաւ և զզարդս կանանց ևս եղ ի վերայ և ետ և տաճեցաւ, և ոչ կարաց հաւուցանել զպարտան արքունի» (Նզն. էջ 139):

«Ո՛վ ո՞նց կայցի Բայբելն թշուառական, որ կամուսնացնա՞նք գործ գործիցէ. և անձամբ դանձն ծանակ առնիցէ...» (Ոսկ. Հատ. Բ էջ 504).

ինչև.— Գրաբարում ունենք ինչ հարաբերական քա-
ռով միացող երկրորդական նախադասություններ,
որոնք գլխավոր նախադասության գործողության
նկատմամբ շանդան են ցույց տալիս շարահյուսական եր-
կանի հարաբերությամբ. որտեղ խառնված են աղբյու-
րանդրի և ձևի պարզագույն շարահյուսական պաշտոն-
ները, Ուլդի խնդրի պաշտոնը կատարելու պատեմ-
քով ինչ հարաբերականը իր վրա ստացել է զ նախ-
դիրը իրեն որոշյալ հայցական, սակայն ամբողջ հա-
ղորդման նկատմամբ երկրորդական նախադասու-
թյունը գերադասեցական արտահայտում է ձևի պարա-
դայի պաշտոնը:

«Ահաւաստիկ դուստր իմ կոյս, և հարճ նորա, հանից
զնոսա արտաքս, և լկկեցէք զնոսա, և արաւէք ընդ
նոսա զինչ հաճոյ է յաշս ձեր» (Դատաւորք ԺԲ 24)։

ՁԲԲ.— Երկրորդական նախադասությունները գլխավորին կարող են միանալ նաև որ հարաբերականի որոշյալով (այսինքն՝ գ. հայցականով կազմված = զորք), օրին գլխավոր նախադասություն մեջ պարտադիր կերպով համապատասխանում է այնպիսի հարաբերւյալը: Այս տիպի երկրորդական նախադասությունները նույնպես շատ տարածված լին: Մարդաստեղյան տնտեսիտից նրանք սովորաբար առաջադաս են լինում:

«Եւ ասէ Սիրա ցարգայ. Ըստ ամենայնի զոր հրա-
ման ես տէր իմ արգայ ծառայի իւրում, այնպէս
արտասէ ծառայ քո» (Բ Բարդ. Բ 11):

ԻՐԱՆ. — Այս շաղկապով միացող երկրորդական նախադասությունները ցույց են տալիս գլխավոր նախադասության գործողության մեջ՝ նրանից առաջացած միասնականելի, շնթադրվող գործողությունը նկարագրելու միջոցով։ Այդ նշանակում է, որ երկրորդական նախադասությունները օժտված է հետադարձ շարահյուսական իմաստի նրանցով, նման կառուցվածքի բարդ նախադասություններում գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխհարաբերությունը, լարադասությունն առումով, ընդհանրապես կայուն է. երկրորդական նախադասությունը սովորաբար հետադաս դիրքում է ինտոմ։

* «Կողոպտեցին հանին և սչ ինչ զոր ընդ իւրն ունէր. ալնպէս ծաղեցին աղքատութեամբ, մինչ հասցմուրա- նալին և բերէին նմա իւր ծառայքն» (Եղիշէ, էջ 139):

ՄԻՆՁՈՒ.— Գրաբարը կազմում է նահ այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնք զլխավորին կապվում են մինչև շաղկապով։ Այդ կառուցվածքի երկ-
րորդական նախադասությունները արտահայտում են
շարահյուսական այնպիսի իմաստ, ըստ որի նրանք
խտացած, ընդգծված կերպով նկարագրում են գլխա-
վոր նախադասության մեկից առաջացած մի գործողու-
թյուն, որն անհավասելի, անհավանական է թվում է
տրամաբանորեն չպետք է բխեր գլխավորի գործողու-
թյունից։ Այդ պատճառով երկրորդական նախադասու-
թյան բովանդակությունը հակադրվում է միացած բա-
լոր հավանական մտքերի, որոնք լռելյայն ենթադրա-

ստեփոսնեբր, կատարելով հանդերձ իրենց հիմնա-
կան շարահյուսական ֆունկցիան (ձեի պարագայի
պաշտոնը), զրահորով են հետևանքի իմաստասերն
ներքերանց Այս ախիի նորոգարական նախադասություն-
ների շարահյուսականը կայուն է, նրանք հանդես են
գալիս միշտ հետևապես դիտորով:

«Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօնն սրբո-
թեան, մինչև ոմանք ի դառն զահհանք մեծապէս ցաղց-
րութիւն անկանէր ընդ լսելիս նոցա» (Նիզիշ, էջ 136) :
«Եւ այնպէս միշտմովս եղեալ ճանգագանաց օրինա-
պատրաստանք, մինչև քնաւ արարածք իւրեանց քնակո-
թեանն զերթանել» (Կորին, էջ 34) :

Մենք բերված օրինակներում հերքողական նախադասությունները վերաբերում են գլխավոր նախադասության ստորոգյալին՝ նկարագրելով նրա գործողության ձևը, նրանից առաջացած մի այլ գործողության ցույց տալու միջոցով։ Մասկայն պատահում են նաև այնպիսի բարդ նախադասություններ, որոնց հերքողական մասերը վերաբերում են ոչ թե գլխավոր նախադասության ստորոգյալին, այլ մականյով արտահայտված ձևի պարագային։

«Եւ այնպէս Հնչեալ զգերութիւնն համարելո, մինչեւ պարծելլ նա ի կապանա զգերութեանն» (ՍԵՂՎ, 28)։

Ուշագրաւ է, որ վկայված օրինակում նրկորդական նախադասութիւնն ստորոգյալը արտահայտված է անորոշ դերացալով, եւստի և այն դերքայական նախադասութիւն է, որի դիմային, ժամանակային և նդանակային հարաբերութիւնները կարող են ըմբռնելլ ըստ գրից, թվալ զպիտում՝ զխնայվոր նախադասութիւնն ստորոգյալից, որն արտահայտված է դիմաւոր ձեռով։

Քննորձ է, որ նման դնպցերում բարդ նախադասութիւնն ժամանրից վիալն վնկը (Թովորաքար նրկորդական նախադասութիւնը) կարող է դժբայական նախադասութիւնն լինելլ, իսկ մնալը նեպայման պնեւ է դիմաւոր քալով ստորոգյալ աննեպ։

Մինչ ԶԻ. — Երկրորդական նախադասությունները կարող են գլխավորին միանալ նաև միեւ զմ քառյ շաղկապով։ Նման կառուցվածքներում երկրորդական նախադասությունը, բացահայտելով հանդերձ գլխավոր նախադասության զործողության ձևը, նկարագրում է նրանից առաջացած նույնիսկ այնպիսի զործողությունը, որը նախապատկի, անհավանական քննարկ է կրում։ Նա իր անհավանականությունը հակադրվում է նաեւ որոշոր հավանական, ապառքի, ենթադրվող զործողություններին, որոնք լռելիայն ընկալվում են։ Այսպես նույնպես առկա է հետեւանքի շարահյուսական իմաստ։ Գլխավոր են երկրորդական նախադասություններին փոխհարաբերությունը, շարահյուսության առումով. համեմատաբար կայուն է. երկրորդականը սովորաբար հետադարձ է ինչպեւ գլխավորին։

«Այնպիսի արժանի հասարակութեան հղև Ոնհախմոս,
մինչ զի այնպիսի իրք հասարակին նման (նոյն,
հասարակ է 648)։

ՀԻՐՐՆԻ ԹԷ, ՀԻՐՐՈՒ ԹԷ.— Զեկ պարագայի շարա-
հյուսանկան պաշտոնով հանդես են գալիս նաեւ այն
հիդրոգրական նախագաղտնաթյուները, որոնք զվեստվո-
րեն կապովում են իրի քէ, իբրեւ քէ շարահայեւնով,
որոնք ոչխարան են նախագաղտնաթյան մեք, իբրեւ կանոն,

անպայման համապատասխանում է այնպիսի հարաբերությամբ, Սակայն այդ բարդ շաղկապներով միացած երկրորդական նախադասությունները, ձևի պարագայի նրանց շարահյուսական հիմնական իմաստին զուգահեռ, առաջացրել են երկրայական երանգ՝ Այդ նշանակում է, որ գլխավոր նախադասության գործողության ձևը գրանցվում է՝ նրան զուգահեռ մի այլ ուղիղական գործողություն նկարագրելու միջոցով:

«Այնպես պարտ և պատշաճ է պատրաստել միայնակեցացն իբրեւ քէ վաղիւն մեռանիւն, և այնպէս պարտ է վարել զմարմին» իբրու քէ բազում ժամանակս ընդ նմա կալոց իցէ: (Նազր Պանտեղի, Վարք և մասնանագրութիւնք, Վենետիկ, 1907 թ., էջ 35):

ԻՐՐՈՒ ԶԻ.— Համաձայն շարահյուսական հարաբերությունն են նշում այն երկրորդական նախադասությունները, որոնք գլխավորին կապվում են իբրու զի շաղկապով, և ունեն նույն առանձնահատկությունները, ինչ նախորդ տիպի երկրորդական նախադասությունները:

«...այնպէս մարդասէր է: իբրու զի վասն փրկութեան մարդոյ որ ինչ վայել են բանք պատուի նորա՝ վասն այնորիկ արհամարհէ դայն» (Ոսկ. հատ. Բ էջ 801):



Այսպիսով, առավել ձևի պարագայի երկրորդական նախադասությունների ընդհանուր նկարագիրը, հանդում ենք սա եզրակացության. դասական հայերենը մինչև մատենագրությանը հաստատվելը արդեն մշակված, հզկված, ճշիւ ու ճկուն լեզու է եղել, զարերի ընթացքում հարահույզ գործածությամբ կոկկված ու կատարելագործված, ընդունակ լինելով ամենատարբեր վերացական գաղափարներ, բարդ ու նրբին մտքեր արտահայտելու: Նա իր շարահյուսական համակարգում ստեղծել է ցերականական այնպիսի միջոցներ, առանց որոնց ոչ մի քաղաքակրթված ու զարգացած լեզու չի կարող գոյություն ունենալ, Այդ փաստը, իր հերթին, նշանակում է, որ դասական հայերենը ոչ թե արհեստական ու չեղելի շրջների վրա թրթռացող կենդանի, պերճ ու շքեղ մի լեզու, որով մարմնավորվել և դարերին է հանձնվել հայ ժողովրդի հոգեկան և իմացական հանճարը:






Մ Ա Յ Ր Դ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

2. ԴԱՎԹՅԱՆ

(Ավագ թիւի ինքստ)

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳՐԷԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ



այերը պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք առաջինը ձեռնամուխ եղան տպագրության գործին։ Ընդամենը մի քանի տասնամյակ էր անցել տպագրության գյուտը Եվրոպայում տարածում գտնելու օրից, երբ 1512 թվին վենետիկում լույս տեսավ առաջին հայերեն տպագիր գիրքը՝ «Պարզայտումար»-ը։ Զարմանում, միաժամանակ երախտագիտության զգացումով ենք համակվում այն մտքի մշակների նկատմամբ, որ միայն լսած լինելով նոր գյուտի մասին, իրենց իսկ պատրաստած թղթի վրա, 1641 թվին հեռավոր Նոր-Ջուղայում հրատարակեցին մեծածավալ «Հարանց վարք»-ը։ Տպագրության արվեստով հիացք էր պատճառում 1666—68 թվականներին Ամստերդամում առաջին անգամ տպագրված մեծագիր «Աստուածաշունչ»-ը։ Այդ հարյուրամյակի վերջին տարիներում լույս ընծայվեց Մովսես Փերթոդահոբ «Պատմութիւն հայոց» աշխատությունը, որը հայ ժողովրդի ընթերցանության ամենատարածված գրքերից մեկը դարձավ, իսկ օտարագիր գիտնականների համար՝ արժեքավոր մի նորութուն։ Նույն թվերին լույս տեսած հայերեն առաջին քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյց»-ը, հետագայում աշխարհի գիտնականների ու աշխարհագրագետների կողմից ճանաչվեց իրեն իր ժամանակի հրատարակված լավագույն քարտեզներից մեկը։ Հայկական տպագրությունը լի է մեկը մյուսից նշանակալից նման պատմություններով, իսկ որքա՛ն հարուստ և ուսանելի է այն հրատարակիչների գործունեությունը, որոնք օտարության մեջ, հալածանքների ու զրկանք-

ների զնով միշտ վառ պահեցին հայ դպրության ջահը։

Տպագրության զարգացման, մեր ժողովրդի հոգևոր կյանքի, նրա մշակութի մասին, օակայն, դժվար է պատկերացում կազմել առանց ունենալու հայ տպագիր գրքի ամբողջական ցուցակը՝ մատենագիտությունը։ Հայ գրականության մեջ արդեն կա երկու նմանօրինակ աշխատություն, որոնք թեև չեն կարող բավարարել այսօրվա պահանջներին, բայց մեծապես կօգնեն նոր մատենագիտություն ստեղծելու գործին։ Դրանցից մեկը Հ. Գարեգին Զարբանալյանի «Հայկական մատենագիտություն», աշխատությունն է, հրատարակված 1888 թվին։

Զխոսելով այն սխալների ու բացթողումների մասին, որոնք անխուսափելի էին այդ աշխատության համար՝ իրեն առաջին մատենագիտության, պետք է նշել, որ նյութերի դասավորման, գրքերի նկարագրման մեջ եւս բազմաթիվ սխալներ կան։ Զարբանալյանը նյութերը դասավորել է հեղինակների, վերնագրերի, երբեմն էլ թեմաների այբբենակալի կարգով։ Միասնական սկզբունք չլինելու պատճառով շատ հաճախ ընթերցողը չի կարողանում գտնել ցանկացած գիրքը կամ հեղինակին։ Օրինակ, «Պատմութիւն հայոց» ընթերցողը չի հանդիպում «Պոռշյան» ազգանվանը, մինչդեռ «Հ» և «Շ» տառերի շարքում հանդիպում ենք «Հ»-ի խնդիր» և «Շահեն» վեպերի նկարագրությանը, իսկ «Սոս և Վարդիթեր»-ի մասին հիշատակություն անգամ չկա։ Զարբանալյանը չունի ոչ մի հղիչ՝ գրքի վերնագրից դեպի հեղինակ կամ ընդհանրապես

տիտղոսաթերթը, բովանդակությունը, հիշատակարանը, ինչպես նաև այն արժեքավոր ձեռագիր նշումները, որ սերունդները թողել են այս կամ այն հնատիպ գրքի վրա: Կրթիկն նաև քննադատականներ գրքերի մասին, հրատարակության պատմությունը և այլն: Այս տվյալները անկասկած կարող են շատ արժեքավոր աղբյուրներ հանդիսանալ հայկական տպագրության զարգացումը ուսումնասիրելիս, տարրեր գիտությունների պատմությունը գրելիս և, հայ ժողովրդի լիակատար պատմությունը ստեղծելիս, ինչպես կարծում էր մեծ հրապարակախոս-լուսավորիչ Մ. Նալբանդյանը անցյալ դարի 60-ական թվականներին (եզնտիր էրկերո, 1953 թ., էջ 300):

Թե որքան ծանր ու դժվարին է հայ տպագիր գրքի լիակատար մատենագիտություն ստեղծելը, պատմում է դեռևս Հ. Ն. Ղազիկյանը իր վերահիշյալ գրքի առաջաբանում: Այժմ ավելի քան դժվարացել է այդ գործը: Ղազիկյանի մատենագիտությունը լույս

տեսնելուց հետո աշխարհի զանազան ծայրերում տասնյակ հազարավոր հայերեն նոր գրքեր են տպագրվել: Այստեղից էլ պարզ է, թե ինչպիսի հայրենասիրական գործ արած կլինեն, և որքան շատ բանով մեզ կարող են օգնել արտասահմանի հայ գաղութների գրադարանների, գրատների աշխատողները, վենետիկի ու վիեննայի Միաբանությունները, Երուսաղեմի և Անթիլիասի վանքերը, հայ մշակույթի հետ առնչություն ունեցող մեր բոլոր հայրենակիցները և հայրենակցական մշակութային կազմակերպությունները:

Հայ տպագիր գրքի մատենագիտության հրատարակման գործը կարևոր նշանակություն ունեցող մի նախաձեռնություն է, որի իրականացումն հնարավոր է մեր ժամանակներում, երբ հայ ժողովրդի մեծամասնությունը և նրա դարավոր մշակույթի գերակշռող մասը կենտրոնացած են իրենց Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԲԵԼԳԻԱԶԱՅ ՊՐ. ՎԱՅՐԱՄ ՆԱԿՈՐՑԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԲՐԹՈՒԱՆԵԼԻ 1958 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՍՋԳԱՅԻՆ ՑՈՒՑԱԶԱՆԴԵՍՈՒՄ
ՎԱՏԻԿԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑ ՊՐ. ՊՈԼ ՇԵՅՄԱՆՍԻՆ*

Ս. ԱՔՈՒՌԻ ՆԱԽԿԻՆ ՄԻՆԻՍՏՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՄԻՍԱՐ ՊՐ. ՊՈԼ ՇԵՅՄԱՆՍԻՆ

Օգոստոսի 14-ին, մեծ լսարանի պերճափայլ հանդիսականներին ներկայացնելով նորին Գերազանցություն կարդինալ Աղաջանյանին, Դուք հիշեցրիք, թե անվանի մեծավորը, Կիլիկիայի պատրիարք, իր վրա էր առել իր երկրի առաջալի՝ Գրիգոր Լուսավորչի անունը:

Նորին Գերազանցության անվան ընտրության մասին այս ակնարկությունը թողեց այն տպավորությունը, թե կարդինալը ներկայացնում էր Հայաստանի Ս. Գրիգոր Լուսավորչի Եկեղեցին՝ Կաթողիկ Առաքելական և Հոռոմեական Եկեղեցու ծոցում:

Այս տպավորությունը բնականաբար սխալ է, ծանոթ պատմական եղելությունների և ներկա իրականության հանդեպ: Հակամասից ստեղծված շփոթությունը իհարկե ցավալի է: Իմ պարտականությունն էմ համարում ցրել այդ շփոթը Ձեր մտքում:

*Առանձին հանույրով և զոհուկությամբ ենք հրատարակում այդ, Վահրամ Հակոբյանի այս գեղեցիկ նամակը, որպես շատ սրտառուլ մի բողոք եբայոր անոնց դեմ, որոնք, զգտվելով իրենց շրջապատի քրիստոնեան, իրենք իրենց կուզեն վերագրել ինչ որ կպատկանի հայ ժողովուրդին: Պր. Վահրամ Հակոբյանի նամակը միաժամանակ բնագրի հայ տարագիր բայց հայրենասեր և եկեղեցասեր հայության որդիական ղզացմունքների և հավատարմության մի պայծառ վկայություն է դեպի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և նրա դարավոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:— ԽՄԲ.

Ս. Գրիգոր Լուսավորիչը, սերված Գ դարի Հայաստանի թագավորության ազնվական մի ընտանիքից (257—335 թ. թ.), հիմնադիրն է այս երկրի Եկեղեցու, որ մնացել է անկախ ազգային, առանց որեւէ կապ ունենալու Հռոմի հետ:

Սկսած 300 թվականից, Հայաստանյայց Եկեղեցին հանդես է գալիս պատմության առաջ իբր քրիստոնյա մի հաստատություն՝ պաշտոնապես ճանաչված Տրդատ Գ թագավորի կողմից, որն ընդունել էր նոր հավատը և մկրտվել Ս. Գրիգորից, որ կառուցեց, թագավորի հովանավորության ներքո, առաջին եկեղեցին ճիշտ այնտեղ՝ Էջմիածնում, ուր, ըստ ավանդության, հայտնվեց աստվածային լույսը: Այս սրբավայրի հինավուրց պատերը, միշտ կանգուն և տասնյոթ անգամ դարավոր, դեռևս մեր օրերում էլ հովանավորում են Հայաստանյայց Եկեղեցու Մայր Աթոռը, որտեղ զահակալում է Ս. Գրիգորի 130-րդ հաջորդը՝ նորին Ս. Օժուրյուն Վազգեն Ա-ը, Գերագույն Հոգևոր Պետեր Հայ Ժողովրդի, որը կապված է անձատելիորեն իր Եկեղեցուն 98% համեմատությամբ:

Անհունորեն երախտագետ հայ ժողովուրդը Հայաստանյայց Եկեղեցուն տվել է հատուկ տիտղոսներ: Նա ոչ միայն իր հոգին է դրոշմել քրիստոնեական հավատի վրա, այլև կերտել է այնքան գեղեցիկ իր լեզուն և ներշնչել իր ստեղծագործ ոգին, որի ամենաքայտուն վկայություններն է հասցնում ն դարը՝ Ոսկեդարը մինչև մեր

օրերը, Հայաստանյայց Եկեղեցին, Փարոսի նման, իր ժողովրդի հետ ամրողջական հաղորդակցության մեջ, դարերի ընթացքում դիմակայել է Ասիայի և Իսլամության անընդմեջ հարձակումներին: Նախանձախնդիր պահապանը անցյալի բոլոր գանձերը, նա մարմնավորել է բոլոր ազգային իղձերը: Հայ ժողովուրդը նրան է պարտական իր լեզուն, իր մշակութիւնը և իր հրաշալի վերապրումը:

Այն հայերը, որոնք թողել են իրենց Մայրենի Եկեղեցին՝ միանալու համար Հոռոմի Եկեղեցուն (առաջին դավանափոխությունները ևրեան են գալիս Խաչակրությունների Կիլիկիայից անցքի սկզբին), հետաքրքրորեն պահպանել են իրենց հեռավոր Աղզային Եկեղեցու կարոտը... Նրանք պահել են հայ ծեսը, մշակել լեզուն՝ ստեղծելով հայ մշակութիւնի ճշմարիտ օջախներ, նպաստելով այսպես ազգային ժառանգության հարստացմանը: Վենետիկի Ս. Ղաղարի կղզում հայկական վանքը և նույն կարգի այլ հաստատություններ, օրինակներ են այս իրողության: Նորին Գերագանցություն կարգինալ Աղաշանյանը պետք է այս համայնքի, որ ներկայացնում է հայ ժողովրդի հազիւ 2% -ը:

Հայտարարելով լուելայն միանալ Ս. Գրիգոր Լուսավորչին՝ նրա անվան որդեգրումով, բայց միաժամանակ վանդիտանալ ձե-

վանալով նույն Լուսավորչի կենդանի և ներկա Եկեղեցին, անվանի մեծավորը անկասկած հակամայից ստեղծում է ցավալի մի շփոթություն Արևմուտքի ժողովուրդների մտքում և իզուր արթնացնում կենդանի մնացած դուրազագրություններ...

Նորին Գերագանցությունը թող բարեհաճի համաձայնել, որ Հայաստանյայց Եկեղեցուն է պատկանում ինքն իրեն ծագած լինելու մենաշնորհը հայտարարել Ս. Գրիգոր Լուսավորչից, իր առաքյալից և հիմնադրից, հիշտ այնպես, ինչպես Հոռոմի Եկեղեցին իրավացիորեն հայտարարում է իր ծագումը Ս. Պետրոսից: «Տուք ղկայսերն կայսեր», — ասում էր Հիսուսը:

Դուք ինձ մեծ պատիվ արեցիք, ինձնից դրավոր խնդրելով այն, ինչ որ ես կարծում եմ, թե կարող եմ անվանել մի ճշտում: Բացարձակապես իմ անձնական անունից՝ ահա ես այդ արեցի:

Խնդրում եմ բարի լինեք ընդունել, պարզհանր կոմիսար, իմ ամենարուեստ հիացմունքի հետ, Ձեր կատարած գործի համար, իմ ամենաբարձր ակնածանքի արտահայտությունը:

ՎԱՀՐԱՄ ՀԱՎՈՐԱՆ

Բրյուսել

18 սեպտեմբերի 1958 թ.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Անձի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության օրինապահ միաբանության անդամ գերաշնորհ Ս. Դերենիկ սրբազանը, խմբագրությանս ուղղած իր մի գրության մեջ, տեղեկացնում է, որ ինքը ձեռնարկել է դժվարին, բայց շնորհակալ մի աշխատանքի, այն է՝ «Պատմություն Մայրաքույն Արևելքի և Ափրիկեի հայոց» մեծածավալ ուսումնասիրության պատրաստության և հրատարակության:

Սրբազանը ձեռնարկել է գովելի և ամեն գնահատանքի և աջակցության արժանի մի աշխատանքի: Արժեքավոր և շնորհակալ այդ աշխատությունը պատրաստելիս սրբազանը կատարել է յուր ջննական պրպտումներ, հավաքել է քաղմաթիվ պատմական, մատենագրական, տեղագրական, ազգագրական տեղեկություններ, հեռավոր այդ հայ գաղութների պատմության վերաբերյալ՝ մատենագրարաններից, թանգարաններից, պե-

տական արխիվներից, գրի է առել մոտ 3000 արձանագրություններ, տապանագրություններ և հավաքել է բազմաթիվ լուսանկարներ:

«Սրագրած ենք, — գրում է սրբազանը, — նրեք ստվար հատորներով՝ Մայրաքույն Արևելքի և Ափրիկեի հայոց պատմությունը շուտով և վերջնականորեն գրի առնել և հրատարակել: Գրքին առաջին երկու հատորները Մայրաքույն Արևելքի հայոց պատմությունը պիտի ներկայացնեն, երրորդը Ափրիկեի, երեք հատորները միասին 2500 — 3000 էջ պիտի ըլլան և պիտի պարունակեն հազարի մոտ նկարներ: Այս աշխատության պիտի կցենք նաև մեզի դավանակից Մալաթար Եկեղեցվո (Հարավային Նիդկաստան) համառոտ պատմությունը:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետք շնչկաստան, Պակիստան, Բիրմա, Սինկափուր, Ինդոնեզիա, Ճապոն և Զինաս-

տան ապրող հայերեն բավական մեծ թվով
զաղթեցին Ավստրալիա, Միացյալ Նահանգ-
ներ, Անգլիա և Հոլանդա։ Պիտի խնդրեինք,
որ անոնցմե որեւէ մեկը, կամ ուրիշ որեւէ հայ
եթե որեւէ տեղեկութիւն կամ պատկեր ունի
վերահիշյալ նրկերներու մասին, թող հաճի

մեզի իմացնել սա հասցեին՝ Դերենիկ Նպիս-
կոպոս Փռլատյան, փոստարկդ 3929, Բեյ-
րութ, Լիբանան։ Մեր միակ նպատակն է
հայ բնկորներուն պատմութիւնը կորուստե
փրկելը։

ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ԲԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ ԴՈԿՏՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ

1959 թվականի մայիսի 28-ին, իյլ համալ-
սարանին կից Բերկլիի Աստվածաբանական
ճեմարանը, պաշտոնական և շքեղ հանդի-
սությամբ, տոնկտոր աստվածաբանութեան
տիտղոսն է շնորհել Կալիֆոռնիայի հայոց
առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկո-
պոս վարժապետյանին։

Տ. Բարգեն սրբազանը ամերիկահայ ա-
ռաջին եպիսկոպոսն է, որ արժանանում է
այդ տիտղոսին և պատվին։ Բարգեն սրբա-
զանը 1950 թվականին շրջանավարտ էր ե-
ղել Նույն ճեմարանից Վասակավոր աստվա-
ծաբանութեան տիտղոսով։

Սրբազանը ներկայացրել է վարդապետա-
կան մի թեզ անգլերեն լեզվով՝ «Առաքելա-

կան եկեղեցիներու պատարագամատուցմե-
րու բաղդատական ուսումնասիրութիւնը»
թեմայով։

Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրա-
պետը բարեհաճեց շնորհավորել Տ. Բարգեն
եպիսկոպոսին։

«Էջմիածին» ամսագիրը ևս, հանուն իր
ընթերցողների, սրտագինս շնորհավորում է
Բարգեն սրբազանին՝ միաժամանակ նրան
մաղթելով՝ քաջառողջութիւն, ճշգրտոր հե-
ղինակութեամբ և արդյունավոր կերպով ծա-
ռայելու համար Ս. Եկեղեցին ու Ս. Էջմիա-
ծինն, — ինչպես գեղեցկորեն գրվել է Վեհա-
փառ Հայրապետի հեռագրում։



Հ Ա Ն Գ Ի Ս Տ

**ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ
(1881—1959)**



Օգոստոսի 4-ին, երկարատև հիվանդությամբ հետո, վախճանվեց Ս. Էջմիածնի աթոռանվեր միաբան Հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1881 թվականին Էջմիածնի շրջանի Ներքին Զեյվա գյուղում, հողագործի ընտանիքում և իր նախնական կրթությունը ստացել նրանի թեմական դպրոցում։

Ուսումն ավարտելուց հետո վերադառնում է գյուղ, որտեղ զբաղվում է ուսուցչությամբ և ազատ ժամերին այգեգործությամբ, հողի մշակությամբ։

1915 թվականին ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1918 թվականին քահանա՝ նրբ-վանի առաջնորդ Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի ձեռամբ։

1918—1945 թվականներին քահանայագործում է զանազան շրջաններում, որպես պարտաճանաչ և նվիրված հոգևորական։

1946 թվականին, երեցկեց մահից հետո, դիմում Գևորգ Զ Կաթողիկոսին՝ Մայր Աթոռի միաբան դառնալու ցանկությամբ և այդ օրվանից մինչև իր մահը լինում է Մայր Աթոռի նվիրյալ և համեստ միաբաններից մեկը։

Հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետը Մայր Աթոռում կոչվում է պատասխանատու պաշտոնների և խղճի մտքը ու արդյունավետությամբ ծառայում Ս. Էջմիածնին, երկար ժամանակ նա եղել է Ս. Հռիփսիմ և Ս. Գալանե, ինչպես նաև Ս. Գեղարդա վանքերի վանահայր։

Հանգուցյալ հայր սուրբը համեստ, ազնիվ, բոլորից սիրված և հարգված միաբան էր և իր աշխատանքը տանում էր լուռ ու խաղաղ։ Նա իր ազնիվ և նվիրված աշխատանքների համար արժանացել էր ծաղկյա փիլոնի և վարդապետական լանջախաչի՝ Գևորգ Զ և Վազգեն Ա կաթողիկոսների կողմից։

Նահապետ վարդապետը սիրում էր Մայր Աթոռը, նա իր խնայողությունները թողել է Մայր Աթոռին, որպես զեպի Ս. Էջմիածնի ունեցած իր որդիական երախտագիտության վառ արտահայտությունը։

Աթոռանվեր այս ազնիվ միաբանի հիշատակը միշտ պայծառ կմնա Մայր Աթոռում։

Ամսի 6-ին, Մայր Աթոռի միաբանության, վանքի պաշտոնեության և իր հարազատների ներկայության կատարվեց հանգուցյալի թաղմանական կարգը Ս. Գալանեի վանքում, նախագահությամբ գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոսի, որը գեղեցիկ դամբանականով վեր հանեց հանգուցյալի աթոռանվեր ծառայությունը։

Հանգուցյալի աճյունը ամփոփվեց Ս. Գալանեի վանքում, Մայր Աթոռի այլ միաբանների շարքում։

«Յիշատակն արգարող օրհնութեամբ եղիցի»։

